



ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5 1891

Մ Ա Յ Ի Ս

1891 № 5

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

կրես

1 «ԱՐԱՐԱՏ»-ից	—	Մակար I Կաթողիկ. Ամեն. Հալոց:
2 ՄԱՐԻՍԵԱՆ, Մ.	551	Հեղինէ, վէպ (չարունակ.):
3 ՓԱՓԱՋԵԱՆ, Վ.	567	Բառփորի ամերում:
4 ՇԱՀԱՋԻՋԵԱՆ, ՍԱՐԱՏ.	586	Պանդախտ հողի (բանաստեղծ.):
5 ՃԱՌՃԱՌՋԻ, ԻԼԻԱ	588	Կապիտ-Աղամբանի:
6 ԹՈՒՄԱՆԵԱՆՅ, ՅՈՎՀԱՆՆԵՍ	621	Համերգ (բանաստեղծութիւն):
7 ԲԱԼԱԳԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.	622	Միկրորներ I:
8 ՄԱԳԱՍԵԱՆ, ԵՂԻՇԷ.	632	Բանաստեղծ-հրապարակախօս:
9 Լ. Ս.	646	«Ի՞նչ է կալծակը»:
10 Բ.	647	«Թշառ կղիտարէթ»:
11 Բ.	648	«Նոնցալի բերդը»:
12 Մ.	651	«Հալի հարսնացուն»:
13 ԼՈՒՍԻՆԻ	652	Ամուսնայ յրաճիկ:
14 ԽԻՐ.	671	Խմբադրաթիւան կողմից:
15 ՅԱԻԵԼԻԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.	674	Ղաբալի հալ. դպր. 5-ամեակ հաշիւը:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թ Ի Յ Լ Ի Ս

Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՅԻ ՏՊԱՐԱՆ

Типография М. Д. Ротшильда, на Гол. просп. соб. д. № 41.

1891

卷之四

四庫全書

卷之四

四庫全書

四庫全書

四庫全書

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5 1891

Մ Ա Յ Ի Ս

1891 № 5

ԵՐԲՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՈՐ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

1891

Дозволено цензурою, Тифлисъ, 4 Мая 1891 г.

Типографія М. Д. Ротиніанца, на Голов. просп. соб. д. № 41.



ՄԱԿԱՐ I ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

† 16 ապրիլի 1891 թ.

Ա. Էջմիածնի պաշտօնական «Արարատ ամսագիրը, իւր մալիս ամս-
ւադ համարում, չաչտարարում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար
Առաջնի մահը հետեւեալ կերպով.

«Ապրիլ ամսոյ 16-ին ներկայ տարւոյ, աստուծոեան եօթն և
կէս ժամին, առ Տէր փոխեցաւ Վեհափառ Արքազնատուրք Հայրա-
պետս ամենայն Հայոց Տ. Մակար եօթանասուն և ութը տարեկան
հասակում:

Կից այդ չաչտարարութեան հետ «Արարատը տալիս է հանգու-
ցեալ կաթողիկոսի կենսագրութիւնը, որից քաղում ենք հետեւեալը,
վերաբերեալ հանգուցեալի պաշտօնավարութեան մինչ Կաթողիկոս
հաստատուելը:

«Կորին Օծուխիւնը աշխարհական ժագումից էր, ծնաւ 1813 թ. ապ-
րիլի 13-ին Բուլանքի թեղում գիւղում: Մանուկ հասակում իւր
հօր հետ տեղափոխուելով Վաղարշապատ, մանում է Ս. Էջմիածնի ժառան-
գաւորաց դպրոցին:

1834 թ. ին իւր ուսման ընթացքը Մայր Աթոռու հոգևոր դպրանո-
ցում աւարտելուց չեսու, հաճութեամբ ի Տէր հանգուցեալ Յովհաննէս Բ.
Կաթողիկոսի, ստացել է հոգևոր կուշման չորրորդ աստիճան. 1838 թ. ին
ապրիլի 12-ին ձեռնադրւել է սարկաւազ. 1842 թ. ին մարտի 25-ին ձեռ-
նադրւելով վարդապետ՝ նշանակւել է Մայր Աթոռու հոգևոր դպրանոցում
աւագ-ուսուցիչ, և 1843 թ. օգոստոսի 21-ին Սինօղի օրագրութեամբ կարգ-
ւել է տեսուչ նոյն դպրանոցին: Ի Տէր հանգուցեալ Ներսէս Ե. Կաթողի-
կոսի հաճութեամբ և առաջարկութեամբ, Բարձրագոյն հաստատութեամբ
1847 թ. ապրիլի 30-ին կարգւել է անդամ Սինօղի. 1848 թ. ին, մարտի
15-ին զնացել է Պարսկաստան՝ հին ձեռնադրի զրքեր որոնելու. 1849 թ.
ստանձնել է Մայր Աթոռու մատենադարանի վերատեսչի պաշտօնը.
1852 թ. ապրիլի 12-ին, ձեռնադրութեամբ ի Տէր հանգուցեալ Ներսէս Ե.

Կաթողիկոսի, բարձրացել է լատինական ծաղրագոյն վարդապետութեան. նոյն թւի օգոստոսի 15-ին ձեռնադրուել է եպիսկոպոս, նոյն թ. նոյեմբերի 10-ին նշանակուել է Մալր Աթոռոյ վանական կոստապետութեան անդամ և ծախսարար. 1858 թ. դեկտեմբերի 15-ին Արեւիկայ նշանակուել է պատգամամուր և գնացել է Կ. Պոլիս ի Տէր հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսին հրաւիրելու Ս. Էջմիածին:

1859 թ. մարտի 10-ին ստացել է արք եպիսկոպոսութեան կոչումն և նոյն թւի յուլիսի 13-ին Արեւիկայ օրապրութեամբ նշանակուել է աւագ-լուսարար Մալր Աթոռոյս. 1861 թւի ապրիլի 2-ին ի Տէր հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսից ուղարկուել է Թիֆլիս տեղւոյն Ներսիսեան հոգեւոր դպրոցը կարգաւորելու համար. 1862 թ. օգոստոսի 9-ին ի Տէր հանգուցեալ Մատթէոս Կաթողիկոսի կոնդակով նշանակուել է Թիֆլիսի թեմի կառավարիչ և 1864 թ. մարտի 15-ի առաջարկութեան համեմատ՝ Բարձրագոյն հաստատուել է Վրաստանի և Իմերէթի Հայոց թեմի վիճակաւոր առաջնորդ. 1876 թ. փետրարի 20-ին ի Տէր հանգուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսի առաջարկութեան համեմատ արձակուելով Թիֆլիսու առաջնորդութիւնից՝ Բարձրագոյն հաստատուել է վիճակաւոր առաջնորդ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ, և ըստ առաջարկութեան ի Տէր հանգուցեալ Գէորգ Դ. Կաթողիկոսի 1883 թ. յունւարի 7-ին Բարձրագոյն հաստատուել է Արեւիկայ անդամ, իւր վերայ ունենալով նաև Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ առաջնորդական պաշտօնը: Նոյն 1883 թ. գալով Մալր Աթոռու և ստանձնելով Արեւիկայ անդամութեան և ըստ առաջարկութեան՝ Արեւիկայ Ատենապետի՝ Տեղակալի պաշտօնը՝ նոյն թւին ի կողմանէ Մալր Աթոռոյ գնացել է Մոսկա Ամենաոգորմած թագաւոր Կալսեր ԱԼԷՔՍԱՆԴՐ II-ի թագադրութեանը պատգամաւորելու: Ալեքսանտր նոյն թւի աշնանը գալով Մալր Աթոռու, վարել է Տեղակալութեան պաշտօնը, խմատութեամբ և խոհեմութեամբ նախագահելով 1884 թ. մայիսեան Կաթողիկոսական ընտրութեան ժողովներին, որից վետոյ գնացել է իւր թեմը. իսկ 1885 թւին, ապրիլեան ընտրութեան ժամանակ, ի հաստատութիւն առաջարկելեաց երկրորդը լինելով՝ յուլիսի 18-ին բարեհաճ կամօք թագաւոր Կալսեր՝ արձակուելով Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ առաջնորդութիւնից՝ Տ. Տ. Մակար հաստատուեցաւ Կաթողիկոս ամենայն Հայոց»:

Հանգուցեալ Հայրապետի զործքերից վիշաճ են հետեւեալները՝ բացումն հալ դպրոցների և կանոնադրութիւններն ու հրահանգները նոցա վերաբերմամբ. Էջմիածնի տպարանի շինութեան և պարագաների վերանորոգումը, Մալր Տաճարի մասնաւոր նորոգութիւնը և երկու ուսումնաւարտ սարկաւադներին արտատաճման ուղարկելը՝ աստուածաբանական և և ալ գիտութիւնների մէջ կատարելագործելու համար:

Հ Ե Ղ Ի Ն Է

Վ Է Պ

Տ-ին Մ. ՄԱՐԻՍԵԱՆԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

X

Միւս առաւօտ արեւը դուրս գալուց յետոյ Ամիրանովենց կառքը սլացաւ դէպի Պետտիգորսկ: Վլադիկաւկազից մի քանի վերստ հեռացած՝ Հեղինէի առաջ բացւեց հիանալի տեսարան: Հեռւում, ձախ կողմից, երևում էր պայծառ արևի ճառագայթներից ծիրանեղոն ներկւած, ձիւնապատ գագաթների մի շարք, — այդ Կովկասեան լեռնաշղթան էր Կաղբէկ ու Էլբրուս հսկաներով: Հեղինէն աչքը չէր հեռացնում այդ հիանալի պատկերից, կարծես ուզում էր անջնջելի կերպով տպաւորել այդ պատկերը իւր երևակայութեան մէջ:

Վլադիկաւկազից դուրս գալու երրորդ օրը, Ամիրանովները մօտն Պետտիգորսկ, ուր նրանք վեր եկան իշխան Շակունու մօտ: Մերունու ուրախութեանը չափ չը կար:

— Այս ինչ է, Միխայիլ Պետրովիչ, կնոջդ սոված ես պահում, ի՞նչ է: Հեղինէ ջան, ինչու ես այդպէս բարակել, տեսնողը չի ասիլ թէ առաջւան աննման զեղեցկուհին ես, բարձրաձայն բացականչում էր Շակունին, զրկելով Հեղինէին:

—Ազատեալուց յետոյ շատ տկարութիւն քաշեց, յոյս ունեմ ջրերը բոլորովին կը լաւացնեն Հեղինէին, պատասխանեց Ամիրանովը:

—Ի հարկէ, մի վախենալ, ես խօսքի համար ասացի. այստեղի ջրերը անմահական են, դու մի քանի օրից յետոյ այնպէս կը լցւես, որ կըր գնդակ կը դառնաս քո թիւիկ Գէորգի նման, քաջալերում էր իշխանը Հեղինէին:

—Հապա քեռակինն ո՞ւր է:

—Այս քանի օրս գնաց Պետերբուրգ տղերքանցը տեսութեան և երևի ամբողջ ամառը այնտեղ կը մնայ: Շնորհակալ եմ, եկաք, էլ ես մենակ չեմ, օրս հիմաջ ուրախ կը մթնի:

Ճաշից յետոյ Շահունին նրանց մենակ թողեց ու ասաց որ իւր բնակարանում տեղաւորւեն ինչպէս քէֆներն ուզում է:

—Ո՞րտեղ ջարմար կը լինի մեզ համար, Հեղինէ, վերին աստիճանի քաղցրութեամբ հարցրեց Ամիրանովը բոլոր սենեակները նայելուց յետոյ:

Ա՛յ այստեղ շատ լաւ կը լինի մեզ համար, աւելցրեց նա կանգ առնելով բաց լուսամտի առաջ, որ բացուում էր պարտէզի մէջ:

Պարտէզի թարմ ու բուրմունքներով լի օդը բաց լուսամտից լցւում էր սենեակը:

—Ի՛նչ հիանալի օդ է:

—Ես ինձ համար ընտրել եմ քեռու ննջարանի կողքի սենեակը, դուք էլ ձեզ համար ընտրէք, որը որ սրտներդ կուզի, չոր-չոր պատասխանեց Հեղինէն ու ուզում էր դուրս գալ, բայց Ամիրանովը, ամուր գրկելով նրա մէջքը, նստացրեց նրան իւր կողքին:

Ամիրանովը հարբածի նման էր: Թարմ օդի ու բնութեան գեղեցկութիւնների ազդեցութիւնն էր այդ, թէ կատարեալ անգործութեան, նա ինքն էլ չը գիտէր, միայն սաստիկ պահանջ էր զգում անպատճառ հաշտելու և մտերմանալու կնոջ հետ:

Իսկ նա բոլոր նրա գգւանքներին պատասխանում էր միայն արհամարհանքով:

—Հոգիս, մինչև երբ պէտք է այսպէս տւի:

—Յաւիտեան, վճռաբար պատասխանեց Հեղինէն, զօռով դուրս պրծնելով նորա գրկից:

—Ասա, հրեշտակս, բացատրիր ինձ թէ ինչ ես ուզում ինձա-

նից, ես ամեն բան պատրաստ եմ անել, միայն թէ դու անցեալը մոռանաս:

Եւ իսկապէս Ամիրանովը այդ ժամանակ՝ այնպիսի տրամադրութեան մէջ էր, որ պատրաստ էր ամեն տեսակ զիջումներ անել կնոջը: Նա զգում էր, որ ինքը՝ քանի գնում՝ աւելի կակղում էր:

— Նոր բացատրութիւններ մի պահանջիլ, ինչ որ պէտք էր՝ տաւը անգամ ասել — լսել ենք:

Ամիրանովը սկսեց արդարացիել իրան, բայց Հեղինէի վրայ նրա խօսքերը ազդեցութիւն չէին գործում. նա ոչինչ չէր ասում և միայն ուսերն էր թափ տալիս:

Նա այնպէս էր նայում մարդուն, որ աչքերիցը պարզ երևում էր, թէ նրա ոչ մի խօսքին չի հաւատում:

— Ախր մի լաւ մոտաժիր, Հեղինէ, այսպէս ապրել չի կարելի. այս ինչ անտանելի դրութիւն է մեր դրութիւնը, վերջացրեց խօսքը Ամիրանովը:

— Ես էլ հէնց այդ էի ասում և դրա համար առաջարկում էի, որ մենք իրարից բաժանուենք ու ջոկ ապրենք:

— Ինչու ես զուր տեղը նորից սկսում խօսել դրա մասին. դու գիտես, որ այդ անհնար բան է: Մի մոռանալ, որ մեր երեխային երկուսս էլ սիրում ենք, ոչ մէկս առանց նրան չենք կարող ապրել և ուրեմն գոնէ նրա համար պէտք է իրար հետ հաշուենք:

Վերջին խօսքերը՝ ինչպէս երևում էր՝ Հեղինէի վրայ մի քիչ ազդեցին:

Ամիրանովը նկատեց այդ:

— Ել երկար ու բարակ բացատրութիւններ չեմ տալ քեզ, շարունակեց նա նոյն յուզւած ձայնով, այսքանը միայն կ'ասեմ, որ իմ կրծքումս էլ սիրտ կայ, թէև ես սէրս խոշորացոյցով չեմ զննել, ոչ էլ դու ես արել:

Հեղինէն կծու հեղնութեամբ ծիծաղեց:

— Իրար հանգիստ թողնենք. ահա միակ խորհուրդը, որ ես կարող եմ ձեզ տալ մեր ներկայ դրութեան մէջ, իսկ ձեզ համար կին ու բարեկամ ես երբէք չեմ լինիլ:

Այդ ասաց ու դուրս եկաւ, շտապած թողնելով մարդուն:

Միւս առաւօտը Հեղինէն քնուտ հետ գնաց ման դալու: Նոր

տալաւորութիւնները նրա վրայ լաւ ներգործեցին, նա կարծես առ-
ժամանակ մոռացաւ իւր անմխիթար դրութիւնը:

—Ինչ լաւ է այստեղ, քեռի, ինչ հիանալի է: Ել գնանք,
ամեն բան ցոյց տւէք ինձ, ասում էր նա սքանչացած:

Մէկ—երկու շաբաթ, քանի որ դեռ ամեն բան նոր էր Հեղինէի
համար, քանի որ նա դբօսնելիս տեսնում էր նոր—նոր ջերմութիւններ,
նոր-նոր զեղեցիկ տեսարաններ,—նրա մէջ փոփոխութիւն էր նկատ-
ւում զէպի լաւը: Բայց այդ շատ չը տւեց. տասը—տասը հինգ օր
անցած, Հեղինէն էլի առաջւայ Հեղինէն էր,—թախիծը սրտից չէր
հեռանում:

Միևայիլ Պետրովիչն էլ իրան շատ լաւ չէր զգում: Ինչպէս
երևում էր՝ պարապութիւնը սկսում էր ձանձրացնել նրան, և նա
արդէն սկսել էր մտածել Թ-ս վերադառնալու մասին, մանաւանդ որ
կնոջ հետ հաշուելու համար դործ գրած բոլոր աշխատանքներն
զուր էին անցնում, չէին յաջողում:

—Ինչ էք երկուսդ էլ թթւել, նկատեց նրանց մի օր իշխանը,
առաւօտեան թէյի ժամանակ: Եհ, հիմիկւայ ջահէլներն էլ ինչ ջա-
հէլ են. մարդու մեղքն է դալիս վրաները նայելիս, ծերերիցն էլ
վատ են: Չահէլ՝ մեր ժամանակւայ ջահէլներն էին, կրակ էին,
կրակ է: Ինչ քէլեր, ինչ ուրախութիւն, ինչ գծութիւններ, ա՛յ
զիտի տարիներ: Մեր ժամանակւայ ջահէլների երախներում արիւն
էր խաղում, հօ ձեզ նման ձկան արիւն չունէին, օր ամբողջ օրը
նստած ածուխ խանձէին... տաքացած ասում էր իշխանը հեռզհեռէ
աւելի ողևորելով:

—Հոգս քիչ ունէին, դարդ էլ քիչ ունէին, քեռի, դրա համար
էլ կեանքը այնքան ծանր չէր թւում, ընդհատեց նորա խօսքը Հե-
ղինէն, վերցնելով ծծմօր զրկից երեխային:

—Բայի դրանից, իշխան, աչքի առաջ ունեցէք և այն, որ
լուրջ դործերով զբաղւելու սովոր մարդկանց համար, անտանելի է
հեռանալ այն տեղից, ուր մի անգամ նրանց կեանքը կարդի տակ
է ընկել, ուր նրանց օրը անց է կենում որոշեալ պարապմունքնե-
րում, աւելցրեց Ամիրանովը:

—Եհ, ձեռք վեր կալ դու էլ, Միքայէլ, ամեն բան իւր ժա-
մանակն ունի, պարապմունքի ժամանակ մարդ պէտք է պարապի,

քէֆի ժամանակ քէֆ անի, մարդս հօ սիրիրական չի, որ ամբողջ կեանքում միայն թուղթ մրտոելով զբաղւի:

—Դու ինձ լսիր, Հեղինէ ջան, ես քեզ համար մի սիրուն ձի եմ գտել: Դու հօ ձի նստել զխոսեալ Միտդ, է ես քեզ սովորեցնում էի:

—Հա, բայց նրանից յետոյ վաղուց է ես սկի ձի չեմ նստել:

—Յան չը կայ. նորից կը սովորեցնեմ: Ժամի չորսին պատրաստ կը լինես, միասին կ'երթանք ձիով ման զալու, աասց իշխանը, չիբուխը կպցրեց ու գնաց:

Հեղինէն նրա յետեիցը դուրս եկաւ սենեակից: Քնած երեխային դրեց օրօրոցը, մի գիրք վերցրեց ու գնաց պարտէզը. բայց կարդացածից բան չէր հասկանում: Նրան շրջապատող բնութեան մէջ ես եկող կեանքը ճնշում էր նրան անպէս, ինչպէս գարնանային թարմ օդը ճնշում է հիւանդի թոյլ կուրծքը: Տեսնելով չորս կողմը տիրող կենդանութիւնը, Հեղինէն մտածում էր իւր մասին, իւր կեանքի մասին, որքա՛ն չնչին և անզոյն էր այդ կեանքը. և այդ միտքը ճնշում, տանջում էր Հեղինէին:

Երկար ժամանակ այցպէս տխուր նստած էր Հեղինէն պաշարւած անմխիթար մտքերով: Յանկարծ նա սթափւեց մտածմունքներից. նա սկսեց ուշադրութեամբ լսել. տրօջկայի զանգակի ձայն էր դալիս և ձայնը հետզհետէ մօտենում էր: Նա գլխապատառ վազեց փողոցը, բայց զուր չէ՛, էլի նա չէր, որին նա սպասում էր անհամբեր:

—Այս քանի անգամ եղաւ, որ զանգակի ձայնը ինձ զուր տեղը ուրախացնում է, քանի անգամ է՝ ինձ խաբում է այդ անխժած զանգակը, բարկացած մտածում էր Հեղինէն վերադառնալով սենեակը:

—Սխ, երբ պէտք է գալ վերջապէս: Աս նրան մի ամիս կը պահեմ այտուղ, նա վերջին ժամանակները շատ դարդ քաշեց, լաւ կը լինի որ մնաց այտուղ, հանգստանայ. նրան անհրաժեշտ է հանգստանալ: Մենք միասին կը կարդանք, ման կը զանք, կը խօսենք, կը վիճենք... մի խօսքով հիանալի ժամանակ անց կը կացնենք:

Այդ մտածմունքներով զբաղւած, Հեղինէն նստեց բաց պատուհանի մօտ ու երկար ժամանակ զարճանում էր Բեշտաու սարի գեղեցիկ տեսարանով:

—Հը, սիրուն տանտիկին, ճեշ կը տաս ուտենք: Շակունու ձայնն էր:

—Ինչո՞ւ այսքան ուշացաք, քեռի:

—Գնացել էի կոմսուհու մօտ. կնոջս հին ծանօթն է, երէկ գիշեր է եկել Թ-սից: Մի քայէլը խնդրում էր, որ այս երեկոյ գնաս մօտը:

Միւս օրը Ամիրանովը կոմսից պաշտօնական թուղթ ստացաւ. պատւիրում էր ծառայութեան գործով գնալ Պետերբուրգ:

Ամիրանովը շատ ուրախացաւ ստանալով այդ պատուէրը. նա գիտէր, որ այդ պաշտօնական ջանձնարարութիւնը միայն պատրւակ է. կոմսը իսկապէս զրանով ուզում էր նրան քաղաքավարի կերպով հասկացնել, որ ուղեկցի իւր կնոջը: Միւս կողմից էլ՝ ուրախ էր Ամիրանովը այն պատճառով, որ կարծում էր թէ իւր հեռանալուց յետոյ կինը հեռզհեռէ կը մեղմանայ, կը մոռանայ անցեալը:

—Միթէ, Հեղինէ, մեր սիրելի երեխան չը պէտք է կարողանայ միացնող կապ դառնալ իմ ու քո մէջ, ասաց նա մնաս բարև անելիս՝ առնելով նրա գրկից երեխային և պինդ համբուրելով նրա թխլիկ թշերը:

Հեղինէն ոչինչ չը պատասխանեց ու լուռ նայեց մարդուն:

Մի քանի օրից յետոյ Վլադիկաւկազից եկած մի ծանօթից նա իմացաւ, որ Սահառունին շուտով գալու է: Ուրախութեանը չափ չը կար:

Նա պինդ սեղմեց կրծքին երեխային և հազիւ լսելի ձայնով ասաց:

—Հրեշտակս, կարող էի ես մտքովս անգամ անցկացնել այն ժամանակը, երբ որ առաջին անգամ՝ զգացի քեզ սրախ տակին, որ քո հօր ներկայութիւնը ինձ համար անտանելի կը լինի: Այո, շատ ցաւալի է բայց պէտք է խոստովանեմ, որ նրա հեռանալուց յետոյ ազատ եմ շունչ քաշում, կարծես մի ճնշող ծանրութիւն ընկած լինի կրծքիս վրայից:

—Ամօթ է, ամօթ, Հեղինի, մարդդ էլի կը վերադառնայ, ինչ ես դարդ անում, հօ ձեռիցդ շեն խլել: Կ'ուզես գնանք ձիով ման գալու. հրաշալի երեկոյ է, ուրախ—ուրախ ասաց Նախունին իւր կոշտ արևառ մատներով խփելով Հեղինէի թշին:

—Ինչ էք ասում, քեռի, ես դարդ չեմ անում, պատասխանեց Հեղինէն տարօրինակ կերպով ծիծաղելով:

—Լաւ, զիտեմ, դու կարի՞ճ ես, դարդ չեմ անիլ: Տղտմարդը

հօ չի կարող, հոգիս, ամբողջ տարին կնոջ կողքը կտրած նստել, տղամարդը նրա համար է ստեղծւած, որ արար աշխարհքը ոսնատակ տայ: Դէ, շուտ արա, գնա պատրաստւիր. ասում եմ ձիանքը թամբեն:

—Բայց, քեռի, չը լինի թէ իմ պատճառով էք յետ ընկնում այսօրւայ խնջոյքից:

—Էհ, ինչեր ես ասում: Դու գիտես, որ ես չեմ ուզում, չեմ սիրում. առանց դէս ու դէն քցելու գնա ու պատրաստւիր: Իմ քէֆ անելու ժամանակն անց է կացել, տեսնում ես զլիսիս սև մաղ չի մնացել:

Հեղինէն չեմ ու չում էր անում, բայց իսկապէս սաստիկ ուրախացաւ լսելով քեռու առաջարկութիւնը: Նրա հաշուով, այդ երեկոյ պէտք է դար Սահառունին:

—Որ այդպէս է, ես այս բոլորիս պատրաստ կը լինեմ:

Մի քառորդ ժամից յետոյ Նախունին ու Հեղինէն ձի նստած դուրս եկան դէպի խճուղին:

Մայր մտնող արևի աղօտ ձառագայթները լուսաւորում էին Պետրիգորսկը և նրա շրջակայքը. մարդու աչք էր հանգստանում նայելով այդ մեղմ լուսաւորութիւնը. բարձրահասակ խոտը ծփում, խաղում էր կանոնաւոր ալիքներով զով քամու ոյժից. թռչունները խումբ-խումբ թնդացնում էին օդը իրանց ուրախ ճըլճըլոցով:

Հեղինէն լուռ ու մտախոհ զւարճանում էր ընտելութեան գեղեցկութեամբ և, թէև սիրտը ուրախ—ուրախ թնդում էր, բայց էլի ուրախութեան հետ խառնւում էր դառնութիւն: Ինչպէս այն ժամանակ պարտէզում, այժմ էլ՝ տեսնելով չորս կողմի բնութեան մէջ տիրող կեանքը՝ նա աւելի սաստիկ էր զգում, թէ ինչպէս անբովանդակ կերպով է անցկացել իւր կեանքը, ինչպէս զուր են անցել իւր փալուն յոյսերը: Միւս կողմից՝ կարծես մի ներքին ձայն նրան ասում էր, թէ դեռ չը պէտք է յուսահատուել, դեռ նա կարող է բախտաւոր լինել:

Մուլթն ընկնում էր. Նախունին առաջարկում էր վերադառնալ տուն, բայց Հեղինէն խնդրում էր մի քիչ էլ շարունակել: Համարեա մութը բոլորովին ընկել էր, երբ որ Հեղինէն վերջապէս համաձայնեց յետ դառնալ տուն:

—Նա երևի այսօր չի գաց, տխուր-տխուր մտածեց նա:

Միւս առաւօտ Հեղինէն գնաց ծառաստանը (պառկ) իւր սովորական զբօսանքը անելու ու հանքային ջուրը խմելու: Բայց զբօսանքից յետոյ ծառաստանից դուրս գալով նա տուն չը վերադարձաւ, ինքն էլ չը գիտէր թէ ինչու, այլ մեքենայաբար քիչ-քիչ առաջ գնալով, դուրս եկաւ քաղաքից և այդ ժամանակ միայն նկատեց, որ ինքը արդէն խճուղու վրայ է:

Արևը սկսում էր կծել, բայց նա ոչինչ չէր զգում և յափշտակւած միայն մի զգացմունքով, որ նրան քաշում էր առաջ, նա շարունակում էր ճանապարհը գէպի առաջ ու առաջ:

Բայց ահա ինչ-որ զընգզընգոց է լսում...

Հեղինէն ցնցւեց և շնչասպառ յենեց մի ծառի:

Նրան զարմացնում էր իւր յուզմունքը և թէև նա աշխատում էր այդ բացատրել շոքի ու յոգնութեան ազդեցութեամբ, բայց ներքին ձայնը հերքում էր այդ, ասելով, որ նրան յուզողն ու վրդովողը՝ նրա սրտում ծագած նոր զգացմունքն է, և քաղցր էր թւում Հեղինէին այդ ձայնը:

Քաղցր էր թւում այդ բացատրութիւնը Հեղինէին, բայց՝ միւս կողմից՝ նա չէր ուզում հաւատալ զրան, և, կարծես ամաչելով ինքն իրանից, երկու ձեռքով ծածկեց երեսը:

Կառքի դղրոցը, որ կանգ առաւ նրա առաջ, սթափեցրեց նրան թմրութիւնից:

—Տիկին Հեղինէ, դ՛ուք էք, զարմացած ասաց Սահառունին դուրս թռչելով կառքից: Ինչպէս է եղել, որ այստեղ արենք էք հասել:

—Ձեզ դիմաւորելու եմ եկել, յանկարծ դուրս թռաւ նրա բերնից:

Սահառունին ուրախութիւնից կարմրեց և, յափշտակութեամբ համբուրելով նրա ձեռքը, նայեց նրա երեսին:

Նրա աչքերում ուրախութիւն էր փայլում:

—Դուք, ի հարկէ, այս շոք ու կրակին ոտով տուն չէք վերադառնալ. կառքը կը նստէք, կ'երթանք միասին:

—Հաղիւ-հազ եկաք: Ձեք իմանում, թէ ինչ աստիճան անհամբերութեամբ էի սպասում ձեզ, ոգևորւած ասաց Հեղինէն նստելով տարան տասը:

Գիտէք, Միքայէլը այստեղ չի, յանձարժ դուրս թռաւ նրա բերնից:

— Ինչպէս թէ այստեղ չի:

— Գնաց Պետերբուրգ:

Սահառունին մտահոգ կերպով նայեց նրան և մտածեց. այժմ ինչպէս անեմ ես:

Հեղինէն նորա աչքերի արտայայտութիւնից հասկացաւ նորա մէջ կատարուող հոգեկան կռիւը: Նա այլալուեց, կարմրեց. նա իւր մէջ մի նոր բան էր զգում, որ չէր կարողանում բացատրել. նորա հայեացքը, որով նա նայում էր Սահառունուն և որի մէջ նկատուում էր մինչև այլ ժամանակ չ'եղած, անսովոր քնքշութիւն, — այդ հայեացքը պարզ ցոյց էր տալիս, որ մեղմ քոյր-եղբայրական սէրին խառնել է մի ուրիշ աւելի տաք զգացմունք:

Հեղինէն աւելի մօտեցաւ Սահառունուն և, բռնելով նորա երկու ձեռքը, մինչև անգամ իրան համար անսպասելի կերպով ասաց.

— Ճակատի գրածից մարդ չի կարող փախչել, ինչ որ մարդուս գլխին գալու է՝ կը գայ:

Սահառունին զարմացած նայեց Հեղինէին:

— Ե՛հ, Գէօրգի Ալեքսանդրովիչ, հանէք գլխներիցդ այդ մռայլ մտածմունքները, երկար լուծիւնից յետոյ նորից խօսեց Հեղինէն, նայէք, ինչ գեղեցիկ է մեզ շրջապատող բնութիւնը:

— Հա, մտահոգ կերպով պատասխանեց նա և ուզում էր ազատել ձեռները Հեղինէի ձեռներից, բայց նա պինդ բռնել, բաց չէր թողնում:

Մի քանի րոպէ Սահառունին կարծէս ամեն բան մոռացաւ, բացի իւր և Հեղինէի բախտաւորութիւնից: Երկուսն էլ այնքան երջանիկ էին զգում իրանց, այնպէս թեթեւացած, կարծես մի ահագին ծանրութիւնից ազատւած լինէին:

Ճանապարհին նրանք համարեա չէին խօսում, բայց երկուսն էլ իրար երեսի նայելով կարդում էին միմեանց ներքին բաղձանքը — երանի՜ ճանապարհը վերջ չունենար:

Բայց զուր, մի տասը-տասնըհինգ րոպէից յետոյ կառքը կանգ առաւ Նաիրունու տան առաջ:

XI

Չէ, այսպէս չի կարելի, պէտք է շուտով վերջացնել ու զնալ
Թ-ս, մտածում էր Սահառունին հիւրանոցում սենեակ վարձելիս:

Միւս առաւօտը նա շնչասպառ մի դիւանաւանից միւսն էր վա-
զում, աշխատելով որքան կարելի է շուտ գլուխ բերել քրոջ գործը,
որպէս զի կարողանար մի քանի օրից հեռանալ Պետտիգորսկից: Նա
զիտէր, որ եթէ Հեղինէի բերնից յանկարծ սիրոյ մի խօսք դուրս
թռչէր, յաւիտեան նրանք կապւած կը լինէին այդ խօսքով:

Միթէ ես սիրում եմ նրան, այլապէս չարցնում էր ինքն
իրան Հեղինէն, Սահառունու գալու հետեւեալ ասաւօտը: Մինչև
երէկ ես նրան միայն համակրում էի, բարեկամական սէր էի զգում
դէպի նա, իսկ այժմ տես թէ ինչ է ծագում այդ բարեկամու-
թիւնից: Չէ, այսպէս չի լինիլ, պէտք է հէնց սկզբում մեռցնել
այս զգացմունքը. սա ոչ մէկիս համար խէրով չի վերջանալ: Չէ,
աւելի լաւ է առաջնան նման լոկ բարեկամական զգացմունքով վե-
րաբերւենք իրար, եթէ որ այդ անհնար չէ:

Այդ մտածմունքներով պաշարւած՝ Հեղինէն հագնւեց ու զնաց
դէպի Ելիզաւետինսկի ջերմուկը: Նա խմեց հանքաջին ջրից ու սկսեց
ման գալ ընդարձակ գալլերէջում:

Նա սաստիկ յուզւած էր: Ծանօթների հարցերին չ'ուզենալով
ու մեքենայաբար պատասխանելով, նա ուշադրութեամբ աչք էր
ածում շորս կողմը:

— Ինչու չի երևում, չը լինի ճանապարհը կորցրել է, բայց չէ,
անկարելի է, ես երէկ նրան շատ մանրամասն ու որոշ բացատրեցի
այս ջերմուկի տեղագրութիւնը, թէ՞ դուցէ նա էլի փախչում է ին-
ձանից, չի ուզում պատահել: Եհ, ասե՛ք շատ էլ լաւ է անում:
Եթէ մենք չենք կարող լոկ բարեկամական զգացմունքով վերաբերւել
միմեանց, աւելի լաւ չի լինիլ, որ իրար բոլորովին մոռանանք: Ան-
կասկած նա էլ ինձպէս յանցանք է համարում դէպի՝ ամուսնական
կապով կապւած կինը զգացած սէրին անձնատուր լինելը:

Այսպէս էր մտածում Հեղինէն, այսպիսի մտքեր էր թելադրում
նրան սառը դատողութիւնը, բայց սիրալը ուրիշ էր ասում, սրտի
խորքում նա յոյս էր տածում, որ Սահառունին վաղ թէ ուշ կը դալ.

բայց զուր էր յոյսը. Սահառունին չ'եկաւ: Երկար սպասելուց յետոյ Հեղինէն, սովորականից ուշ, տխուր-տրտում տուն վերադարձաւ:

Սահառունու գալուց յետոյ արդէն հինգ օր էր անցել, իսկ Հեղինէն դեռ չէր տեսնել նորա հետ: Խեղճը ինչ անում էր չէր անում, չէր կարողանում մոռանալ Սահառունուն. նորա պատկերը աչքի առաջիցը սկի չէր հեռանում:

—Որտեղ էր խելքս, երբ որ Վլադիկաւկազում իմացայ թէ ինձ սիրում է, ինչո՞ւ ա՛յն ժամանակ ուրախացայ. միթէ չէի կարող հասկանալ, որ այդ րոպէից յետոյ ինձ համար կորած է նրա բարեկամութիւնը: Ես այնպէս սովորել եմ նրան, որ ինչ անում եմ՝ չեմ անում՝ չեմ կարողանում հաշուել այն մտքի հետ, որ ես պէտք է յարաբերութիւններս կորեմ նրանից: Աւանց այն էլ աշխարհումս ուրախանալու բան չա՛ռ քիչ ունեմ, միթէ պէտք է նրա տեսակցութիւնիցն էլ զրկեմ:

Հեղինէն վրդովմունքից չը կարողացաւ տանը նստել, դուրս եկաւ քաղաքում թափառելու:

Շոք օր էր: Երկար ժամանակ ման գալուց յետոյ, նա յոգնած գնաց անտառը ու նստեց մի նստարանի վրայ: Մի քառորդ ժամ էլ դեռ չէր անցել, որ յանկարծ ծառերի մէջից երևաց Սահառունու բարձր հասակը: Սահառունին զարմացած բացականչեց:

—Սկի չէի կարծիլ, որ դուք կարող էք այտուղ լինել, տիկին Հեղինէ: Հեղինէն շփոթւած նայում էր նրան:

Սահառունին նկատեց այդ: Նա աշխատում էր Հեղինէի ուշադրութիւնը դարձնել կողմնակի հարցերի վրայ:

—Ճաշից յետոյ իսկոյն դուրս եկայ ու մինչև հիմա թափառում եմ այտուղարենք. ինչքա՛ն ջերմուկ կայ, զարմանալի է:

—Ես էլ ճաշից յետոյ եմ դուրս եկել տանից:

—Չարմանում եմ, թէ ինչպէս էք սիրտ արել այսպիսի շոքին դուրս գալ տանից:

—Այնպէս, ինչպէս դուք. ինչու էք զարմանում:

—Ձէք գայ գնանք Նիկողաւսկի ջերմուկը: Այնտեղից հիանալի երևում է Պետտիգորսկի ամբողջ շրջակայքը:

—Գնանք, մոքամօլոր կերպով պատասխանեց Հեղինէն, վերկենալով տեղից:

Սկզբում նրանք լուռ ու մունջ էին գնում, երբեմն երբեմն ընդհատելով լուռթիւնը կցկտուր նախադասութիւններով, բայց բնութիւնը նրանց չորս կողմը այնպէս հրճւում էր, որ նրանց սիրան էլ վերջապէս բացւեց:

Նրանք սկզբում մենակ էին. բայց շատ չ'անցած հասարակութիւնը սկսեց հաւաքւել, զինւորական նւագածուների խումբը սկսեց ածել, սկսեցին ջրերում բժշկւողների անվերջ ձանձրալի խօսակցութիւնները իրանց խմած ջրի բաժակների քանակութեան մասին և այլն և այլն:

Հեղինէն առաջադից Սահառունուն, որ վերկենան ու գնան: Վայր զալիս նրանք պատահեցին մի գունատ, մաշւած, կմախք դարձած աղջկայ, որ, յենւելով մօր կռանը, մեծ զժարութեամբ բարձրանում էր սանդուղքով:

Հեղինէի սիրտը արորւեց ցաւից:

— Խեղճ աղջիկ, կամաց ասաց նա Սահառունուն, այստեղ նախը կեանքի վերջին օրերն է անցկացնում. բժիշկն ինձ ասում էր, որ ամենաշատը հազիւ մի ամիս ապրի:

Դեռ խօսքը բերնումն էր, որ առաջներովը պատգարակների մէջ դրած անցկացրին երկու անդամալոյծի, նրանց յետևիցն էլ անխառն բազկաթուփ մէջ նստացրած վերքերից քրքրւած մի ապալի:

— Դուք ամեն օր ա՛յս էք տեսնում, աիկին Հեղինէ. տխուր տեսարաններ են:

Այդ երեկոյ Հեղինէն աւելի զգացուն էր դարձել, հիւանդները այդ երեկոյ սովորականից աւելի սաստիկ էին շարժում նրա գութը:

— Շատերն ասում են, թէ մարդս բախտաւոր ժամանակը ուրիշներին մոռանում է. որքան սխալւում են այդպէս կարծողները: Ինձ թւում է, ընդհակառակը, թէ մարդուս սիրտը՝ ուրախ ժամանակը՝ աւելի զգացուն է լինում դէպի ուրիշների տանջանքները:

— Ամեն մարդ էլ այդպէս չի լինում, աիկին Հեղինէ: Կան այնպիսիները, որոնք իրանց երջանկութեամբ կարծէք ուզում են լուսաւորել բոլոր անբախտների սրտում տիրած խաւարը, կան այնպիսիներն էլ, որոնք բախտաւոր ըողէներում ամենքին մոռանում են, միայն իրանցով են զբաղւում, կարծէք վախենալով որ ջանկարծ ուրիշներին էլ մասը կ'ընկնի իրանց բախտաւորութիւնից:

Հեղինէն գլխով արեց ի նշան համաձայնութեան և մի առանձին քնքշութեամբ նայեց Սահառունուն:

— Բայց այս ո՞ւր ենք եկել, Գէորգի Ալէքսանդրովիչ, այնքան հեռացել ենք որ քաղաքը էլ չի երևում:

— Այնպէս էք ասում, կարծէք մի բանից վախենում էք, տիկին Հեղինէ:

— Ինչ էք ասում, Գէորգի Ալէքսանդրովիչ, ես ձեզ հետ աշխարհի ծայրն էլ պատրաստ եմ երթալ:

— Հանգստացէք, տիկին Հեղինէ, դուք յոգնել էք. այստեղ հիանալի հով է:

Սահառունին գետինը մաքրեց քարերից ու իւր պլեյքը փռեց, որ Հեղինէն նստի:

— Որքան ուրախ եմ, Գէորգի Ալէքսանդրովիչ, որ Պետտիգորսկ եկանք, ասաց Հեղինէն ձեռով նշան անելով որ Սահառունին նստի իւր կողքին: Թիֆլիսը, իւր այն հասարակութիւնով, որի շրջանումն էի լինում ես վերջին ժամանակները, ինձ սաստիկ ձանձրացրել է:

Մի քանի րոպէ տիրեց խորին լռութիւն:

— Գէորգ, յուզւած սկսեց խօսել Հեղինէն՝ առաջին անգամը անւանելով նրան ուղղակի միայն անունով, եթէ ձեզ համար, զոնէ, մի փոքր նշանակութիւն ունի իմ հանգստութիւնը, մի խուսափէք ինձանից... դուք չը զիտէք... Թէ որքան ծանր է այդ ինձ համար:

Սահառունին չէր իմանում ինչ պատասխանի:

Երկուսն էլ իրարից քաշւում էին:

Մի քանի րոպէ լռութիւնից յետոյ նրանք վերկացան տուն գնալու: Զանապարհին էլ համարեա ամենեւին չէին խօսում:

— Հը, Գէորգի Ալէքսանդրովիչ, հազիւ-հազ մեզ միտքներդ զցեցիք, ասաց Նակունին պատահելով նրանց պարտէզի դրանը:

— Ներեցէք, քեռի, որ ես այսքան ուշացայ թէյին:

— Բան չը կայ, հոգիս: Ման արի, ուրախացիր, քէֆ արա քանի որ այստեղ ես, ա՛յ որ կ'երթաս այն ձեր մեռած, թողո՞ւ քաղաքը այն ժամանակ կ'ուզես տանիցը սկի դուրս մի գալ:

Սահառունին մնաս բարե արեց որ գնաց:

— Ո՞ւր, ո՞ւր, Գէորգի Ալէքսանդրովիչ, մի քիչ նստէք, Հեղինէի հետ խօսեցէք. մի ժամ չ'անցած ես էլ կը վերադառնամ:

—Ձէ, ներողութիւն, չեմ կարող... գործ ունեմ:

—Որ այդպէս է՝ վաղը եկէք ճաշինք միասին:

—Ձեմ կարող խօսք տալ... կ'աշխատեմ գալ... բայց դուք մի սպասէք ինձ:

Հեղինէն տխուր-տրտում գլուխը քաշ գցեց:

—Ձէ, չեմ գնալ, վճռեց միւս առաւօտը Սահառունին: Իսկ այստեղից պէտք է անպատճառ հեռանալ և որքան կարելի է շուտ: Ախ, թէ այս քրոջ գործը չէր լինիլ. ինչ արած, ճար չը կայ. հօ չեմ կարող գործը թողնել, գնալ ու քրոջս տուն-տնաքանդ անել. ես էլ այնքան չ'ունեմ, որ կարողանամ քրոջս պահել:

—Վճռեց, ասաց նա ինքն իրան, երկար մտածելուց յետոյ, քրոջս գործը կը յանձնեմ մի վստահելի մարդու, իսկ ինքս կ'երթամ Կիսլովոյսկ ու այնտեղից երբեմն-երբեմն կը տեղեկանամ թէ գործը ինչ դրութեան մէջ է:

Սահառունին վաղ-վաղ հագնեց, դուրս եկաւ տանից, ձեռաց վերջացրեց գործը ու նոյն երեկոյեան գնաց Կիսլովոյսկ:

Հեղինէն, Սահառունուն ճաշին երկար ժամանակ զուր սպասելուց յետոյ, սաստիկ բարկացաւ և անհամբերութեամբ՝ սպասում էր, թէ երբ պէտք է պատահէ, որ մի լաւ յանդիմանի զորա համար:

—Ձէ, շատ խելօք է վարւում, դարձեալ աշխատում էր Հեղինէն արդարացնել Սահառունուն և համոզել ինքն իրան, որ ինքն էլ պէտք է այդպէս վարւի:

Հեղինէն ինքն էլ լաւ գիտէր, որ նա ու Սահառունին պէտք է իրարից բաժանեն, հեռանան, իրար հետ չը տեսնեն. շատ լաւ գիտէր այդ, բայց զգում էր, որ իւր համար այդ անկարելի է:

—Ախ, ո՞ւր գնացին մեր խաղաղ օրերը, ո՞ւր չքացան մեր բարեկամական չարաբերութիւնները, ցաւելով մտաբերում էր Հեղինէն անցեալը: Ինչու այս չարաբախտ զգացմունքը բուն զրեց մեր սրտում: Ինչ լաւ էր, քանի որ այդ զգացմունքը չէր պղտորել մեր սիրտը: Դարդի ժամանակ գիտէի, որ ունիմ անկեղծ սրտացաւ բարեկամ, որի առաջ կարող եմ սիրոս բաց անել, ես էի յուսահատուում՝ նա էր ինձ սիրտ տալիս, նորա նեղ օրին ես էի մխիթարում. իսկ այժմ, երբ որ ընտանեկան կեանքում ամենածանր բոլակներն են ինձ համար, երբ որ ես, մենակ դարդս սրտումս մեռցնելով, առանց

մի մտերիմ բարեկամից գոնէ, երբեմն-երբեմն մի կարեկցութեան համակրութեան խօսք լսելու, կը ցնորւեմ, այժմ, այսպիսի ժամանակ ես բարեկամ չ'ունիմ: Ես Գէորգի առաջ սիրտս բաց կ'անէի, կը պատմէի դարդս ու նորա բարեկամութիւնը ինձ համար գոնէ մի քիչ մխիթարանք կը լինէր, իսկ այժմ նա ստիպւած է ինձնից փախուստ տալ: Ես չէի իմանում, որ այսքան դժուար է մարդու համար իրան յաղթել... Ս'ի, Աստուած, կարող էի միթէ ես մտածել, որ մեր յարաբերութիւնները այսպիսի ձև կը ստանան: Միտս է, ինչպէս մի անգամ մարդս նախանձ յայտնեց դէպի ինձ, նորա վերաբերմամբ. այն ժամանակ սկի չէի էլ կարող երևակայել, որ նրան կարող եմ սիրել այն սիրով, որ այժմ եմ զգում: Այժմ, որ մարդուս կասկածը արդարացաւ, էլ ինչ երեսով պէտք է ես նայեմ նրան ու առ հասարակ ծանօթներին վրայ. վերջապէս ինչ պատասխան պէտք է տամ իմ սեփական խղճիս: Ուրիշների նման կեղծել ես չեմ կարող, ամեն մարդ երեսիս նայելիս կը հասկանայ զաղանիքս ու սուտս. չէ, կեղծելը իմ բանս չի, միայն մի բան է մնում ինձ—պահել զգացմունքս սրտիս խորքումը և չը թողնել, որ արտայայտւի մի որ և է խօսքով, մի որ և է շարժւածքով: Ախ, որքան ծանր է քսան երեք տարեկան հասակում հրաժարել սիրելու բախտաւորութիւնից:

Ինչ միտք ունի հրաժարւելը, քանի որ մարդս վաղուց է որ իմ աչքում իւր նշանակութիւնը կորցրել է, ինձ համար ամուսին չէ, հարցնում էր երբեմն-երբեմն Հեղինէն ինքն իրան, բայց միւս կողմից մի ուրիշ աւելի զօրաւոր ձայն նրան ասում էր, որ նա՝ կապւած մնալով մարդու հետ՝ թէ կուզ ձեռական կերպով, չը պէտք է խախտի ամուսնական պարտականութիւնները, ի պատիւ ընդհանուր մարդկային օրէնքների, ի սէր իւր զաւակի և ի յիշատակ նրա հօր հետ մի ժամանակ անցրած քաղցր օրերի:

Այդպէս կուռում էին Հեղինէի մէջ երկու զգացմունք՝ մի կողմից սէրը, միւս կողմից՝ Աստուծո և մարդկանց առաջին տւած երգմանը հաւատարիմ մնալու պարտաճանաչութիւնն ու պարտազանց լինելու երկիւղը:

Այդ բոլորին Հեղինէի վշտահար դէմքին նայողը իսկոյն կը հասկանար, որ նորա հոգում կատարւում է սարսափելի ներքին կռիւ:

—Մնաս բարեւ, Հեղիկ ջան, սթափեցրեց նրան մտախոհութիւնից Շակունու ձայնը:

Շակունուն վաղուց էր ձանձրացրել Պետիգորսկի (սաղաղ) ան-
վրդով և՛ ազարտ խաղերով միայն ընդհատող՝ միակերպ կեանքը,
այնպէս որ նա ուրախութեամբ համաձայնել էր մի խումբ որսորդների
հետ գնալ քաղաքից երեսուն-քառասուն վերստ հեռու որս անելու:

—Վերջապէս դուք էլ, քեռի, մի քիչ կը վարձանաք:

—Եւ այց եթէ դու միշտ պէտք է այդպէս թթւած լինես, ես չեմ երթալ:

—Ես տխուր չեմ, քեռի, ձեր աչքին է այդպէս թւում:

—Տես, կորիճ կաց, դարդ մի անիլ. Աստուած կը տայ, շուտով
մարդդ էլ կը գայ: Այս ինչ է պատահել Պէտրոսի Ալեքսանդրովիչին,
ինչու սկի չի երևում, ժամանակդ նորա հետ ուրախ անց կը կենար...
Ձեռ իմանում որտեղ է կենում:

—Կարծեմ հիւրանոցումն է իջել:

—Այ գնալիս կը մոնեմ նորա մօտ, կը խնդրեմ որ մէկ-մէկ քեզ
տեսութեան դայ, մի չորս օրից յետոյ ես էլ կը վերադառնամ:

Իսկ քեզ համար, բալիս, թռչուններ կը բերեմ, ասաց նա՝
առնելով ծծմօր գրկից երեխային ու պինդ համբուրելով թշիցը:

—Կամաց, քեռի, խեղճ երեխայիս ճիւղեցիք:

—Մի վախենալ, այնպէս կորիճը պէտք է դուրս դայ, որ հատը
չը լինի արար աշխարհում, հիմիկուց երևում է որ մեծ քեռուն է
գցել, զինուորական կը լինի: Ծի՛շտ եմ ասում, Պէտրոս ջան, դու հի-
միկաւ ջահէլների նման քնքոյշ չես լինիլ, չէ՞: Տես, Հեղիկ, շատ
մի փաթաթիլ երեխային. մեզ մոտիկ արա, տեսնո՞ւմ ես. բուք ու
անձրևի տակ ենք մեծացել. այս հասակին եմ հասել դեռ՝ որ ասես՝
եղունգիս ծայրն էլ չի ցաւել:

Ծիծաղելով երեխայի զլխի կապոցն ու տաք վերմակը դէն քցե-
լով, Շակունին երեխային տուց մօրը:

Հեղինէն դուրս եկաւ պառչեամբը քեռուն ձանապարհ գցելու:

Սահառունու գնալը Հեղինէն միայն մի քանի օրից յետոյ իմա-
ցաւ և ծանր ախ քաշեց: Նա չէր իմանում թէ ուր է գնացել և
աշխատում էր ինքն իրան համոզել, որ չը պէտք է էլ իմանայ այդ:

Թէև Հեղինէին դուր էր գալիս Սահառունու հաստատակամու-
թիւնը, բայց սրտումը բարկանում էր նրա վրայ, թէ ինչու էր
գնացել առանց իմաց տալու ու մնաս բարե անելու:

(Կը շարունակւի)

ԲՈՍՖՈՐԻ ԱՓԵՐՈՒՄ

(Գ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՆԻ ԿԵԱՆՔԻՑ)

Վ. ՓԱՓԱՋԵԱՆԻ

(Շարունակութիւն 1)

2

ՄԱՂԱՍ ՇԵԱՅԴՐԻ ԵՐԵԿՈՅԹԸ

Ճրագները վառեցին սենեակում։ Վիրժինը շտապեց վառել նաև հայելիի և դաշնամուրի երկու կողքի մոմերը և նորէն նստաւ իւր տեղը։ Լեռնը ընկղմեց օթոցի մէջ և Վահրամը կանգնած դաշնամուրի մօտ՝ պատրաստեց երգելու սերենադը։

—Անշուշտ դուք էլ կը նւագէք ինձ հետ, դիմեց նա օրիորդին, և երբ վերջինս սկսում էր, Վահրամը ձեռքը պարզեց և աչքը շարունակ օրիորդից Լեռնին և սրանից նրան դարձնելով՝ երգեց։ Երբ հասաւ այն կտորին ուր եղանակը Allegro էր, նա մեղմացրեց ձայնը, սիրադին դէմքով օրիորդին նայեց և առանց ուշադրութիւն դարձնելու նորա կարմրելուն, շարունակեց՝

Chantez, chantez mon ange,

Chantez, chantez toujours:

Յետոյ, երբ հասաւ ելեէջների թռիչքներին, սկսեց այնպէս զրիմաններ անել, որ Լեռնը մի բարձրաձայն քրքիջ արձակելով,

1) Տե՛ս «Մուրճ» № 3:

ընդհատեց Վահրամին: Ծիծաղում էր նաև Վիրժինը, իսկ Վահրամը, բերանը բաց և ձեռքերը տարածած՝ ապշութեամբ նրանց նայելով՝ դադարեց:

— Բրավո՛, բրավո՛, ծափահարեց Լևոնը — մէովէ՛յլ, շառման, փէք դէօղալ, բեր դահա՛, եա՛շա ¹⁾ Վահրամ էֆէնդիս:

Վիրժինը դուրս փախաւ սենեակից, Վահրամը դէմքը կնճռեց, իջեցրեց ձեռքը, փակեց բերանը, յետոյ սառնութեամբ գլխարկն առաւ և ասաց Լևոնին՝

— Մօսիօ, դուք զիս կ'անպատուէք, ես կերթամ՝ կոր: Լևոնը դադարեց ծիծաղելուց, ոտքի ելաւ, ժամացոյցը նայեց և ասաց՝

— Այո՛, գնա՛նք, ես էլ գնալու եմ, այսօր Մադամ Շնայդըը երեկոյթ ունի:

— Երեկոյթ ունի, գոչեց Վահրամը ամեն ինչ մոռանալով — գնանք, մօն շէն ամի:

— Տոմսակ ունի՞ս:

— Ա՛յ, տոմսակ... ունի՛մ. այսօր Արշակը տւեց, հոս քովս է. երթանք, մօն ամի, արդէն ուշ է:

Երկուսն էլ դուրս գնացին սենեակից, դռան մօտ դէմ առ դէմ եկան Վիրժինին, որը դեռ ևս ծիծաղում էր: Վահրամը մօտեցաւ բռնեց նորա ձեռքը, մի րոպէի չափ գոլեց նորա նւագելու տաղանդը, խոստացաւ նոր նոտաներ բերել, մինչև իսկ թոյլաւ թիւն խնդրեց մի օր ջութակով գալ և կոնցերտ կազմել, յետոյ սեղմեց նորա ձեռքը, ժպտեց, գլուխ տւեց, Ֆրանսերէն մի քանի ջերմ կոմպլիմէնտներ արաւ և սպասող Լևոնին հետևեց:

Շուտով հասան նոքա ժողովարանը, որը այն ժամանակ գտնւում էր Պիւան Եօլիի մօտ, մի երկյարկանի շքեղ տան մէջ, և երկու բաժանմունք ունէր:

Տան մի մասի մէջ բնակւում էին ժողովարանի առաքելուհի պառաւ մադամ Շնայդըը երկու մատաղահաս ամերիկացուհիների հետ, ունէին մի լաջն սրահ, ուր տալիս էին երեկոյթներ շաբաթ մի անգամ. հրաւիրում էին անդլիացի միսիսներին՝ գալ մի բան խօսելու. յետոյ թոյլատրւում էր ներկայ եղողներին ճառելու ինչի մասին որ ուզէին, ի հարկէ աշխատելով միշտ երեկոյթի նպատակից չը շեղւել:

¹⁾ Շատ գեղեցիկ, մէկ էլ, կեցցէ:

Սրահի մէջ զրւած կար մի հատ երկար և 7—8 հատ մանր սեղաններ, ուր լցւած էին դոմինօի քարեր, մանկական այլ խաղերի պարագաներ, խոշորացորցներ և ամերիկական տեսարանների բազմատեսակ պատկերներ, այլ և այլ լուսանկար, իւզանկար տեսարաններ, պատկերազարդ թերթեր՝ բոլորն էլ անգլերէն. զոցա մէջ տեղում տեղ-տեղ զրւած կային զանազան ձևերով ս. գիրք և աւետարաններ, սաղմոսներ ու բրոշուրներ, որոնք կրում էին հազար մի տեսակ այլաբանական վերնագիրներ... Այդ բոլոր խառնուրդի մէջ կար նաև մի հատ մեծ օրգոտներով, որի վրայ նւագում էր ցանկացողը և աւելի՛ առաքելութիւնները, երբ պէտք էր երեկոյթը համեմել կրօնական երգերով: Պատերը զարդարւած էին ըստ ամերիկական կրօնական ճաշակի. նախադասութիւններ ս. գրքից, կրօնական խօսքեր ծաղկէ նկարներով (դա մ. Ննայցրի ընկերն էր գրել). դէմ ու դէմի պատի վրայ կախւած էր միտոր շօլթ անուում մէկի մեծ լուսանկարը (նա եղել էր Արևելքի մէջ քարոզչութեան ժամանակ), երկու քարտէզներ հիւսիսային և հարաւային Ամերիկայի, մի քարտէզ Նիւ-Յօրկ քաղաքի և ոսկեզօծ տառերով մի վիճետկա, որը կրում էր իւր մէջ տեղում բողոքականների դէվիզը—«Յիսուսի եկ» հայերէն բառերը:

Փողոցի դուռը բաց էր, նախագաւթում կանգնել էր մի ծառայ, որը հարցնում էր եկողներից տոմսակ և յաճախ էլ ներս էր թողնում տոմսակ չունեցող լաւ հագնւածներին. սանդուխները լուսաւորւած էին. նոցա գլխին կանգնած մ. Ննայցրը իւր խորշոմապատ թոշմած դէմքով և թափած ատամներով բերանը մեծ բացած «ո, yes» գոչելով ընդունում էր հիւրերին:

Նա ժպտելով բարեկեց ներս մտնող Վեռնին և Վահրամին, ժպտելով լսեց վերջինիս կոմպլիմէնտները և անգլիական արտասանութեամբ հայերէնով՝ հրամցրեց ներս, յետոյ բռնեց Վահրամի ձեռքը և ասաց ծանր ու երկարացնելով՝

—Դուն շատ չես երևնար հո՛ս, շնորհակալ եմ որ եկար:

—Պարդոն, մադա՛մ, կոսրտեց Վահրամը—ես զբաղեալ եմ իրիստ զբաղեալ:

—Yes, յոյս ունե՛մ, որ ասկէ ետքը պիտի յաճախես մեզի մօտ:

—Մադա՛մ, անշո՛ւշտ, ինձի համար ձեր տունը շատ, շա՛տ հաճելի է. միս խիզը հո՞ս է:

— Հոս է, ժպտեց մաղամբը— ներսն է. միս Վիզը քեզի շատ կը հարցունէ, կըսէ՝ չ'եկաւ Վահրամ էֆէնդին:

— Ա՛հ, ինձի կը հարցնէ, շնորհակալ եմ, մաղա՛մ:

Եւ ներս մտաւ, գլխովը սրան-նրան բարեւեց և աչքովը միս Վիզին փնտռեց, որը նստել էր երկու երիտասարդների մէջ, խօսում էր երկուսի հետ ևս, ժպտում էր երկուսին ևս:

Մի ուրիշ կողմ էլ մի այլ աղջիկ, որոջ շինծու ատամները դուրս էին ցցւել և ծիծաղելու ժամանակ բերանը բացւող ճանկերի էր նմանեցնում՝ նստել երեք երիտասարդների հետ գոմինս էր խաղում. նա հագել էր շքեղ, մատների վրայ, թւի վերայ փայլում էին ոսկեղէններ. առաքելուհին մեծ ճաշակով իսկ զարդարել էր իւր մազերը, որոնց վրայ ցցած ունէր մի սիրուն բացւած վարդ, որը երբեմն հանելով մօտեցնում էր այս-այն երիտասարդի քթերին և ասում— ո՛րպէս լաւ կը հոտի ասիկա...

Սրահի մէջ կային երեսունի չափ անձինք. ոմանք խոշորացոյցներով տեսարաններ էին դիտում, ոմանք պատկերազարդ լրագիրներ թերթում, ուրիշները մանկական խաղերով էին զբաղւած, ոմանք հասակաւորներ՝ ս. գիրք էին կարդում, իսկ մի երիտասարդ, որը դեռ ևս մէջքը դարձրել էր հասարակութեան՝ նւազում էր օրգի վրայ, մարմնով տակտ էր տալիս և երբեմն էլ իւր խալոս ձայնը լսեցնում: Սրահը լուսաւորւած էր երկու՝ օճառքից կախւած, երեք՝ սեղանի վրայ դրւած ամերիկական և երկու՝ պատերին խիւած ռուսական լամպերով, որոնք առատ լոյս էին սփռում. լուսամուտներից փչում էր զով քամի, իսկ բաց դռնից հետզհետէ մտնում էին նոր մարդիկ, որոնք սլահ մի սրահը դիտելուց յետոյ, տեղ էին բռնում զանազան անկիւններում:

Նրեկոյթը դեռ ևս պաշտօնապէս չէր սկսել, ուստի և ամեն ոք իւր ուզածը անում էր. լսում էին խառն՝ խառն ձայներ, թւերի անուններ, բացականչութիւններ, Rigoletto-ից նւազող կտորներ, խալոս նոտաներ, ծիծաղներ... Լեռնը տեղ բռնեց սեղանի մօտ՝ տեսարաններ էր դիտում, իսկ Վահրամ արդէն տեղաւորւած միս Վիզի մօտ՝ երբեմն փոփոալով և երբեմն բարձրաձայն խօսում և ապա այնպէս մի ծիծաղ էր արձակում, որ օրիորդը թէև կարմրելով՝ սակայն ստիպւում էր ծիծաղակից լինել:

—Քի՞մ դըր շու չալան հէ՛րիֆ ¹⁾ բացականչեց վերջապէս Վահրամը և մօտեցաւ դահնակին. նւագողը Ռաֆայէլ էֆէնդին էր, որ թողաւ նւագելը և ինչ որ մի վէճ սկսեց:

—Ալլահ իւշո՛ւն ²⁾, ասաց սարսափով Վահրամը թաղնւելով միս Լիզի թեւերի ետեւը—չալգըն չալսա՛ն ա՛ ³⁾... demain, demain, mon ami... ես խիստ յոգնել եմ:

—Demain, վաղը, mon ami, վաղը կը շարունակենք մեր վէճը, միս Լիզը ձանձրանում է վիճաբանութիւնից:

—Օ՛, ընդհակառակն, ես կը սիրեմ վիճաբանութիւն, ասաց միս Լիզը—վիճեցէք ասոր վերայ թէ պէ՞տք է պատկերներ գործածել եկեղեցոյ մէջ:

Չը գիտեմ ո՞րտեղից էր, բայց մի քրքիշ բարձրացաւ, ոչ ոք չիմացաւ թէ այդ յանդուգն ծիծաղողը ով էր:

—Բայց օրիորդ, բացականչեց Վահրամը—էֆէնդիի վէճը այդ մասին չէ. մենք առաւօտուն կը վիճէինք հայերէն լեզուի վերայ, ես կըսէի թէ այդ լեզուն խիստ աղքատ է, խիստ կոպիտ է և չունի ֆրանսի... անգլերէնի փափկութիւնը—finesse...

—Օ՛, yes, yes, արեց միս Լիզը—անգլերէն խիստ քաղցր լեզու... հայերէն աղքատ:

—Pardon, pardon, գոչեց Ռաֆայէլը—կը սխալւիք, մաղմաղէլ, հայերէն խիստ հարուստ լեզու, խիստ քաղցր...

—Օ՛, նաու, նաո՛ւ...

—Հագիւ թէ օրիորդը կառուի մլաւոցին նմանող այդ ամերիկական «ոչը» արտասանել էր, որ հինգ վեց տեղից լսեցաւ՝

—Մաո՛ւ, մաո՛ւ, և նրան հետեւեց ամեն կողմից ծիծաղ:

Պահ մի ևս, և երեկոյթը սինադոգայի կերպարանք կը ստանար: Յանկարծ դրան շէմքի վերայ երևեցաւ մի դէմք և լսեց մի բարձր ձայն, որ դռնում էր՝

—Ի՛նչ ընենք որ տոմսակ չունիմ, ես ալ բողոքական եմ. խա՛թ ⁴⁾ ըրի, որ բողոքական եղաց, Ալլահ իւշուն ⁵⁾, ներս պիտի մտնամ:

¹⁾ Ո՞վ է այդ նւագող մարդը: ²⁾ Աձէ սիրուն: ³⁾ Նւագող նւագեալ...

⁴⁾ Ղալաթարի: ⁵⁾ Ալտուեղ այդ բառերը մի ոճ են, որ նշանակում է «Աստուած վկայ»:

—Կեցի՛ր, կեցի՛ր, լսում էր Շնայգր տիկնոջ ձայնը— քեզի ըսին որ...

—Ըսին յըսին չեմ լսեր, ես պիտի մոնամ...

Եւ ներս ընկաւ մի միջահասակ 26 ամեայ երիտասարդ, որը նմանում էր յոյն արբած նաւաստիների. ֆէսը գլխի վերայ ծուռ-դրած, դէմքը կարմիր, աչքերը փոքր, քիթը ծուռ... շորերը թէև մաքուր, բայց անկանոն, վզկապը մի կողմի վերայ ծուռած, բաճկոնի կոճակները բաց, շալւարի մի կտորը վեր քաշւած մինչև սրունդ-ները...

—Միւլիւքն է, բացականչեցին բոլորը ծիծաղելով:

Առաքելուհիները դէմքերը կնճռելով ոտքի ելան. իսկ Միւլիւքը ձեռքերը կռթնեց մէջքի վերայ, մի հպարտ ակնարկով նայեց բոլորին և եկաւ նստելու մեծ սեղանի մօտ:

Մաղամ Շնայգրը պահ մի նորան նայեց (Միւլիւքը հանդարտութեամբ և առանց ոչոքի նայելու թերթում էր պատկերազարդ մի գիրք), յետոյ աչքով արեց օրիորդներին անհանգիստ չը լինելու, և երեկոյթը շարունակեց առաջւայ պէս. Ռաֆայէլն ևս թողեց իւր վէճը և նստեց նորեն դաշնակի վերայ, Վահրամը շարունակեց փռափրսալ միս Նիզի ականջին, խաղացողները սկսեցին նորէն և ոչ ոք նկատեց թէ ինչպէս սրահը մօտն Արշակը և Արտաշէսը:

Արտաշէսը մի հետաքրքիր հայեացքով գնեց սրահը, ներկայ եղողներին, պատերը, սեղանները, օրիորդներին և Արշակի հետ գնաց նստելու մեծ սեղանի մօտ. այդտեղ Արշակը նրան տաւ մի խոշորացոյց և մի քանի պատկերներ:

Վերջապէս սրահը մօտաւ ամերիկացի երկարահասակ միսիօնարը, նրան ընկերանում էր մի ինչ որ կարճահասակ, ուռած փորով, փափուկ ձեռքերով և թշերով մսի դնդի նմանող մի անձ. ետեւից գալիս էր մաղամ Շնայգրը: Միսիօնէրը անցաւ սեղանի վերի կողմը և կանչեց իւր մօտ իւր ընկերակցին, որը թարգմանն էր: Ամենքը զգալով որ պաշտօնական երեկոյթը սկսում էր, թողեցին իրանց զբաղմունքը և միսիօներին նայեցին:

Է

«ԴԷՖ ՕԼ ԿԱԴԵՀ»¹⁾

Միսիօնարը սպասեց որ լռութիւնը տիրէ, յետոյ երկու ձեռքերով կռթնեց սեղանի վերայ, բաց արեց ձեռքում բռնած սուրբ գիրքը, նայեց բոլորին և՝

—Աղօթենք եղբայրնե՛ր, ասելով, աջ ձեռքով փակեց աչքերը։ Նստերը հետևեցին նրան. մի վայրկեան լռութիւն տիրեց արահի մէջ, միայն Միւլիւքն էր, որ դեռ ևս թերթում էր պատկերազարդ գիրքը։

Միսիօնարը մեղմ ձայնով սխեց աղօթքը, նա արտասանում էր ծանր, երկարացնելով և այնպիսի ծիծաղելի արտասանութեամբ, որ Արտաշէսը և Արշակը ստիպւած դէմքերը ծածկեցին, որպէս զի իրանց ծիծաղիլը չը տեսնուի...

—Ո՛վ Տէր, սխեց միսիօնարը—մենք, Քեզի ջերմ հաւատացողներս այսօր ժողովւերենք հոս և մեր աղօթքները կ'ուղղենք Քուկին աթոռիդ ու կը խնդրենք որ մեզի վրայ քաղցր աչքով նայիս ու ներես մեր մեղքերուն ու երկայնամիտ ըլլաս, որովհետև դուն ըսիր թէ չով որ զղջայ, հայրը անոր պիտի ներէ, անիկա պիտի վայելէ հօր շնորհը... Ո՛վ Տէր, թափէ մեզի վրայ Քուկին շնորհքդ, զրկէ մեզի սուրբ հոգիդ, ինչու որ մենք Քու հաւատացեալներն ենք... կակղեցուր քար սրտեր, ինչու որ անոնք խեղճ են, անոնք ալ կուզեն Քուկին շնորհքներդ վայելել... դարձուր հերձաւածողներուն սիրտը, ներէ անոնց, ինչու որ Դուն ըսիր թէ չով որ զղջայ, հայրը անոր պիտի ներէ... անանկ ըրէ որ Քու խօսքերուդ հաւատան ու Քեզի դան ամենքը, ով Տէր, Քո արքայութիւնդ քաղցր է, Քուկին թագաւորութիւնդ անուշ, Քուկին խօսքերդ յանկուցիչ են... դարձի բեր անոնց, որոնք դեռ Քու շնորհքներդ չեն վայելեր, ինչու որ Քուկդ է շնորհքը, զօրութիւն, փառք և զօրութիւն... ամէնա։

Ասաց, լռեց, ծանրութեամբ ձեռքը աչքերից իջեցրեց և բո-

¹⁾ «Ատրիբ դաւաթ». զա բողոքականաց մի երգ է, որը գինեմուլութեան դէմ է գրւած. սկսում է սոյն բառերով՝ «եկ, խմելիքից ձեռք քաշենք» և ամեն տան վերջում երգւում է «դէֆ օլ կադէն» բառերը։

լորին նայեց, յետոյ դարձաւ թարգմանին, որը ձեռքին մի գիրք ունէր և մի բան ասաց նրան: Թարգմանը դարձաւ և գոչեց՝

— 72 համար «եկուր ինձի» Սաղմոսը: Միս Լիզը իսկոյն նստեց դաշնակի վրայ, թարգմանը ձայնը բարձրացրեց և ով որ կարող էր, երգեց այդ մոնոտոն երգը. աւելի բարձր լսուում էին օրիորդների զիւ ձայները, թարգմանի բարիտոնը, Ննայգրի խալոս դիսկանտը և որը ծիծաղելին էր՝ Միւլիւքն ևս թողնելով գիրքը՝ կոտորուած բարիտոնով գոռում էր՝

«Եկուր ինձի, եկուր ինձի»

Երգը աւելեց տաս րոպէ, որից յետոյ միսիօնարը, բնաբան ընտրելով աւետարանի «եկէք ինձ մօտ վաստակածներ և բեռնաւորւածներ...», սկսեց քարոզել:

Բայց որչափ ծիծաղելի էր անգլիական արտասանութեամբ «ու» երով լիքը քարոզը, միսիօնարի կակազիլը, բառ փնտռելը իւր ծոցի տետրակի մէջ, թարգմանին ոտեր հարցնելը և շատ անգամ ամբողջ մտքեր սխալմամբ անգլերէն արտասանելը, որից յետոյ միշտ նա ամենայն պարզութեամբ գոչում էր՝

— Մ', նա'ու, նա'ու (ու, ու), սխալեցայ:

Հէնց որ նա «նսու, նաու» անում էր, ամենքը միմեանց երեսին նայելով լուութեամբ ծիծաղում էին. վերջապէս Միւլիւքն ևս մասնակցեց նրան և երբ մի անգամ միսիօնարը նորից «նսու, նաու» ասաց, Միւլիւքը տարածեց վիզը և խալոս ձայնով մի այնպիսի մլաւոց արձակեց, որ միսիօնարը բերանը բաց արաւ, աչքերը շուեց, Ննայգրը քթի տակից մոմռաց, իսկ բոլոր լսողները բարձրաձայն ծիծաղել սկսեցին:

Միւլիւքը անմեղի նման քաշեց իւր առջև մի խոշորացոյց և իբր թէ ոչինչ չեղած՝ սկսեց դիտել տեսարաններ:

Նուտով քարոզը վերջացաւ, միսիօնարը ողջունեց բոլորին և իւր թարգմանի հետ հեռացաւ, ամեն ոք նորից սկսեց խաղալ նայել, ծիծաղել և խօսակցել, Վահրամը Լիզին, Ռաֆայէլը դաշնակին, Արշակը պատկերներին և Արտաշէսը գրքերին մօտեցան, Միւլիւքը առանձին ուշադրութեամբ զննում էր հատ-հատ պատկերները, աչքով չափում էր նոցա մեծութիւնը, միմեանց մօտ դրած համեմատում էր:

Շնայդրը քայլեց դէպի Միս Լիզը և ձեռները բարեպաշտութեամբ բարձրացնելով, դուեց:

—Նղբայրներ, աղօթենք. Միս Լիզ, երգենք «դէ՛՛ֆ օլ կադէ՛՛հ»:

Միս Լիզը նստեց դաշնամուրի վերայ և սկսեց.

Գէլ իշկի դէն վազ գէշէլըմ¹⁾

Բոլորը կէս ծիծաղելով երգում էին, իսկ Միս Լիզը սպասում էր մինչև մի որոշեալ կտորը և երբ սկսում էին «դէ՛՛ֆ օլ կադէ՛՛հ» խօսքերը, նա, բերանը լիք, պարզում էր վիզը և մասնակցում երգելով:

—Դէ՛՛ֆ օլ կադէ՛՛հ, դէ՛՛ֆ օլ կադէ՛՛հ²⁾...

Երգից յետոյ ծառան նորից ներս բերեց պտուղի պնակներ և ամենքը սկսեցին պտուղ ուտել. այդ նշան էր, որ երեկոյթը շուտով պիտի վերջանար:

Պտուղ ուտելու ժամանակ նորից խումբ առ խումբ խօսում էին և խաղում, իսկ Արտաշէսը և Արշակը այս անգամ մօտեցել էին մի լուսամուտի, նստել նրա քիւլի վրայ, շարունակում էին իրանց խօսակցութիւնը:

—Այդպէս ուրեմն, ասում էր Արշակը—այժմեան անցքերը ցոյց են տալիս որ իմ ասածներս լիովին հաւատալի է. դուք տեսաք այդ բոլոր միստիկական աղօթները, լսեցիք այդ անհամ սառը երգերը, ականատես եղաք այդ խեղկատակութիւններին. միթէ զոքս բաւական չեն համոզւելու որ բողոքականների այս երեկոյթները փոխանակ օգտակար լինելու, մլնասում են... այս երեկոյ դեռ ևս ոչ ոք չը կամեցաւ խօսել, դուք կը տեսնէք ուրիշ անգամներ աջնալիսիներին, որոնք բարձրանում անցնում են այդ սեղանի զլուխը, հաղում են, խնջում և կէս ժամ մարդու զլուխ են տրաքեցնում:

—Միթէ ով ուղենայ կարող է խօսել, հարցրեց Արտաշէսը:

—Ով ուղենայ, միայն թէ առաքելութիւններին նախապէս պիտի յայտնի թէ ինչ նիւթի վրայ պիտի խօսի. բացի գիտական և կրօնական նիւթերից, ամեն մնացեալ բաների վրայ արգելաժ է խօսելը:

—Նւ այդ ոչ մի տարօրինակութիւն չունի, միջահատեց Արտաշէսը—միթէ կարելի է պահանջել որ մի կրօնական մարմին քեզ

¹⁾ Ե՛կ խմելիքից հտ կենանք: ²⁾ Կորսւիր բաժակ:

Թող տայ իւր գծած կրօնական սահմանից դուրս հայեացք ձգել. գիտութիւնն անգամ նորա մօտ սահման ունի, որից այն կողմ նա կոչում է անհաւատութիւն: Ինձ ասացիր որ շրջանների մէջ ես մտնելու. ա՛յս է շրջանդ:

—Այսօր մտցրի քեզ երկու տեղ, իսկ վաղը քեզ կը տանեմ մի աւելի լաւ շրջան, չէ՞ որ ուզում էիր ծանօթանալ Կ. Պօլսի երիտասարդութեան հետ. լաւ տես, դոքա են Կ. Պօլսի երիտասարդները:

—Նւ ուրիշ ոչինչ չունի՞ն:

—Ոչի՛նչ. շատ շատ նրանց կը հանդիպես զարեջրատներում, ուր խօսում են կանանց, Թատրոնի և քաղաքականութեան վրայ. Բիսմարկ, Գլադստոն և այլն նրանց խօսակցութեան հերոսներն են, այս և այն գրքերը համեմներ, իսկ այս և այն դերասանուհին—չարագներ ¹⁾:

—Գնանք այստեղից, ասաց Արտաշէսը շարժւելով:

—Սպասի՛ր, ծիծաղեց Արշակը, դեռ էլի բան կայ. սկի մտքովդ չէ անցնում Թէ ի՛նչ շահ ունեն այս տիկիները այս երեկոյթից:

—Կրօնական որսորդութիւն է, ի հարկէ:

—Սխալ ես, նոքա լաւ գիտեն, որ այստեղ եկողները ոչ Թէ բողոքական, այլ և քրիստոնեայ և շատ անգամ աստուածապաշտ էլ չեն լինիլ. նոքա գիտեն այդ:

—Ո՞ւրեմն...

—Հէնց այդ է, որ պիտի տեսնես, ահա, նայիր այնտեղ, տես Թէ միս Լիզը ի՛նչ է անում:

—Միս Լիզը, որը մի քանի րոպէի չափ դուրս էր գնացել, այժմ ներս էր մտնում մի տետրակ ձեռքին, մօտենում էր մէկ մէկ բոլորին, ժպտում էր իւր ամենաքաղցր ժպիտով, խօսում նրանց և մի ինչ որ բան գրել տալով տետրակի մէջ, անցնում էր միւսին: Միս Լիզը սկսել էր աջ կողմից, իսկ միւս օրիորդը ձախ կողմից և մադամ Շնայդրը դրան չէմքի վրայ կանգնած, իբր Թէ հսկում էր. սակայն եթէ մէկը կամենում էր սենեակից դուրս գնալ, ժպտելով, խօսելով և քաղցրութեամբ ետ էր դարձնում իւր տեղը:

¹⁾ Աղանդերք. մազա:

—Քիչ մ'ալ նստէ, ասում էր նա—միթէ կարելի առանց աղօթելու գնալ, քիչ մ'ալ զւարճացիր, դեռ ուշ է։

Եւ այդ խօսքերը ասելով, նա ներս էր մղում գնալ կամեցողին։ Միւլիւքը շարունակ ուտում էր և ծաղրաբանութիւններ անում։ Լեռնը թերթում էր պատկերազարդ թերթեր, Վահրամը աշխատում էր իւր «օձիքը խալսել» Ռաֆայէլի ձեռքից, որը կտրել էր նորա դէմը, փրփուրը բերնի երկու ծայրերին ժողոված, ոտքի և ձեռքի հակադաս շարժումներ գործելով, կէս ֆրանսերէն, կէս տաճկերէն, անընդհատ խօսում էր. նա թւում էր հայերէնի մէջ մոռութեամբ գործած օտարազգի բառեր, ցոյց էր տալիս թէ ո՞ր լեզուներից է կազմած և ինչպէս, վկայութիւններ էր բերում... մի խօսքով մի լեզուաբանական ամբողջ ճառ էր սկսել և ուշադրութիւն անգամ չէր դարձնում թէ ինչպէս Վահրամը ականջներն էր փակում և աշխատում էր փախչել։

—Այո՛, գոչում էր Ռաֆայէլը—«բաղտաւոր» ծաղիկ է պարսկական «բաղդ» բառից և հայերէն «աւոր» մասնիկից, որ նշանակում է «ունեցող», օրինակ, «անցաւոր»... ո՛չ, այստեղ «աւոր»-ը նշանակում է «ող» այսինքն... «դատաւոր», ո՞ն, ce n'est pas cela. Վահրամը աջ ու ձախ էր դառնում փախչելու, գոչում էր որ «ցեղացի», հայհոյում էր, ընդհատում էր, բաց Ռաֆայէլը միշտ փակում էր նորա դէմը, ձայնը բարձրացնելով խեղդում էր նորա խօսքերը և բառեր էր լուծում։

Միւս Լիզը մօտեցաւ Արտաշէսին, որը հետաքրքրութեամբ սպասում էր։

—Դուք հոս առաջին անգամն է որ կու գաք, ասաց Լիզը նրան։

—Այո՛։

—Յոյս ունինք որ ասկէց ետքը պիտի հաճախէք միշտ. այնպէս չէ՞։

—Զը գիտեմ։

—Զեզի հայճոյք պատճառեց անշուշտ մեր համեստ երեկոյթը և որպէս զի դուք միշտ յիշէք մեզի և մենք ձեզի, անշուշտ չէք զլանար յիշատակի համար ձեր անունը հոս—աս տեսարակին մէջ գրել...

—Անո՞ւնս, ասաց զարմացած Արտաշէսը—ես կոչուում եմ Միսրճեան...

—Գրեցէք հոս. մենք շուտով պիտի երթանք մերին հայրենիք, կուզենք որ ձեզմէ յիշատակ մը մնայ մեզի:

Արտաշէսը չը կարողացաւ մերժել, որովհետեւ չը մտածեց զրելու հետեանքը, առաւ մատիտը և այնտեղ մի տող բան գրեց: Միս Լիզը շնորհակալ եղաւ և հեռացաւ:

—Բայց ինչո՞ւ են գրել տալիս այդ անունները, հարցրեց Արտաշէսը Արշակին—իրանց ի՞նչ պէտք են զրանք, մանաւանդ երբ ես կեղծ անուն գրեցի:

—Կե՞ղծ, ծիծաղեց Արշակը-- ի՞նչ գրեցիր:

—Կարապետ Մարտիրոսեան աշխարհաքաղաքացի:

—Հա՛, հա՛, հա՛, կարծեցիր թէ խաբե՞լ ես նրանց. այդ միւլնոյն է, կուզես անունդ գրիր, կուզես կեղծ, նրանք են շահողը:

—Բայց ի՞նչ են անելու այդ անունները:

—Շատ պարզ է. ամիսը մի անգամ հաւաքում են այդ ստորագրութիւնները և ուղարկում են Ամերիկայ—«Բորդ» ընկերութեան:

—Ինչո՞ւ:

—Յոյց տալու համար թէ այդքան հոգիներ են շահել. իւրաքանչիւր տաս հոգիին մի որոշեալ գումարով աւելանում է իրանց սոճիկը:

Ասաց Արշակը և մի քրքիջ արձակեց: Արտաշէսը բարկութիւնից գունաթափուեց. նա ցատկեց նստած տեղից, բռնեց ընկերոջ թւը և՝

—Գնանք, ասաց խռպոտ ձայնով—գնանք:

—Հը՞, շարունակեց Արշակը—հիմա իմացա՞ր որ կեղծ ստորագրութիւնդ էլ նոյն օգուտը կը տայ նրանց, ինչ որ բուն ստորագրութիւնդ. այժմ՝ գնանք, որովհետեւ պիտի այլ ևս աղօթեն. իսկ մադամ Շնայդը այժմ այլ ևս զրան վրայ չէ կանգնել և արգելք չէ լինում գնացողներին:

Նոքա բարձրացան իրանց տեղիցը, Արտաշէսը յուզմամբ կորզեց գլխարկը և ջանկարժ թողնելով Արշակին որ դիմէ դէպի դուռը, ինքը մօտեցաւ Միս Լիզին, կանգնեց նորա առջև, կնճռեց ճակատը և զոշկոջուն ձայնով ասաց՝

— Օրիորդ, վերջացրի՞ք ստորագրութիւններ ժողովելը:

— Այո՛, ժպտեց Լիզը - Հիմա՛յ 35 ստորագրութիւն ունիմ իմ մօտ յիշատակ, յոյս ունիմ որ չեմ մոռանար ես ատոնց:

— Տւէք ինձ այդ տետրակը, ասաց նա ձեռքը պարզելով գէպի տետրակը:

— Ինչո՞ւ, հարցրեց օրիորդը:

— Ուզում էի տեսնել զրոյների անունը:

Արշակը դուան մօտ կանգնած գիտում էր այդ տետրանը, դիտում էին նաև բոլորը, Վահրամը այդ տետրանի շնորհիւ վերջապէս ազատեց իւր օձիքը Ռաֆայէլի ձեռքից, որովհետեւ սա զադարեցրեց վէճը և սկսեց գիտել Արտաշէսին: Արտաշէսի խրոխտ և հաստատ ձայնը բոլորի ուշադրութիւնը դարձրել էր այն կողմը: Օրիորդը տեղ նրան տետրակը, Արտաշէսը թերթեց այդ յիշատակարանը. այնտեղ վեց թուղթի երեսները խիտ առ խիտ լցւած էին անուններով:

— Պարոններ, դարձաւ նա տաճկերէն լեզուով բոլորին— ձեր և շատերի անունները կան այստեղ գրւած. այս տետրակը վաղը պիտի ուղարկւի Ամերիկա և ցոյց տրւի որ բոլորդ էլ բողոքական էք եղել. դրանով այս տիկիները փող են շահում և ձեզ խաբում են որ չիշատակի համար են ժողովում այս ստորագրութիւնները: Պարոններ, ես, իբր մի մարդ, որ ասում է այդպիսի կեղտոտութիւններ, պատուում եմ այս տետրակը:

Եւ նա մի շարժումով գլխից թղթերը տետրակի միջից, ապա ծաղմութեան և առաքելութիւնների առջև հտոր-կտոր արաւ, ցրեց սենեակի մէջ, բարեկեց և Արշակի հետ դուրս գնաց սենեակից:

— Օ՛, օ՛... բացականչեց Շնայրը:

— Աստուած ի՛մ, աղաղակեց Միս Լիզը — մի ամսւայ չարաբանքիս արդիւնքը փչացաւ:

— Մտո՛ւ... մլաւեց Միւլիւքը:

Եւ Արտաշէսը ու Արշակը փողոցը դուրս եկած միջոցին լսեցին մլաւոցներ և քրքիջներ, որոնք տարածւում էին մինչև հեռուները:

Ը

Տ Ա Վ Օ

Այն Հայաստանցի պատանին, որին Վահրամը Լեոնենց տանը տեսաւ և որի վրայ նա մի «աղնիւ ծիծաղ» տեսնել կարծեց՝ մշկցի էր:

Նոր բուսած ընչացք և մօրուք, մեծ սև աչքեր, սիրուն բերան, լայն թիկունք և 20—21 տարիք ունէր Տավօն: Լեոնի հայրն էր գտել նորան մի անդամ և բերել էր տուն: Այդ այսպէս էր պատահել: Մահմուդ-փաշա շուկայի գլխումը Լեոնի հայր Վարապետ աղան մի փառահեղ մազազին ունէր. մի երեկոյ նա, երբ փողերով լիքը պալուսակը ձեռքին տուն էր գնում և գնալուց առաջ հսկում էր որ մազազինը լաւ փակեն, խանի դռան մօտ կծկւած տեսաւ Տավօյին, որը ցնցոտիներով ծածկւած՝ կպել էր պստին և նայում էր անծանօթի պէս իւր չորս կողմը: Վարապետ աղային դուր եկաւ Տավօի սիրուն և անմեղ դէմքը. երևի նոր է եկել, մտածեց նա, և նոր եկածներն էլ ոչ գող են լինում, ոչ խմող և ոչ էլ խաբեբայ, ապա տեսնեք: Նւ վարձեց նորան, խոստանալով 3 ոսկի, մի ձեռք հագուստ, անկողին և ուտելիք:

Տավօն հէնց առաջին օրից ծիծաղ պատճառեց. Լեոնի մայրը չը թողեց նրան այդ զգւելի հագուստով սենեակը մոնելու, մինչև իսկ գաւիթի մաքուր սալաչատակը կոխելու արգելեց նորան և հրամայեց կոշիկները հանել. յետոյ ուղարկեց լացւելու և այլն. Լեոնը նայեց նորան ուշադրութեամբ և «գեղեցիկ է» ասաց, Վիրժինը արհամարհանօք գլխից մինչև ոտք չափեց և ասաց՝

— Որտեղի՞ց փէչդա ըրիք այս խըմբըլը. իսկ տան փոքրիկները մինչև երեք օր դեռ ևս «Տավօ»-ի փոխարէն «խըմբըլ» էին կանչում՝ նրան: Տավօն տարօրինակ էր, նրա իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր շարժումը ծիծաղ էր պատճառում տան մէջ: Ամենից բարձր և երկար ծիծաղում էր Վիրժինը, միչև իսկ ղիտմամբ աւիթներ էր տալիս Տավօյին մի որ և իցէ անշնորհքութիւն անելու, որպէս զի ծիծաղեն: Հենց երկրորդ օրը մի այնպիսի դէպք պատահեց, որ Վիրժինը մի ժամի չափ ծիծաղելուց յետոյ, մինչև իսկ ղրացիներէ մօտ գնաց և նրանց էլ ծիծաղեցրեց:

Կարապետ աղան սովորութիւն ունէր հացից յետոյ տաք ջրով լւացելու. այսպէս երբ հաց կերան, նա դարձաւ դրան մօտ կանգնած Տավօյին և զոչեց՝

— Տավօ՛, յըբբըղ լացանը ¹⁾ բեր:

Տավօն ոչինչ չը հասկացաւ, փոքր ինչ ապուշի պէս աղային նայեց, յետոյ դուրս վազեց և երկայն միջոց չէր վերադառնում:

— Ծօ՛, Տավօ՛, աս ո՞ւր ես, յըբբըղը ի՞նչու չես բերեր:

— Հիմա՛, աղա — կեփեմ կոր:

— Ծօ ի՞նչը կեփես, գոչեց զարմացած աղան:

— Յըմբըղը... հիմա կեփի:

Բարձրացաւ ընդհանուր ծիծաղ, ամենքը դուրս թափւեցին տեսնելու թէ Տավօն ի՞նչպէս էր եփում «յըբբըղը»:

— Ծօ, հայվա՛ն, գոչեց աղան ծիծաղելով — քեզի ըսինք զահվե՛ եփէ թէ յըբըղը բեր. Տավօն ապշած մնաց:

— Ապա յըմբըղը ո՞րն է, աղա, հարցրեց նա:

— Ասիկէ, ասիկ, հայվա՛ն, ասաց աղան դրան մօտից ջրամանը վերցնելով և ցոյց տալով:

— Ատի՛կ... ասաց զարմացած Տավօն — մէնք ատոր «ջրածիկ» կըսենք:

Այդ անունը խիստ ծիծաղելի թւեց բոլորին, բացի Աւտնից, որը հասկացաւ այդ բառի մաքուր հայերէն լինելը. իսկ Վիրժինը ծիծաղից մեռնում էր, նա սենեակից սենեակ էր վազում «ջրածիկ, ջրածիկ» գոչում, զալիս Տավօի քիթն ՚ի վեր մի ծիծաղ արձակում... և Յօր Տավօյին նա «ջրածիկ» անունովն էր կանչում, իսկ թաղի բոլոր աղջիկներին արդէն պատմել էր դէպքը: Մի ուրիշ անգամ էլ Վիրժինի մայրը Տավօյին հրամայել էր շուկայից «կաթըղ» (մածուն) բերելու, Տավօն գնացել մի աման լիքը կաթ էր բերել: Այսպէս մինչև երեք ամիս Տավօն ամենօրեայ ծիծաղների առիթ էր լինում. ծաղրում էին նրա լեզուն, հագուստը, շարժւածքները, մինչև իսկ դէմքը, անդադար չարածճի Վիրժինը օյիններ չէր սարքում նորա զլխին և ծիծաղում: Նորա խօսակցութիւնը նա անքան ծիծաղելի էր գտել, որ օր չէր լինում որ չը չիշէր, երբ անցնում էր Տավօյի մօտից և կամ երբ տեսնում էր նրան:

¹⁾ Ջրաման և կոնք տաճկերէն է:

Ասացինք որ Տավոն մտաւ Վիրժինենց տանը ցնցոտիներով. սակայն Վիրժինի մայրը հնարը գտաւ նրան մի քիչ մաքրելու. առնել էր տւել մի մաքուր հագուստ և երբ կիւրակի կամ տօն օր և կամ հետ էր լինում տանը, Տավոն յայտնւում էր այդ նոր հագուստների մէջ, բաճկոնով, եւրոպական հասարակ հագուստներով և զլուխը բաց... այդ հագուստը այնչափ սազում էր նրան, որ ամէն անգամ երբ Տավոն հագնւում և մաքրւում էր, այն օրը Վիրժինը այլ ևս դադարում էր նրան ծաղրելուց և շատ անգամ իսկ մի տեսակ հետաքրքրութեամբ էր զիտում այդ գեղեցիկ առողջ դէմքը:

Մի կիրակի օր, երբ Վիրժինը նստել նւագում էր իւր դաշնամուրի վրայ, իսկ մայրը «սատերի» վրայ նստած լուսամուտից փողոցն էր զիտում, Տավոն ձեռքը սուրճը ներս մտաւ սենեակը. կարապետ աղան և Լեոնը տանը չէին, իսկ սուրճը հրամայել էր եփելու և մատուցանելու՝ Վիրժինի մայրը: Երբ Տավոն ներս մտաւ, Վիրժինը դադարեց նւագելուց և առաւ սուրճը, մայրն էլ տեղաւորեց մի բազկաթուղի մէջ և որովհետև ուրախ տրամադրութեան մէջ էր, յանկարծ դարձաւ Տավօյին և ասաց՝

— Տավօ, Լեոնը ասում էր որ դու լաւ կարդալ գիտես, ճի՞շդ է...

— Քիչ գիտեմ, խանութ:

— Լեոնը ասում է որ լաւ գիտես, որ՞տեղ ես կարդացել:

— Մեր երկրում:

— Ձեր երկրում դպրոց կայ:

— Իսկ ձեր երկրում սուրճ խմո՞ւմ են, յանկարծ մէջ մտաւ

Վիրժինը:

— Խմում են, օրիորդ:

— Օրիորդ... գոչեց զարմացած Վիրժինը— ա՛, դու հայերէն լա՞ւ գիտես. տեսնում ե՞ս, մայրի՛կ, ինձ օրիորդ է կանչում:

— Ասած կը լինի, գիտեց մայրն— Տավօ՛, ձեր երկրում աղջիկներին ի՞նչ են կանչում:

— Անուն են տալիս, խանութ:

— Օտար է՞լ որ լինի:

— Հրամանք ես, անուններն են տալիս, Ոսկուխատ, Գիւլզար...

— Քա՛հ, քա՛հ, քա՛հ, ծիծաղեց Վիրժինը— Ի՛սկ խըմբըլի անուններ, ինչ ասացի՞ր, Ոսկու...

— Ոսկուխառ, Գիւլզար, Նազիկ...

Տալօ՛, ճիշտն ասա, ձեր Ոսկիներ, Գիւլերն են սիրուն, թէ իմ աղջիկը:

Տալօն կարմրեց, վարանեց պատասխանելու, իսկ Վիրժինը ծիծաղում էր:

— Խանճա՛, ասաց Տալօն փոքր ինչ լսելուց յետոյ— եթէ մեր աղջիկներն էլ այդպէս սանտրուին, դարդ չունենան, ժամանակ ունենան իրանք զիրենք զարդարելու... այո՛, եթէ կարողանան, ո՛չ մի պօլսեցի աղջիկ թող չ'երագէ նրանց գեղեցկութիւնը ունենալու: Եւ լռեց ու դէմքը փողոցին դարձրեց:

Վիրժինը և մայրը զարմացած միմեանց երեսին նայեցին:

— Ա՛յ, գոչեց մայրը— Տալօ՛ և այդ խօսքեր. խելօք խօսքեր, ես էլ լսեր եմ որ խմբբլ աղջիկները սիրուն են լինում:

— Բ՛հ, ասաց արհամարհութեամբ Վիրժինը իւր կողքի հայելին նայելով— խմբբլ ինչ է, որ ինչ գիտենայ գեղեցկութիւն գնահատելը:

Տալօի դէմքի վրայից արագութեամբ մի հեգնական ժպիտ անցաւ, բայց Վիրժինի մայրը այդ նկատեց:

— Այս տղան կրթւած տղայ է երևում, մոտածեց նա— ինչու ուրեմն մինչև այժմ իրան տգէտ էր ձևացնում:

— Տալօ՛, ասաց նա բարձր և լուրջ— պատմիր մեզ քո երկրիդ մասին...

Տալօն ու Վիրժինը զարմացած նրան նայեցին, Վիրժինը՝ թէ մայրը ինչու յանկարծ հետաքրքրեց խմբբլների երկրով, իսկ Տալօն՝ թէ ի՞նչը ստիպեց նրան հետաքրքրելու:

— Պատմի՛ր, կրկնեց մայրը— ասում են որ ձեր երկրի մէջ բոլորն էլ անկիրթ են, տգէտ են, կոպիտ ու կեղտոտ, այնպէս, ինչպէս որ դու էիր նոր եկածդ ժամանակ:

Տալօի աչքերը բարկութիւնից այնպէս փայլեցին, որ Վիրժինը ապշեց:

— Այո՛, գոչեց Տալօն յուզմամբ— անկիրթ են, կեղտոտ են, բայց...

— Բայց ի՞նչ, հարցրեց Վիրժինի մայրը:

Տալօն փոքր ինչ լռեց, մօտեցաւ առեց մօր և աղջկայ ձեռքից ֆինջանները, ուսերը թոթափեց և սառը դէմքով և զօրութեամբ ասաց:

—Չըմ գիտնայ...

—Սպասի՛ր, ասաց Վիրժինը—ինչպէս երևում է դու շատ բան գիտես և կարող ես պատասխանել, բայց չես ուզում, պատմի՛ր, Տալօ՛, մեզ վրայ մի նեղանալ որ ծիծաղում ենք քո պակասութիւնների վրայ:

—Նա չեմ նեղանում, օրիորդ:

—Ուրեմն պատմի՛ր մենք էլ չենք ծիծաղիլ, ինձ հետաքրքրում է թէ խմբբայները ի՞նչ են անում, ի՞նչ են ուտում, ի՞նչպէս են աշխատում:

Տալօն մի թափանցիկ ականարկ ձգեց նրա վրայ, յետոյ զգուշութեամբ ձեռքի ափսէն Ֆնջաններով դրեց մի աթուռի վրայ, կռթնեց պատին և ասաց:

—Չըմ գիտնայ:

Վիրժինը և իւր մայրը ապշել էին թէ Տալօյի յուզման և թէ նրա տարօրինակ խօսքերի վրայ, որոնց նման երբեք չէին լսել կեանքերումը:

—Ի՛նչեր ես պատմում, գուցե մայրը—այդ բոլորը ճիշտ են:

Առաւ աթուռի վրայից ափսէն, կանգ առաւ շէմքի վրայ ու թևովը ճակատից հոսող քրտինքը սրբելով և մի դառն ժպիտ արձակելով, արագութեամբ գուրս դնաց սենեակից:

Վիրժինը մինչև վեց օր այլ ևս չէր ծիծաղում նորա վերայ, մինչև իսկ մի տեսակ համակրութեամբ նայում էր նորա գեղեցիկ դէմքին, երբեմն էլ կառաւիներով մօտենում էր նրան և խօսակցում... բայց անցան վեց օրերը և Վիրժինը նորէն սկսեց իւր նախկին ծաղրը, սակայն այս անգամ նա անդադար ծաղրում էր «Ոսկուխառ, Գիւլզար» բառերի վերայ և գոչում Տալօյի երեսն ի վեր:

—Հը՞, Տալօ՛, ես եմ գեղեցիկ թէ ձեր Ոսկիները ու Գիւլերը:

—Դու էլ ես գեղեցիկ, ասում էր Տալօն մի համեստ ժպիտով: Եւ Վիրժինին այդ պատասխանը հաճոյ էր թւում այն աստիճան, որ մինչև իսկ մի օր ասաց Տալօյին:

—Տալօ՛, ի՞նչ կանես, եթէ ինձ նման մի աղջիկ սիրէ քեզ:

—Նա էլ նրան կը սիրեմ... բայց ո՞վ կը սիրի մի խմբբայի:

—Լա՛ւ, լա՛ւ, ծիծաղում էր Վիրժինը—ինչո՞ւ ես նեղանում «խմբբայ» բառի վրայ, ուրեմն ի՞նչպէս կոչեմ քեզ:

—Իմ անունս Տալօ է, ես էլ հայ եմ ու մշեցի:

Այդպիսի խօսակցութիւնները հետզհետէ այն աստիճանի հասան, որ Վիրժինը սկսեց նկատել, որ Տալօն սիրալիր ակնարկներ է ձգում իւր վերայ... այդ շատ ծիծաղ պատճառեց նրան, նա մտքին դրել էր մօրը և ամենքին յայտնելու, բայց յանկարծ մի միտք չղացաւ նորա մէջ և նա, փոխանակ ուրիշներին յայտնելու, սկսեց ինքն էլ աւելի և աւելի մօտենալ Տալօյին. մի օր Տալօյին յանկարծ այսպիսի մի խօսք ասելու համարձակութիւն ունեցաւ:

—Գիտե՞ս, Տալօ', որ դու շատ զեղեցիկ աղայ ես լինում, երբ նոր հագուստներդ ես հագնում և մաքուր ես մնում:

—Եթէ կուզես, օրիորդ, միշտ նոր հագուստ կը հագնեմ և մաքուր կը մնամ:

—Ի հարկէ կուզեմ, ժպտաց Վիրժինը—ի՞նչ կայ, մաքրութիւնը լաւ բան է:

Եւ Տալօն այնուհետեւ միշտ մաքուր էր մնում և լաւ հագնւում. Վիրժինի մայրը, Լեոնը և նոյն իսկ Կարապետ աղան դիտողութիւն արին, իսկ Տալօն միշտ պատասխանում էր նրանց թէ ինքն էլ ուզում է մաքուր մնալ, չէ՞ որ ամօթ է տան համար կեղտոտ ծառայ ունենալը:

(Կը շարունակւի)

ՊԱՆԴՈՒՄՏ ՀՈԳԻ

ՍՄԲԱՏ ՇԱՀԱԶԻԶԵԱՆԻ

(Նուէր Ս. Նազարեանցի յիշատակին)

Հողի կապանքից հոգին ազատուած,
Երկնքի անվերջ տարածութեան մէջ
Թռչում էր ուրախ, նրան գրկաբաց
Ողջունում էին աստղերը անշէջ:

Եւ քերովբէներ այնտեղ վեցթեան
Հանդիպում էին խնկով, բուրվառով,
Յանկարծ ցոլացաւ կոյճակի նման
Աթոռն սկեղէն, լի գոհարներով:

Հանգիստ էր տիրում մշտնջենաւոր
Մարտիրոսների օթեաններում.
Եւ սրանց գլխին պըսակ փառաւոր,
Ինչպէս արեւելք, հրափայլ շողշողում:

Սահում էր այնտեղ և կենդանի ջուր,
Ինչպէս երեխի արտասուք մաքուր.
Եւ դրախտահաւն թփերի միջին
Սաղմոս էր ասում Ամենակալին:

Այսքան կախարդիչ, հրաշալի պատկեր
Ո՛չ մի հողեղէն, մի մահկանացու

Իւր կենդանութեամբ երբէք տեսած չէր,
Եւ ոչ մեծութիւն զգացել Ասործու:

Եւ մտաւ Հոգին խոստացած աշխարհ,
Ուր մեր աշխարհի ո՛չ Հոգս կայ, ո՛չ վիշտ.
Ուր մեծ ու փոքրը միմեանց հաւասար,
Եւ Ազօնայի ¹⁾ ներկայ նոցա միշտ:

Եւ տխրեց Հոգին հողեղէն մարդու,
Նա չընտելացաւ Դրախտի վարդերին.
Ուզում էր թողնել վիճակն կենսատու,
Ուզում էր ասել իւր հըրեշտակին՝

«Թող ինձ, թող գնամ դարձեալ այն կայանք,
«Ուր, Հոգս կայ և վիշտ, արցունք, տառապանք
«Ուր քաղցրութեան հետ կայ և՛ դառն բաժակ,
«Ուր օձ է սողում և՛ վարդենու տակ...

«Սէր ունիմ նրտումս, լսն այս երկնքից.
«Ամփոփել իւր մէջ չէ կարող դըրախտ.
«Խաւար դիշեր է երկինք աստղալից—
«Այնքան լուսաւոր երկրային իմ բախտ:

«Թող ինձ, թող գնամ դարձեալ այն կայանք
Ուր Հոգս կայ և վիշտ, արցունք, տառապանք:

3 աղբիւր 1891 թ. Մոսկա:

¹⁾ Ազօնա կամ Ազօնայի—բառ եբր. հն. Աստուած:

ԿԱՑԻԱ—ԱԴԱՄԻԱՆԻ !? *)

Պ Ե Պ

Ի Լ Ի Ա Ճ Ա Վ Ճ Ա Վ Ա Ձ Է Ի

«Բարեկամիդ երե՛սին պախարակիր,
Յշնամուդ՝ յետևից»

Ի մ ա զ ր ւ ի ռ ա ռ ւ ճ .

(Նարունակութիւն 1)

Չայր բաժանեց:

Ելիսաբէթը մի քիչ խմելուն պէս, շարունակեց նորից կորած խօսքը:

—Այն էի ասում. գիտե՞ք թէ այն գձուձ Նիկողոզն ի՞նչ է արել, սկսել է իր աղախնի հետ սիրահարութիւններ սարքել: Մի անգամ, նոր մութն ընկած միջոցին—այստեղ նա ինչ որ փսփսաց Դարեջանի ականջին—ծառաները նկատել են, գնացել տիկնոջը իմաց են տւել ու այդ խեղճ կինն էլ ուշաթափւել է: Այդպիսի բանե՛ր...

—Ճի՞շդ էք ասում:

—Ձեզ չը թաղիմ, որ այդպէս է եղել, — զրպարտեց Ելիսաբէթը և, իբր թէ Նիկողոզի կնոջ համար ցաւելով, աւելացրեց. ես այն խեղճ կնոջն եմ մեղքանում, թէ չէ գլուխը քարը Նիկողոզին:

*) Երեւոյն լեզուով: (Միթէ մարդ է՝ աղամորդի):

1) Տե՛ս «Մուրճ» № 4:

—Այս ի՞նչ տարսափելի ժամանակների ենք հասել, ձեր ցաւը տանեմ ես,— արտասանեց անկեղծ սրտով Լուարսաբը. հէնց ասես թէ՝ երկրորդ գալուստը վրայ է հասնում. ո՛չ տղամարդու վրայ է տղամարդութիւն եկեւում, ո՛չ կնոջ վրայ՝ կնութիւն: Ուրեմն ի զուր չեն երևում մեզ այն գիսաւոր աստղերը. պարզ է որ մի պատուհաս է պատրաստում մեր զխնի: Ո՞վ է ականջով լսել կամ բերանով պատմել որ մի կին ծեծած լինի տղամարդուն կամ մի ամուսնացած մարդ բաց-աշկարայ այդպիսի բաներ անի: Այժմեան ժամանակումս էլ ամօթ չը կայ:

—Գոնէ այն նզովւածը ծածուկ յարմարեցնէր մի կերպով,— ասաց Դարեջանը:

—Ծածուկ որ յարմարեցնէր՝ էլ ո՞վ բան կ'ասէր,— ընդհատեց նրան Լուարսաբը. միթէ հին ժամանակն էլ չէին պատահում այդպիսի բաներ, միթէ այն ժամանակեայ մարդիկն անմարմին էին, բայց առաջ ամեն բան վարագուրւած էր լինում. գործն այնպէս կը բռնէին, որ ոչ մի մահականացու չէր կարող բան հասկանալ. շատ այդպիսի բաներ են տեղի ունեցել առաջ, բայց դուք լսե՞լ էք մինչև հիմայ մի բան: Ամեն բան այդպէս ծածուկ և խելացի կերպով էր կատարւում, նրա համար որ երեսին ամօթ ունէին: Իսկ հիմայ, դուն ես իմ պարոն, ոչնչից չեն վախենում: Ել նամուս չը կայ, չէ՛, ապականւեց աշխարհքը:

—Ճիշտ երկրորդ գալստեան նշաններ են զրանք,— աւելացրեց Դարեջանը:

—Ճիշտ: Ահա՛ թէ էլի ի՞նչ եմ լսել. խնդրեմ այս փոքրիկ աղախնին և ծառային հեռացրէ՛ք այստեղից,— ասաց Ելիսաբէթը:

Աղախնին և ծառային հեռացրին: Ելիսաբէթը աչք ածեց իւր շուրջը և երբ տեսաւ որ ուրիշ ոչ ոք չրկայ՝ մօտիկ նստեց: Լուարսաբն ականջները սրեց ու մօտ քաշեց, Դարեջանն էլ ականջի մօտից լէշաքն հեռացրեց, որ լաւ լսի:

Ելիսաբէթը կամաց ձայնով սկսեց:

—Յիշո՞ւմ էք որ սրանից մի քիչ առաջ գիսաւոր աստղ երևաց:

—Այո՛, այո՛,— ձայն տւին միաբերան մարդ ու կին:

—Այն էլ լսե՞լ էք որ այդ օրը վիշապն ընկել է արևի յետուից:

—Այո՛, այո՛, լսեցինք,—վրայ բերին սարսափելով մարդ ու կին։

—Այդ գիսաւոր աստղի ու վիշապի մասին հայոց տէրտէրները բաց են արել իրանց Կարաբաղինը և ասել թէ—նա այստեղ իւր ձայնն աւելի ցածացրեց—ճորտերին պէտք է ազատեն թաւադի-որդիների ձեռքից։

—Այ՛, քեզ, Լուարսաբ,—գոռաց գոյնը նետած Լուարսաբը—այդ ի՞նչ ասացիր, ի՞նչ։ չէ՞ որ ասում էի ձեզ, թէ պէտք է ջրհեղեղ գալ։ Ահա՛ ձեզ Աստծու բարկութիւնը, բոլորը մեր մեղքերիցն է։ Իմ հօր Զաալի հոգին վկայ, որ կ'երթամ այդ ձեր Զաքարիայի կնոջն էլ, Լեոնին էլ ու Նիկոլին էլ ոտիս տակը կը տորեմ։ այս բո-լո՛րը նրանց արածն է։ Աշխարհը գլխիս կը հաւաքեմ և նրանց տնով տեղով տեղահան կ'անեմ։ Թո՛ղ էլի սալերը վարձով տա՛ն։

—Ինչո՞ւ ես այդպէս շարանում, հոգուդ մեռնիմ,—ձայն տւեց Լուարսաբին իւր կինը —ի՞նչպէս ես դու հաւատում հայոց Կարաբաղինին։ Հերոս չէ, միւս տարի էլ ասում էին իբր թէ այն եզի պո-ղերից մէկը, որոնց վրայ երկիրս պահւում է, կոտորել է ու աշխարհը պէտք է շուռ գար, բայց սուտ դուրս եկաւ։ Գարեջեցի զրբացն ասել էր թէ ոչ պոզն էր կոտորել և ոչ ոչինչ։

—Ուղի՛ղ, այդ բոլորովին միտս չ'եկաւ,—ասաց՝ արդէն բաւա-կան սիրտ առած՝ Լուարսաբը—հնարովի բան կը լինի։ Մի տեսէ՛ք, թէ Աստուած կը սիրէք. ո՞վ կարող է թագաւորի շնորհածը՝ հայոց Կարաբաղինի խօսքով ինձանից յետ խլել։ Դեռ այդ էլ մի կողմը. էլ ի՛նչ թաւադի-որդիք կը լինենք թէ որ ճորտեր չենք ունենաց. ոչ թէ Կարաբաղումը, այլ Սողոմոն իմաստունի գրքումն էլ որ լինէր՝ չէի հաւատալ։ Եւ ի՞նչ հաւատալու բան է։

—Ի հարկէ հաւատալու բան չէ, բայց որ գիւղացիների մէջ մի այդպիսի ձայն է ընկել, վատ է, ձեր արւը,—ասաց Ելիսաբէթը։

—Զայն է ընկել, չէ մի՛ Թաթբարիձէ լինելս էլ պէտք է արգելեն։ Հերոս էլ էին ասում թէ այն կեանքումը թաւադները ճորտերի են փոխւում ու ճորտերը թաւադների, բայց—մեռնե՛մ Աստծուն, բանից դուրս եկաւ որ այնտեղ էլ պարոնը պարոն է և ճորտը՝ ճորտ, ինչպէս որ այստեղ։ Անգլիայի թագաւորը մի նամակ է վայր գցել այնտեղից Ֆրանսիայի թագաւորին. «Մի՛ վախենաք, ասում է, թէ՛ ես և թէ՛ իմ մեծ պաշտօնեաներս, ասում է, այստեղ աւելի մեծ»

պատուի մէջն ենք քան թէ այդտեղ: Մի՛ հաւատաք ինչ որ այդտեղ հաշոււմ են, ասոււմ է:

—Ինչ ասել կուզի, որ այդպէս կը լինի, պարոնութիւնն ու ճորտութիւնը ինքն Աստուածն է հաստատել, մի՞թէ էլի ինքը յետ կը քանդէ. մեռնե՛մ Աստծու ողորմութեանը, — ասաց Դարեջանը:

—Աւետարանումը գրած է թէ «Աստծունը Աստծուն և կայսրինը՝ կայսրին»։ Կայսրները մենք ենք, — աւելացրեց Ելիսաբէթը:

—Ճշմարիտ խօսք է, իմ հարս, ո՞վ կարող է՞ Աւետարանի խօսքի դէմ գնալ, — ձայն տուց Դարեջանը:

—Ո՛չ ոք, ձեր արևը, — հաստատեց Ելիսաբէթն ու վեր կացաւ տուն գնալու, մնաք բարով ասելով:

—Երթաք բարո՛վ, իմ հարս: Բայց տղերանց մէջ լուր տարածել տէք, թէ սուտ է, — խրատեց Լուարսաբը:

—Դուք էլ որ նոյնն անէք՝ վատ չի լինի. շինական մարդիկ են, սըտին էլ ու ճշտին էլ զրանք շուտ կը հաւատան: Մէկ էլ մնաք բարով ասաց ու հեռացաւ Ելիսաբէթը ուղեկցութեամբ իր սրտապակաս աղախնի:

—Տէ՛ր Աստուած, ի՛նչ ստախօս է, ի՛նչ լեզւանի է... ասաց Դարեջանը իւր մարդուն Ելիսաբէթի մասին:

—Այն ի՛չպէս հնարեց, թէ Աստուած կըսիրես, «ճորտերին պէտք է ազատեն, ասոււմ է, մեր ձեռքից», — վրայ բերեց Լուարսաբը:

—Եւ դու էլ իսկոյն հաւատացիր:

—Ասոււմ է Կարիբադնի մէջն են կարգացել, արի՛ ու մի՛ հաւատա: Բայց բոլորովին միտս չ'եկաւ, Աստուած վկայ, որ Դարեջեցի գրեացը շատ անդամ է սուտ հանել հայոց Կարաբադնին:

—Հապա ուշքդ ո՞րտեղ էր:

—Ե՛հ, օրհնւած, այստեղ էր, բայց միտս չ'եկաւ: Ել զրանից աւել ինչ կ'ուզէի. եթէ ամեն բան, ինչոր լսել եմ, միտս պահելիս լինէի. Սողոմոն իմաստուն դարձած կը լինէի: Բայց այդ էլ մի կողմ կենաց. աշխարհումս հազար և մէկ ստոանայական բաներ կան, կարելի է դա էլ նրանցից մէկը լինի: Ի՛նչեր չեն կարող պատահել այս մեղաւոր աշխարհում մեր մեղքերից: Կարելի է այդ էլ պատահի, բայց զգուշութիւնն էլ վատ բան չէ. արի՛ ձայն զցենք թէ սուտ է:

—Ի հարկէ վատ չի լինի, մեզ զրանից ի՞նչ փնտս կը լինի:

—Ամենևին, քո արևը: Ես իսկոյն Դաթօյին կը կանչեմ և կ'ասեմ: Դաթօ', Դաթօ'—գոռաց պարոնը:

—Համէ', լսեց հեռու տեղից Դաթօյի ձայնը—ա՛յս բոպէիս:

Մի քիչ յետոյ Դաթօն եկաւ և հարցրեց:

—Ի՞նչ էք հրամայում:

—Այն որ, ասում են թէ իբր ճորտերին պէտք է մեր ձեռքից ազատեն՝ սուտ է: Լսո՞ւմ ես թէ չէ՞: Ամենքին ասա՛ որ սուտ է: Թագաւորը նամակ է գրել, ասում է թէ «կը խեղդեմ ով որ մտքովն այդպիսի բան կ'անցկացնի»:

Հասկացա՞ր:

—Հասկացայ. ցաւդ տանեմ,—պատասխանեց ծառան. ո՞վ է այդպիսի բան մտածում. մի քանի անշնորհք ծառայ—աղախին դուրս են տւել, ո՞վ է նրանց հաւատ ընծայողը: Այդպիսի չնչին մարդկանց խօսքերն ի՞նչ նշանակութիւն ունեն. կը հաչան, կը հաչան և էլի կը լռեն:

—Ուրիշ տեղ էլ այդպէս խօսի՛ր, սիրելի Դաթօ: Կամ մի՞թէ ձեզ համար լաւ կը լինի, որ մեզ չունենաք:

—Թշնամիդ աչնպէս չը լինի, ցաւդ տանեմ, ինչոր մենք պիտի լինենք:

—Ինչ որ էլ լինի՝ չէ՞ որ էլի հօր նման էինք ձեզ նայում:

—Ի հարկէ, ցաւդ տանեմ, ուղիղ դուք հայր էք և մենք էլ ձեր որդիքը: Ճիշտ է, մի մի անգամ բարկանում էք մեզ վրայ, անպատուում էք, խլում էք—բայց ի՞նչ փնտս. չէ՞ որ այդ ամենը դարձեալ մեր լաւութեան համար էք անում. մի՞թէ հայրը որդու վրայ չի բարկանայ:

—Ի հարկէ կը բարկանայ, բայց էլի որդին որդի է, հայրը՝ հայր:

—Ճիշտ էք հրամայում: Ուրիշները այդքանը չեն ըմբռնում, ասում են «ինչ որ մերն է, պէտք է մերը լինի, պարոնն ի՞նչու պէտք է խլի մեզանից»: Բայց խելքներն այնքան չէ կտրում, որ եթէ պարոնը մի բան խլում է, այդ էլի նրանց լաւութեան համար է անում: Չէ՞ դուք լաւ գիտէք որ զիւզացին յիմար կը լինի:

—Ի հարկէ յիմար է,—մէջ մտաւ Դարեջանը. հապա պարոնն էլ ի՞նչու համար է որ չը յանդիմանէ և չը խլէ: Դեռ այդ էլ մի կողմը դնենք. օտարը ի՞նչ է խլում, էլի իւր պարոնն է խլում:

— Ճիշտ էք հրամայում. հայր է, օտարը ի՞նչու կը լինի, — աւելացրեց սատանայական խորամանկութեամբ Դաթօն:

— Մեծ և փոքրութիւն ո՞րտեղ չը կայ, — ասաց Լուարսաբը: Ուզում ես հէնց մատերիդ նայիր. մէկը մեծ է, միւսը փոքր: Ի՞նչու: Նրա համար որ Աստուած այնպէս է ստեղծել. մեծ և փոքրութիւն պէտք է ամեն տեղ լինի: Հապա նայի՛ր մատերիդ:

— Մի՞թէ առաջ էլ չեմ նայել, ցաւդ տանեմ, մեծ մատ էլ կայ, փոքր էլ, բայց օրհնելի Աստծու դատաստանը. այնպէս է ստեղծել որ նրանք միմեանց չը խանգարեն, — ասաց նենգաւոր Դաթօն:

— Ի հարկէ ամեն տեղ կայ մեծ ու փոքր, մի՞թէ կարելի է որ մեր մէջ էլ չը լինի: Կամ ի՞նչ հաւատալու բան է դա, — ասաց Լուարսաբը, առանց Դաթօյի միտքն հասկանալու:

— Սրդէն ում զլխումը որ ուղեղ կայ, ցաւդ տանեմ, չի հաւատում, իսկ անուղեղներն ասում են թէ ճիշտ է:

— Ի՞նչպէս թէ ճիշտ է, — ճւաց Դարեջանը. մենք ի՞նչ վնաս ենք տւել թագաւորին որ ճորտերը յետ խլի մեզանից. կամ դուք ի՞նչ օղուտ էք տւել նրան՝ որ ձեզ ազատէ: Ի՞նչու այսքանն էլ չէք մտածում:

— Ասում են, ձեր ցաւը տանեմ, իբր թէ խելօք մարդիկը գրել են թէ աշխարհի համար լաւ կը լինի այդ: Բայց երևի սուտ են ասում:

— Ի հարկէ, սո՛ւտ է, — դուռաց Լուարսաբը. ո՞ր խելօք մարդը կ'ասէր այդ, եթէ միայն Յուդայի բաժինը չը լինէր:

— Ա՛յ. հողս այդպիսի խելօք մարդու զլխին, — ասաց և շանչեց Դարեջանը:

— Թէ որ ճիշտ է, գիտե՞ս զարեջեցի գրբացն ի՞նչ է ասել, — հարցրեց Լուարսաբը:

— Ձէ, ցաւդ տանեմ, ի՞նչ է ասել:

— Այն որ՝ սուտ է, ասում է:

— Հիմա՞ արի՛ ու այդպիսի մի իմաստուն մարդուն մի հաւատա, — աւելացրեց Դարեջանը:

— Այդ ես առաջ էլ գիտէի, ցաւդ տանեմ, որ սուտ է. ի՞նչ պէտք է լինի մեր վիճակը առանց տիրոջ. գիւղացիք մի առած ունեն թէ անտէր եկեղեցուն սատանաները տէրութիւն կանեն:

Մեզ էլ նոյնը կը պատահի: Հիմա էլ մեզ այնպէս են համոզում թէ թաւաղների համար էլ, գիւղացիների համար էլ ու աշխարհքի համար էլ լաւ կը լինի, թէ չէ այլապէս ո՞վ կը հաւատար զրանց:

— Թէ որ ես չը պէտք է լինեմ՝ թող աշխարհքը հէնց հիմքից կործանւի և Բողբէլի աւաճի նման Վթող քարը քարի վրայ չը մնայ, — ասաց Լուարսաբը. «աշխարհքի համար լաւ կը լինի» ասո՛, թէ ես և դու չենք լինի՝ աշխարհքն ի՞նչներիս է պէտք, թո՛ղ ջանը դուրս գայ: Այնպէ՞ս չէ, Դաթօ՛:

— Այնպէս է ցաւդ տանեմ, բոլորն էլ սուտ է: Ես մշակներին ասացի թէ սուտ է, բայց չը հաւատացին ինձ:

— Դու նրանց ասա թէ պարոնը իր բերանով հրամայել է ինձ, այն ժամանակն էլ չեն հաւատաց, — հրամայեց Լուարսաբը:

— Այն ժամանակ էլ ի՞նչ խօսք կունենան, ցաւդ տանեմ:

— Այդպէս, իմ Դաթօ, ամենքին ասա՛:

— Պարո՞ն ես, ուրեմն գնա՛մ:

— Գնա՛:

Դաթօն գնաց. ո՞վ դիտէ սրտումն ինչպէս էր ծիծաղում այդ շողոքորթ ստրուկը:

— Զէ՛, նա սրտով հաւատաց որ սուտ է, — ասաց Դարեջանը Դաթօյի գնալուց յետոյ:

— Խեղօք մարդ է, կը հաւատաց, — պատասխանեց Լուարսաբը:

Կ

— Այսօր ի՞նչ ունենք ընթրիքի համար, — հարցրեց մի երեկոյ Լուարսաբը իւր կողակցին՝ հաւերի թառ նստելու միջոցին. Դարեջան, չե՞ս լսում, ա՛յ կին. այս գիշեր ի՞նչ պէտք է ուտենք:

— Ի՞նչպէս թէ Վի՛նչ պէտք է ուտենք, ցաւդ տանի Դարեջանը. Աստծու ողորմութիւնը միշտ առատ է մեզ վրայ, — պատասխանեց Դարեջանը:

— Բայց և այնպէ՞ս:

— Քաշից մնացած լաւ սառը տաւարի միս, խոզի սուկի լաւ...

Ելի պէտք է շարունակէր թւելը, սակայն խոզի սուկով չափշտակւած Լուարսաբը ընդհատեց նրան:

—Ո՛ւհ, ո՛ւհ, ո՛ւհ, քո արևը գիտենայ որ այդ խոզի սուկին ինչ ուզես արժէ։ Ուրի՞շ. ես այս զիշեր, ինչպէս նկատում եմ, շատ լաւ ակորժակ ունեմ։

—Ձուրգէլ էլ ունենք, մեզանից զինի առնող մարդու ընծան է. այնպէս է որ՝ իւզ է ծորում վրայից։

—Ո՛ւհ, այդ էլ լաւ է։ Ուրի՞շ։

—Պանիր, հաց և լաւ սիրտ։

—Ոչ էլ այդ է վատ, քո արևը. մեր ընթրիքի նման ընթրիք թագաւորն էլ չի ունենայ։

Զիբուլը լցրեց մեր ակորժակը—բաց պարոնը և, մինչև որ ցանկալի ընթրիքը կը բերէին, անհամբերութեամբ յետ և առաջ էր դնում փոքրիկ սենեակում։ Մի մի անգամ, իւր մտքի հետ ընկած, բացականչում էր՝ «խոզի սուկի՛», քո արևը որ լա՛ւն է։

Ընթրիքն էլ, ինչպէս և ամեն բան այս անցաւոր աշխարհում, իւր վերջն էր ունենում։ Կուշտ ու թախտի վրայ գլորւող Լուարսաբը սկսում էր այնուհետև միւս օրւան հոգսը քաշել։ Ի հարկէ, օջախի մարդ էր։

—Այս էլ ընթրիքը, Աստծու ողորմութեամբ, դրոյցինք. հիմայ էգուցւայ համար մտածենք։ Եգուց էլ մեզ ուտել է հարկաւոր, օրհնած Աստուածը այդպէս է ստեղծել մարդուս։ Եգուց ի՞նչ ունենք ուտելու։

—Եգո՛ւց... մտքի մէջ ընկաւ Դարեջանը, կարծես նրան մի դժւար գուշակելու բան յանձնեցին. Էգո՛ւց. կա՛ց որ միտս բերեմ... Էգո՛ւց... արտալի հետ ինչպէ՞ս ես։

—Ո՛ւհ, ուհ, քո արևը, լաւ բան մտածեցիր։ Արտալի հե՛տ—հոգի՛ս կը տամ, հոգի՛ս,—պատասխանեց որկրամոլութիւնից գժւած թաւաղը. ապրե՛ս, Դարեջան։ Մի լաւ շաղ արտալայ, մեր Թեղօի ձեռքով եփած և վրան սխտոր արած՝ մի թագաւորութիւն արժէ՝ ես ու իմ Աստուած։ Այդ շատ լաւ էր։ Ուրի՞շ. միայն այդ ո՛ւմն է հերիք։

—Մի լաւ չխրթմա՞ց,—հարցրեց գայթակեցնող ժպիտով իշխանուհին։

—Զխրթմա՞ց... հը, չխրթմա՞ց... չէ, սիրելիս, բոգբաշն աւելի լաւ կը լինի,—վրայ բերեց մի փոքր մտածելուց յետոյ Լուարսաբը։

—Վա՛... թթու սալորով պատրաստւած բոգբա՞շը:

Մի այնպիսի ձայնով արտասանեց այդ Լուարսաբը, որ կարծես զարմանում էր, թէ ինչպէս մի այդպիսի հասարակ ճշմարտութիւն անհասկանալի էր այն խելօք կնոջ համար:

—Ի՞նչ մեռնես, Լուարսաբ, որ երբէք մի լաւ պատրաստւած չխրթմին բոգբաշը չի կարող հասնել:

—Վա՛... աւելի մեծ զարմանքով բղաւեց Լուարսաբը. —սալորով շինւած բոգբաշին ուզում ես չխրթման գերազանել տա՞լ... խելքիդ չես երևում, ա՛ կին: Դեռ հասարակ բոգբաշով չափիր թէ ի՞նչ պէտք է լինի սալորով բոգբաշը... Ի՞նչ ես ասում, ի՞նչ. չաղ բոգբաշի մէջ թաթախւած մի հացի կտոր՝ մի պղինձ չխրթմի հետ չեմ փոխի. և այս այսպէս լինելուց յետոյ դու ուզում ես ինձ հաւատացնել թէ չխրթման աւելի լա՞ւ է: Ուրեմն ես է՛լ տղամարդ չեմ եղել, զլխարկ չեմ ունեցել ծածկած:

—Ի՞նչ քո ասածի մարդ ես. մի բան որ ասես՝ խօ էլ յետ չես կանգնի՞ր, —ասաց մի քիչ նեղացած Դարեջանը իւր մարդուն:

—Ի հարկէ, մարդն այդպէս պէտք է լինի: Մի՞թէ աւելի լաւն է ով որ մի օր մի բան է ասում, միւս օր ուրիշ, —պատասխանեց Լուարսաբը՝ ձեռքը կողքին բռնելով ու մի յաղթանակը տարած մարդու նման հպարտ տեսք ընդունելով:

Դարեջանն զգաց, որ Լուարսաբը վարպետութեամբ տարաւ իւր գործը ու ամօթից խօսքը կտուրը գցեց:

—Ուրեմն դու բոգբաշն ե՞ս գերադասում:

—Գերադասում եմ:

—Ուրեմն դու բերանիդ մէջ համ չես ունեցել, —ասաց բաւական վրդովւած սրտով Դարեջանը:

Լուարսաբը յուզեց, բայց իրան զսպեց ու մի քիչ նեղացած պատասխանեց:

—Դո՛ւ չես ունեցել, որ չխրթման ես գերադասում:

—Հապա ի՞նչեր ես դուրս տալիս, —հիմաջ արդէն բարկացաւ Դարեջանը. —ի՞նչպէս կարող է բոգբաշը չխրթմից լաւը լինել, քանի որ չխրթման մտաբերելիս՝ բերանիս ջուրը գնում է, մանաւանդ եթէ քաղցած եմ լինում. իսկ բոգբաշը մտաբերելիս՝ այդպէս չի լինում. ուրեմն չխրթման աւելի լաւն է: Հիմա՞ էլ չես ընդունի:

Այնպիսի մի ինքնավստահ ու մաղձոտ կերպով արտասանեց այդ իշխանուհին, որ կարծես թէ ուզում լինէր ասել. «այ՛ց չիմար, ես այսպիսի մի ապացոյց ունիմ և դու էլի քո էջն ես քշո՞ւմ»:

Սակայն նորա հակառակորդն էլ այնքան կարճամիտ չէր որ չը կարողանար այդ ապացոյցը մի աւելի զօրեղ ապացոյցով քանդել: Ճիշդ է, սկզբում շատ մտածեց, իսկոյն չը յարմարացրեց որ մի բան ասէր, բայց մի քիչ յետոյ—Աստծու ողորմութիւնը լինի ձեզ վրայ—կարիշ Լուարսաբը նրան յաղթեց:

—Դու հաստատ ես այդ խօսքիդ,—հարցրեց նա առաջ ու ոտքի կանգնեց:

—Հաստատ:

—Դէ, լաւ. թէ որ չխրթման քո քաղցած ժամանակն է բերանիդ ջուրը թափում, բողբաշը—իմ կուշտ ժամանակն էլ: Վերցնենք հէնց հիմայ: Ես խօս այս գիշեր քեզանից աւելի եմ կերել, բայց որ միտս եմ բերում մէջը հաց բրդած բողբաշով լի ամանը՝ (մաթլաբայ) վրան մի ոլոգ (կանճի)... Ի՞նչ ես ասում, այ՛ց կին, ես մեռնեմ թէ դու բան լինես հասկանում. բողբաշը արգանակ ունեցող կերակուրների թագաւորն է, ինչպէս որ թարթը՝ ձկների: Դու ի՞նչ գիտես, կին ես:

—Հապա ինչպէ՞ս պէտք է մարդ քեզ հաւատ ընծայի, որ այդքանն էլ չես իմացել. օրագո՛ւնն է ձկների թագաւոր ընդունւած և ոչ թէ թա՛րթը... դու միշտ այդպէս սուտ ես խօսում,—ծաղրեց իշխանուհին՝ ուրախացած նրա սուտը բռնելու վրայ:

Լուարսաբը մի քիչ ամաչեց, բայց չէր կամենում այդ ցոյց տալ. նա մտածեց մի կողմ դնել պատւի խնդիրը ու պնդել թէ թարթն է թագուհին:

—Հիմայ դորա համար կը խօսացնես. թա՛րթն է, ասացի:

—Օրագո՛ւնն է:

—Դլուխս չը մեռնի որ թարթն է. հիմայ էլ չե՞ս հաւատայ:

—Օրագո՛ւնն է, օրագուլը,—բղաւեց իշխանուհին:

—Ո՞րտեղից գիտես թէ օրագուլն է:

—Իսկ դո՞ւ որտեղից գիտես թէ թարթն է:

Այդ հարցը Լուարսաբին կապեց: Եւ այն էլ ինչպէ՛ս. էլ բաց անել չէր կարելի: Շատ էր կամենում մի բան հնարել, ուզում էր

մինչև անգամ ասել թէ Վարաբադինումն է գրած, բայց չիշելով թէ Ղարեջանը նրանից աւելի կարգացած է, չը վտահացաւ:

Ինչպէս ինքը ընթերցողն էլ գիտէ, Ղարեջանը իսկօք կին էր. հէնց որ նկատեց որ Լուարսաբը լաւ պատասխան չը կարողացաւ յարմարեցնել, աւելի ինքնահաւան կերպով վրայ տւեց՝

—Ասա՛ որտեղից գիտես: Ասա՛ էլի: Ինչ որ չը գիտես՝ մի՛ ասիլ: Դէ, հիմայ ասա՛. չխրթման աւելի լաւ չէ՞:

Ղարեջանը միտք արեց որ եթէ Լուարսաբը կոտորելու լինէր՝ միմիայն այդ կաշկանդւած դրութեան մէջ կարող էր կոտորել. միմիայն այդպիսի նեղ դրութեան մէջ կարող էր նրան չխրթմի առաւելութիւնը ընդունել տալ և ոչ ուրիշ ժամանակ. այդ պատճառով նա այդպէս յանկարծակի նորից չխրթմի հարցը բարձրացրեց:

Մեր Լուարսաբը նեղն ընկաւ, ընթերցող. կանգնած էր գլուխը կախ արած, ինչպէս մի փոքր երեխայ, որին լռնում են շաքարի գողութեան մէջ: Չը գիտէր թէ ի՞նչ անէր: Ձգում էր որ կինը նրան կապեց, յաղթեց, բայց յանձն չէր առնում խոստովանել. կարելի է մի ուրիշ անգամ նա զիջանէր, բայց հիմայ. քանի որ հանաքի բան չը կար և երկունսն էլ ջգրու վրայ էին կանգնած՝ զիջանելը նա ստորութիւն էր համարում: Ճիշտ է, պատահում էր այնպիսի բոլորէ էլ, երբ նա ինքն իրան ջախջախւած էր տեսնում և պատրաստում էր չխրթմի առաւելութիւնը ընդունել, սակայն յանկարծ նա ներկայացնում էր իւր աչքի առաջ տաք տաք բողբաշի ամանը՝ մէջը լոշ բրդած ու վրան զառան ոլոգ դրւած. այդ նորա հոգուն ոյժ էր տալիս, սիրաբ պնդացնում և նա մոռանում էր ամօթն էլ, յաղթւելն էլ ու յաղթելն էլ: Այդ բանի տպաւորութեան տակ նա արտասանեց այս ուժեղ խօսքերը.

—Նս չը գիտեմ, կարելի է որ ճիշտ օրագուլը լինի ընդունւած ձկների թագաւոր, բայց բողբաշը չխրթմից զերադաս է:

—Չխրթմա՛ն, ա՛ մարդ:

—Իողբա՛շը, ա՛ կին:

—Եհ, այս էլ դարձաւ փոքր ինչ առաջւայ բանը. սուտ ես ու չես կոտորում, — ասաց յանդիմանութեամբ Ղարեջանը:

—Դո՛ւ ես սուտը:

--Տե՛ս. դու չէի՞ր ասում թէ թարթն է:

— Ես այդ չեմ պսել, ստեղ Լուարսաբը և իւր ասածը կնոջը վերագրեց. ես ասացի թէ օրագուլն է թագաւոր:

— Տեսէ՛ք, տեսէ՛ք, թէ Աստուած կը սիրէք... այս ի՞նչ հնարեց,— բացականչեց արդէն լաւ վրդովւած Դարեջանը:

— Այնքան բղաւիր, ինչքան որ ուզես, — ասաց ցած ձայնով Լուարսաբը ու վերկացաւ դուրս գնալու: Դրանը հասնելով, մի անգամ էլ ասաց:

— Ես ասացի թէ օրագուլը: Այս ասելն ու նրա դուրս գնալը մէկ եղաւ:

— Ստի՛ն... զոռաց կատաղած կինը, որը բոլորովին համբերութիւնից դուրս եկաւ այդ անսովոր վարմունքից. խռով կենաց քեզ սուրբ Գէորգն ու Նեկրէսի Մայր-Աստուածածինը:

Ել չը գիտեմ՝ Լուարսաբը ուշադրութիւն չը դարձրեց թէ չը լսեց, գիտեմ միայն որ այդ անէծքը Դարեջանը մարսեց:

Յաճախ մինչև կէս-գիշեր մարդ ու կին՝ տաքացած ու բորբոքւած՝ այդպիսի խոր-խոր մտքեր էին հաստատում: «Այսօր ի՞նչ պէտք է ուտենք» — կ'ասէին առաւօտները: «Վաղն ի՞նչ պէտք է ուտենք» — կ'ասէին երեկոները: Այդ էր նրանց հոգու կրթութիւնը, մտքի վարժութիւնն ու կարծիքների փոխանակութիւնը:

Դրանք ի՞նչ գիտէին թէ որքան էին բարկացնում Աստուծոն իրանց վարմունքով: Աստուծոն, որ փչել էր իւր հոգին դրանց մէջ:

— Ի՞նչ, ե՞ս եմ բարկացնում Աստուծոն, — կը հարցնէր ձեզ Լուարսաբը զարմանքով. Ժամ-պատարագից ես չեմ պակասում, մարդ չեմ սպանել ու մարդուց բան զողացել, — ի՞նչով եմ բարկացնում Աստուծոն:

Ճիշտ ես ասում, իմ Լուարսաբ. դու մարդ չես սպանել, մարդուց բան չես զողացել — մի խօսքով — ինչոր պէտք է չ'անէիր՝ չես արել — այդ էլ լաւ է. ո՞նչից դա էլ լաւ է: Բայց հիմա ես քեզ մի հարց եմ տալիս. դու արե՞ր ես այն, ինչոր պէտք է անէիր:

— Այո՛, կը պատասխանես դու. խմել եմ ու կերել, քաղցած ոչ մի օր չեմ մնացել:

Մի՞թէ այդ պատասխանն է: Ասում ես թէ Ժամ — պատարագից յետ չես մնում. ի՞նչ օգուտ դրանից: Այնտեղ դու ամեն օր լսում ես խաչեալ Քրիստոսի խօսքերը թէ ճշգիր կատարեալ ինչպէս քո

հայրը երկնքումն: Քո կեանքումդ զոնէ մի բոպէ հոգացե՛ր էս աշխարհին: ո՛չ, չես հոգացել: Դու ապրում ես, որ ուտես ու խմես և ոչ թէ ուտում—խմում՝ որ ապրես, այսինքն աշխատես լինել կատարեալ, ինչպէս հայրը երկնքում:

VI

Քսան տարի առաջ էր, որ Լուարսաբն ու Դարեջանը լծեցան մի լծի մէջ: Մի զարմանալի բան էր դրանց պսակելը: Դեռ ևս Լուարսաբը բաժանւած չէր իւր եղբայր Դաւթից, երբոր քսան տարեկան դարձաւ ու կամեցաւ կին ուզել: Շատ էր ուզում, բայց չը գիտէր թէ ում աղջիկն առնէր. հա՛մ ուզում էր որ հաբուստ լինի, հա՛մ լաւ ընտանիքի որդի, հա՛մ էլ արեւ չը տեսած: Այդ յատկութիւնների տէր աղջիկները մեզ մօտ հազւագիւտ են: Լուարսաբն առաջ այս և այն կողմ աչք ածեց, բայց, ոչ մի տեղ չը գտնելով, միտքը դրեց կարել տալ լաճն բուզմենտով (ոսկի թել) չուխայ, բուզմենտով լաճն շալւար, ձեռք վերցնել մի երկու հարիւր մանէթից ու գնայ քաղաք, մի քանի անգամ անց ու դարձ անել փողոցէ փողոց դրօշկով այն յոյսով, որ գուցէ բազում ժպտայ նրան ու հանդիպի մի հարուստ և լաւ ազգի-որդի աղջկան, իսկ հակառակ դէպքում՝ հայ աղջկերքը խօս անտեղ են ու անտեղ, մի տասը հազար մանէթ էլ հետները կը բերեն: Աերջն իմացաւ, որ այլ ևս այդքան հեռու գնալու պէտք չը կար. թաւադ Գձեւաձէն (լաւ ազգի և պատւական օջախի որդի) ունի մի արեւ չը տեսած մարդու տալու աղջիկ, որի մէջքին կարւած է նաղդ երկու հարիւր սպիտակ թուման: Լուարսաբի սիրտն սկսեց թրպրտալ, կողքումը նստեց ու ամբողջ օր մինչև երեկոյ զմայլում էր իւր ապագայ երջանկութեան վրայ, բայց չը գիտեր թէ ինչպէս գլուխ բերէր գործը: Աստուած օգնեց նրան և մի օր մի միջիմարդ յայտնեց:

Միջիմարդը, որ ուղարկւած էր Գձեւաձէի կողմից, մի պառաւ, ծանրաբարոյ, աղքատ ու այրի կին էր, որ իւր մարդու մեռնելուց յետոյ պահում էր իւր գլուխը այդ պատուական արհեստով: Դրան օտուտ—կնէինա (օտուտ—իշխանուհի) էին կանչում այն պատճառով, որ դրա ամուսինը մինչև վերջին շունչը աշխատելիս էր եղել իշխա-

նութիւն հաստատել իւր վրայ, բայց չէր յաջողել: Մենք էլ այդպէս կանչենք:

Խիստ հմուտ ստախոսի անուն ունէր հանած իշխանների մէջ այդ սուտ—իշխանութիւն. ասում էին թէ այդպիսի փորձառու միջի մարդ միայն հէնց նա էր ամբողջ երկրագնդի վրայ: Այդ պատճառով էլ նա շատ էր վերցնում ոտի վարձ, բայց ինչոր յանձն էր առնում, յաջողութեամբ գլուխ էր տանում: Գծէլաձէն էլ հէնց դրան էր ընտրել, առաջուց հինգ թուման վճարել ու տանը հինգ էլ խոտացել, երբ որ բանը գլուխ բերի: Թէպէտե Գծէլաձէն էր ուղարկել նրան Լուարսաբի մօտ, բայց փորձած սուտ—իշխանութիւն իւր գլուխն այնպէս երեւցրից, իբր թէ ինքն իրան էր եկել, որպէսզի Լուարսաբին էլ պարսաւորացնի ու մի բան զուրս պոկի:

Այդ պատահեց մի աղետականի տանը, որ պսակում էր և իւր հարսանիքին, ի միջի այլոց, հրաւիրել էր նաև Լուարսաբին: Սուտ—իշխանութիւն այդ ազնականի հօրաքոյրն էր: Հարսանիքի հետեւեալ օրը, ճաշից յետոյ, Լուարսաբը գնաց այգու մի անկիւնու պառկեց: Արեւ մայր էր մտնում, երբոր մէկի ձեռքը դիպաւ նրան ու զարթացրեց ու տեսաւ մի պատուական, տարիքաւոր կին: Իսկոյն թռաւ, կանգնեց ոտի:

—Նստիր, ցաւդ տանեմ, հանգստացիր,—ասաց նրան սուտ—իշխանութիւն—ներողութիւն արեք, ձեր հանգստութիւնը խանդարեցի, բայց յիշելով ձեր մօր համար ունեցած բարեկամութիւնս և խաթրս, պատիւըս ու սէրս, ձեզ համար էլ սիրտս ցաւեց: ...Պուք ահա՛ (ձեռքով ներքև ցոյց տւեց) այսպէս փոքր ձեռքումս էք եղել և խաղացել: Ձեր մայրն ու ես մեծ բարեկամներ էինք, միմեանցից չէինք կարողանում հեռանալ, մեծ սէր էինք տածում զէպի միմեանց. երկու քոյրեր չէն կարող լինել այնպէս իրարու հետ, ինչպէս որ մենք էինք: Ձեր մօրը անշուշտ չէ՞ք յիշում:

—Ո՛չ, ես այն ժամանակ հաղիւ երկու տարեկան եմ եղել,—պտտասիւսնեց Լուարսաբը, որ դեռ ևս չը գիտէր թէ ի՞նչ կայ և ի՞նչ է ուզում նրանից այդ իշխանութիւն:

—Ի հարկէ, չէք յիշի: Այն դժբաղդը երբոր իւր անարատ հոգին յանձնում էր Աստծուն—էլ ի՞նչու պէտք է ես կենդանի մնայի նրանից յետոյ, բայց փառք Աստուծոյ, ո՞վ կարող է նրա

կամքի դէմ գնալ—անարատ հոգին երբ որ յանձնում էր, ևս նրա ոտերի մօտ էի նստած: Ամենքին սենեակից դուրս հանել տւեց, բացի ինձանից: Արծեմ ձեր հայրն այն ժամանակ վախճանւած էր:

—Ո՛հ, նրանից յետոյ մօտ վեց տարի էլ ապրեց, —պատասխանեց նորից Լուարսաբը:

—Իրա՛ւ, ի՛նչպէս մոռացայ, —վրայ բերեց սուտ իշխանուհին, իբր թէ ճիշդ մոռացած լինելով—տեսէ՛ք ի՞նչ է նշանակում ծերութիւն, յիշողութիւնն ինձ դաւաճանեց: Հրամբէք, կենդանի էր: Տեսէ՛ք ինչքան մոռացկոտ եմ. չէ՞ որ խեղճն ինձ ասաց. «քոյր իմ Խորեշան, գիտեմ թէ որքան սէր ունէք կնոջս հետ, գնա՛ ոտերի մօտ նստի՛ր, նրան դուր կը գայ: Ինձ տեսնելը այնքան դուր չի գայ նրան»: Այո՛, սրանք ձեր հօր խօսքերն ևն: Ձեր հայրը մի լրջամիտ ու պատուաւոր մարդ էր, անւանի ու ամենքից յարգւած: Մեծ յարգանք ու ահ էր ազդում ոչ միայն Վրաստանում, այլ և լէզզիների մէջ. մինչև Պաղստան նորա անունը դուրս էր գնացած, ռուսներին էլ մեծ պատիւ էր վայելում: Ի հարկէ ձեր միտը չի լինի, փոքր էիք այն ժամանակ: Հա՛, ի՞նչ էի ասում... հարցրեց Լուարսաբին:

—Որ հօրս անունը մինչև Պաղստան էր հասել, որ ռսներին մեծ պատիւ էր վայելում, —պատասխանեց Լուարսաբը:

—Ձե՛, այդ խօսքիւմ: Ի՛նչի վրայ սկսեցի, մոռացայ, էլ միտս չեմ կարողանում բերել: Ահա՛, սիրելիս, թէ ի՞նչ է նշանակում ծերութիւն. ինչ որ մի րոպէ առաջ խօսում էի, այլ ևս միտս չէ. իսկ ձեր հօր մահը—որ քսան տարւայ դէպք է—միտս չը պահեմ ի՞նչու պէտք է զարմանալի թւայ:

—Տասներկու տարւայ դէպք է, —ուղղեց Լուարսաբը:

—Թէկուզ տասներկու, զարմանալի չէ: Ի՛նչից սկսեցի խօսել... Սուտ իշխանուհին մտածմունքի մէջն ընկաւ, իբր թէ չիմանալով թէ որտեղից էր սկսել: Գիտէր, շա՛տ լաւ գիտէր, բայց մտածում էր, որ այնպէս յարմարեցներ, որ Լուարսաբը չը կարողանար նորա սուտը բռնել, ինչպէս որ բռնեց իւր հօր մահւան մասին: Լուարսաբը կանգնած էր շշկւած, ամենևին չը հասկանալով թէ ինչ նպատակով էր եկել իշխանուհին նորա մօտ:

—Այո՛, իրաւ, —բացականչեց սուտ-իշխանուհին մտածմունքից յետոյ. այն էի ասում թէ երբոր ձեր լուսահոգի մայրը յանձնում

էր Աստծուն իւր անարատ հոգին, ամենքին սենեակից դուրս հանել տւեց բացի ինձանից և երբ որ մենք մենակ մնացինք, նա ասաց ինձ իւր քաղցրահիւն ձայնով. «իմ մտերիմ բարեկամ Խորեշան, ես երկար ապրողը չեմ. գիտեմ որ մեծ է սերգ զէպի ինձ. ահա դու և իմ որբերս, եղիր նրանց մեծը: Այդ որ ասաց՝ (աւա՛ղ Թշուառութեանս) սիրող փղձկաց: Ես էլ հեկեկալով արտասուք էի թափում. շա՛տ լաց եղանք: Յետոյ նա արդէն աւանդեց իւր հրեշտակային հոգին: Ես, մի զլխին-խփածի նման, զժի նման դէս ու դէն էի ընկնում, ամենքը կարծում էին թէ չէի կարող ես տանել այդ կսկիծը և կը խեղագարւեմ: Խի՛ստ էինք սիրում միմեանց և այնպէս էինք միմեանց հետ, կարծես թէ մի մարմին ու մի հոգի ունեցած լինէինք: Զեր մայրն էլ այնպիսի մի կին էր—Աստուած նորա հոգին լուսաւորի՛—այնպիսի մի կին՝ որի առաջ, ամեն մարդ պէտք է ծուներ խոնարհեցնէր: Այսպիսի մի կին էր նա. ո՛ւր են հիմա նորա նմանները. մենք էլ կ'առնէք թէ կա՛նա՞ք ենք... երրորդ օրը հոգին յանձնեցինք՝ քրիստոնէական ծէսով՝ նորա լուսաւոր մարմինը: Բազմաթիւ հոգևորականներ էին հրաւիրւած: Ասում էին թէ ձեր հայրը առաջնորդին էլ էր ուզում հրաւիրել, բայց դրօշկի համար ձեր չէին գտել որ ուղարկէին: Դուք մնացիք պստլիկ որբեր, դուք և Դաւիթը շատ փոքր էիք և ես ձեզ հէնց այն ժամանակից սիրեցի, հէնց այն ժամանակից սիրոս աւելի ձեր կողմն էր քաշում: Զը զիտեմ թէ ինչն էր պատճառը. չէ՞ որ Դաւիթն էլ նրանից էր ծնւած, սակայն դուք ինձ համար բոլորովին ուրիշ էիք: Նրա զուք ինձ չէ՞ք յիշում:

—Ո՛չ, չեմ յիշում:

—Ի հարկէ որ չէք յիշի. դուք երեք տարեկան էիք, որ մարդս—վա՛յ նրա կորցնողին—մեռաւ. այնուհետև ես ոտս տնից դուրս չեմ դրել. ընկած եմ այնպէս անոք, անօգնական, անտէր—այրի: Զը կայ այլ ևս ինձ համար մի մխիթարութիւն, ամբողջ աշխարհն երևում է ինձ սևերի մէջ փաթաթւած: Ներեցէք խնդրեմ, կարելի է ձեր զլուխը ցաւացրի: Խո՛ն, արած. բաղդն ինձ աչքել, խորովել է, դարդերս նորոգւում են: Ել ի՞նչ երկարացնեմ, կարծ. խօսելը լաւ է: Դուք երեք տարեկան կը լինէիք, որ մարդուս կորցրի: Հեռացայ ձնդանից ու այնուհետև այլ ևս չեմ տեսած ձեզ, բայց սրտով էլի

ձեր կողմն էի, ձեր ծանօթներից ով որ պատահէր՝ ձեր վիճակի մասին հարց ու փորձ էի անում: Սրանից մի երեք ամիս առաջ, մի հրեկոց քունս տարել էր. մէկէլ տեսնեմ—խոր քնի ժամանակ—առաջս կանգնեց մի շնորհալի, լուսեղէն, սպիտակ ու օղային հրեշտակ: Երազ եմ պատմում ձեզ, բայց մի երազ, որ մինչև օրս էլ իրական է թւում ինձ: «Խորեշա՛ն, ձայնեց ինձ այն հոգին, ես քո մոտե՛րիմ՝ բարեկամի հոգին եմ, մաքրած ու սպիտակացած»: Նա ձեր մայրն էր. իսկոյն փաթաթեցայ նորա ծնկներին:—«Ծնկներին մի՛ փաթաթւիր, ասաց նա կրկին. ես քեզանից ցաւած եմ. ինչո՞ւ ես բարձի թողի արել իմ Դաւթին և Լուարսաբին: Դաւթին էլի ոչինչ, նա կին է ուզել ու անաւորել, ինչո՞ւ Լուարսաբին տէրութիւն չես անում: Երեք զիշեր իրարու վրայ երևում էր ինձ ու միշտ նոյն բանն ասում: Մշտէս էր, ձեր արևը: Եթէ այդ էլ չը լիներ, արդէն ես ասած ունէի որ ձեզ մայրութիւն անեմ. և ահա՛ այդ օրն արդէն հիմայ հասել է: Դուք դեռ պատանի էք. ձեզ տեսնելուն պէս, իսկոյն զլիսի ընկաց, թէ ի՞նչն էր այն խեղճ աղջկան այնպէս զժւացրել: Մի՞թէ քո թեւ ու թիկունքին, տուփանքին ու խելքին կարող են հասնել Ղարամանի թեւ ու թիկունքը, Տարիէլի տուփանքն ու Գարդանքուշանի խելքը: Աչքս ձեզ զիպցնելուն պէս զլիսի ընկաց թէ ի՞նչն է վառել այն կրակը դժբաղդ աղջկայ սրտում: Դժբաղդ եմ ասում, որովհետև մինչդեռ դուք կարելի է նորա վրայ ամենևին չէք էլ մտածում, նա այնտեղ հալ ու մաշ է լինում:

Լուարսաբի քէֆն եկաւ, գլխարկը ակամայ մի կողքի վրայ կոտրեց, վիզն ոլորեց, ձեռքը քսեց մանր, նոր ծաղկած բեղերին, մէջքն ու թիկունքն ուղղեց: Այնպէս դուրս եկաւ, որ առաջի բերան մի բառ էլ չը գտաւ, որ բան ասէր: Ի հարկէ, դեռ չը գիտէր թէ ո՞վ էր այն աղջիկը, բայց և այնպէս՝ դուր եկաւ:

—Ոչ էլ աղջիկն է պահաս, — սկսեց նորից սուտ — իշխանուհին. ինչպէս որ դու Ղարաման ես, նա էլ քո համեմատ՝ Սալբի Խուրաման ¹⁾ է. ճիշդ Տարիէլ ու Նեստան-Գարեջան ²⁾ կը լինէք, եթէ

¹⁾ Պարսկական մի ընդարձակ հեքիաթի գլխաւոր հերոսներ. նոյն հեքիաթիցն է նաև վերոյիշեալ Գարդանքուշանը:

²⁾ Տասներկուերորդ դարու նշանաւոր «Ալապլիս աղասուանի» (Ապպրի մորթով մարդ) վրաց վէպի հերոսներ: Ծան. թարգ.

եղիւնք միացնենք: Ոչ էլ նորա ազգի ու ծագումի մասին կարող ես բան ասել. նրանց ազգանունը միևնոյն թերթի վրայ է գրւած Մուխրանի իշխանի կողքին: Լաւ աղջիկ, լաւ ազգի որդի, լաւ օջախ ու անւանի ազգականութիւն. մի հօրեղբայրը մայօր է, միւսը գաւառապետ թուրքերի մէջ. փողն էլ նաղդ—էլ ի՞նչ ես ուզում: Եւ այն էլ քո մօր ուղածն է: Այն հրեշտակը երէկ գիշեր էլ եկաւ ու ասաց. «այդ բանը պէտք է անսպառնառ գլուխ բերես»:

—Փող ի՞նչքան կ'ունենայ, հարցրեց Լուարսաբը:

—Երկու հարիւր թուման ունի:

—Նա՞ղդ:

—Բոլորը բաջաղլու ոսկի. տանն ունի, պարկի մէջ կապած:

—Ձը լինի՞ Գձեւաձէնց աղջիկն է:

—Ձեզ ո՞վ ասաց:

—Ես գիտեմ:

—Իսկապէ՞ս:

—Իրտեմ որ նա է. մի՞թէ ես էլ սրտումս չ'ունէի այն աղջկայ պատկերը, — ասաց ու ժպտաց ամօթխածութեամբ այդ խօսքերի վրայ՝ Լուարսաբը:

—Ո՞րտեղից, է՞, մի՞թէ տեսել ես նրան:

—Աչքովս չեմ տեսել, բայց այնպէս գիտեմ:

—Ուրեմն իրաւունք կը տա՞ք, որ ձեր փոխարէն ես խօսեմ: Ի՞նչպէս կ'ուրախանայ այն աղջիկը:

—Թէ չէ հայրը չի՞ ուրախանայ, — ասաց սուտ—իշխանուհու գովքից ուռած Լուարսաբը:

—Ձի ուրախանայ, ձեր արեւը, — դժւարացրեց գործը սուտ—իշխանուհին:

—Ուրեմն նա՞ չէ. ուղարկել քեզ այստեղ:

—Ի՞նչ էք հրամայում. նրանից որ ուղարկւած լինէի՝ արդէն գործը վերջացած կը լինէր, քանի որ դուք էլ սրտաւորւած էք: Բանն էլ այդ է, որ ինքը հայրը շատ հակառակ է դրան:

—Հակառակ է... բացականչեց Լուարսաբը սիրտը ցաւած. այսինքն ինչի՞ս չի հաւանում. ա՞ղգս է նրանից պակաս թէ օջախս: Այսինքն նորա միտքն ի՞նչ է:

—Երևի ձեզ յայտնի է, որ նա մի խիստ մարդ է:

—Ուրեմն չի՞ համաձայնի:

—Ի՞նչպէս չի համաձայնի, բայց մեծ աշխատանք ու ճարպիկութիւն է հարկաւոր:

—Ուրեմն կարո՞ղ ենք նրան փափկացնել:

—Ո՞վ գիտէ, այդ ճարպիկութիւնիցն է կախած, բայց էլի Աստուծոն է միայն յայտնի. ջհուա մարդ է:

—Ճարպիկութիւնն էլ ձեր բանն է:

—Ճշմարիտ է, բայց միայն իմ ճարպիկութիւնն էլ հերիք չէ:

—Ուրիշ էլ ի՞նչ է պէտք. ինչ որ կարող եմ, թո՛ղ լինի վզիս վրայ. ձեր աշխատանքի վարձատրութիւնը չի մոռացւի:

—Վա՛յ, հոգի՛դ սիրեմ, հոգի՛դ, ո՞վ է այդ մասին բան ասում. մի՞թէ ես չը գիտեմ, որ ձեր ազգը անւանի է բարեսրտութեամբ: Բայց մի՞թէ ես քո մօր որդուց պէտք է վարձատրութիւն վերցնեմ. չէ՛, սիրելիս, ես այդ չեմ կարող անել, այդ քո բանն է, ինչպէս ուղում ես: Սակայն... դժւարն այս է որ «կաշառքը», ասում է, դժուր է լուսաւորում. մի քսան թուման պէտք կը դառնայ, որպէս զի նորա մօտիկ բարեկամներն սիրտը շահենք: Այնտեղ մի մարդ կայ, որի առն մի խօսքը մի կնիք ու փարման է Գէլաձէնց Մոսէի համար: Պէտք է նորա կոկորդը փափկացնել:

—Հիմա՞յ ո՞րտեղից գտնեմ ես քսան թուման, — ասաց յուսահատաւած Լուարսաբը:

—Այդ մասին մի՛ նեղանար. դու ինձ մի մուրհակ տուր, փողն ես կը ճարեմ:

—Շա՛տ գեղեցիկ, ուզո՞ւմ ես հէնց հիմա՞յ, — վրայ բերեց Լուարսաբն ուրախացած:

Երբ որ սուտ — իշխանուհին սեսաւ որ Լուարսաբն այդքան շուտ ձկւեց, միտք արեց թէ ի՞նչու աւելի չ'ասաց, քանի որ նա այդքան տխմար է եղել: Սխալն ուղղելու համար նա հնարեց այս.

—Որդի՛, պէտք է միայն քեզ իմանալ որ մեծ տոկոս կ'ուզեն մեզանից:

—Մե՞ծ, իսկապէս ո՞րքան:

—Թումանի վրայ եօթը շալի:

—Ի՞նչ արած, կը տամ. կարիքը որ ստիպում է, պէտք է անել:

—Որ այդպէս է, լսի՛ր ինձ. դու դեռ չը կամութիւն արա՛, ով

որ քեզ բան ասի, ոտդ պինդ պահիր. կարելի է որ ձախարակն հուպ տանք, այն քաւթարից աւելի պոկենք, հասկացա՛ր: Ես ամեն բան քեզ համար եմ մտածում, թէ չէ ինձ ի՞նչ օգուտ կայ զրանում: Խօ հասկացա՛ր:

—Հասկացայ, հասկացայ, ասում ես որ ոտս հուպ տամ:

—Դէ, հիմայ ես գիտեմ: Վաղ առաւօտ ես մութհակը պատարասեւ կը տամ, դու ձեռք քաշիր ու յետոյ ես գիտեմ:

—Մութհակն առաջուց տա՛մ:

—Հասկա ո՞վ կը տայ մեզ փող առանց այդ: Դու գիտես որ, եթէ ես ունենայի՝ չէի խնայի քեզ համար: Չէի խնայի մօրդ որդու համար, բայց ո՞վ կը սեցնէ ինձ նման մի անտէր—այրիին: Հայից պէտք է վերցնեմ, դու խօ գիտես, թէ հայն ի՞նչ հրէայ է:

—Գիտեմ, գիտեմ:

—Յետոյ, երբոր դործը գլուխ բերեմ, ես էլ մի անտէր—այրի եմ... գոնէ մի երկու անգամ ինձ հաց կ'ուտացնես. դարդիմանդութեան ու աղ ու հաց սիրելու մէջ քո ազգը հռչակեա՞ծ է:

Լուարսաբի դուրը զալիս էր, երբ այդպէս յիշում էին նրա ազգը: Բաւական էր որ այդ ասէիր, նա պատրաստ էր չուխան հանել ու հագցնել քեզ:

—Դու մէկ ինձ ասա՛ թէ աղջիկն ի՞նչպէս է. ամեն բան խօսացինք, բայց այդ մոռացանք,—միտը բերեց Լուարսաբը:

—Կարդալու ու ձեռագործի մէջ լաւ կրթեա՞ծ է, էլ ի՞նչ է պէտք քեզ,—պատասխանեց նա:

—Կարդալն ի՞նչիս է պէտք, մի՞թէ պէտք է գլխիս իմաստուն նստի... Դու ինձ այն ասա՛ թէ սիրուն երես ունի՞, լաւ գոցն ունի՞ թէ չէ:

—Այդ էլ մի՛ հարցնի, վրձինով է նկարեա՞ծ:

—Ուրեմն էլ ի՞նչու եմ ոտս հուպ տալիս,—հարցրեց Լուարսաբը, որի մարմնի մէջ դուրալի կերպով անցան սուտ իշխանուհու խօսքերից առաջացած ուրախութիւն ու տրփանքը:

—Այո՛, պէտք է հուպ տաս: Այդ ես քեզ համար եմ ասում, որովհետեւ դու իմ քրոջիցն էլ լաւ կնոջ որդի ես, թէ չէ—դու ինքդ լաւ գիտես—ինձ համար այդտեղ ոչինչ հաշիւ չը կայ: Ուզում եմ հոգու փրկութեան համար գլուխ բերել այդ դործը, թէ չէ Մոսէ Գձելաձէն ինձ բան չի տալու: Երանի՛ նրան կարողանամ փափկաց-

նել ու մօրդ որդու բաղտաւորութիւնը գլուխ բերեմ, թէ չէ ի՞նչ հաշիւ պէտք է ունենամ ես:

—Այդ թո՛ղ լինի վզիս վրայ: Գեղեցի՞կ է նա,—հարցրեց նորից Լուարսաբը ժպտալով:

—Ասացի որ վրձինով է նկարւած:

—Երկու հարիւր թուման էլ փո՞ղ:

—Կարելի է որ աւելի. այդ ինձանից ու քեզանից է կախւած:

—Աւելի՞ էլ... Հը՞, դուք ի՞նչ կ'ասէք, վատ չի լինի,—ասաց Լուարսաբը այնպիսի մի ձեռով, որ կարծես դեռ տատանւում էր:

—Ինչպէս ես տեսնում եմ, դու դեռ սրտիդ մէջ չես վճռել,— վրայ բերեց նենգաւոր սուտ—իշխանուհին, որպէսզի ստուգէր թէ արդեօք լա՞ւ է ազդել նրա սրտի վրայ. թէ որ ազդել է՝ կարելի է դարձեալ մի բան դուրս կորզել:

—Ի՞նչ ես հրամայո՞ւմ:

—Ինչպէս թէ ի՞նչ եմ հրամայում, թէ որ սրտումդ չունես, ինձ մի՛ ամաչեցնիլ, այժմեանից թողնել սուր:

—Ի՞նչպէս կարող եմ ես թողնել տալ, քանի որ այն աղջկայ սէրը կեծացած կրակի պէս սրտիս մէջ գցեցիր: Ի՞նչպէս թողնել տամ, մի՞թէ ես պախարակեցի նրան:

—Ուրեմն վերջացրի՞նք:

—Վերջացրինք:

—Օ՛հ, չարդ տանեմ ես, հազի՛ւ կարող կը լինեմ դէպի մայրդ ունեցած պարտականութիւնս և Աստուծոն տւած խօսքս կատարել: Մի՛այն թէ Մոսէ Գձելաձէն շատ պնդերեսութիւն չ'անէր:

—Դու կաշառիր այն մարդուն, որի մասին որ ասում էիր, ես էլ այնտեղ ոռոս հուպ կը տամ:

—Երանի՛ դրանից աւելի կաշառք չը ծախւի. մի գուցէ ուրիշ՝ ներին էլ պէտք լինի ծեփել:

—Կիսի՛ր քսան թումանը:

—Վո՛ւյ, կուրանամ ես. քա՛, այդ ի՞նչպէս կը լինի. մի՞թէ նրանք հասարակ մարդոց որդիք են, որ տաս տաս թումանի համար ձեռքերը կեղտոտեն: Թաւաղի որդիք են, անւանի մարդիկ. նրանց կաշառելը այդպէս հեշտ չէ. տե՛ս, ինչպէս երևում է որ դեռ երե-
խայ ես:

—Դեռ ևս քսան տարիս լրացած էի,—խաբեց Լուարսաբը.
Մրացած էր:

—Նա էլ տասնըեօթ տարեկան կը լինի: Ուղիղ ճնճղուկներ
կը լինէք: Մ'հ, երանի այն օրին էլ հասնեմ, որ ձեզ տեսնեմ միա-
սին՝ ուսը ուսին կպցրած՝ նստած: Շատերը պէտք է ձեզ երանի՝ տան:

—Դէ որ այդպէս է, շտապեցրու թէ Աստուածդ կը սիրես, —
խնդրեց անհամբեր կերպով Լուարսաբը:

—Երանի չի լինի այդ միայն ինձանից լինէր կախած. իսկո՛յն
զլուի կը բերէի, բայց այն անիծւած հօր բանն է դժւար: Աստուած
ողորմած է, մի՛ վախենար:

Այդպէս վերջացաւ հռչակաւոր միջնորդի առաջին մոցիքլու-
թիւնը: Այն օրից յետոյ, Լուարսաբը՝ քնած թէ արթուն՝ միշտ այն
վրձինով նկարած աղջկան էր մտաբերում և երկու հարիւր թումա-
նով պարկը: Նրա ակորժակը բացւեց, տենչանքը վառւեց և
հէնց որ նրան մտաբերում էր՝ նրա ջղերը ձգձգւում էին և նա՝
որկրամոլի պէս շրթունքները լպտտելով՝ ասում էր՝ «վրձինով նկար-
ւած աղջիկ, երկու հարիւր թումանն բաջաղլու ոսկի և գուցէ
աւելի՞ էլ... հը՞, ի՞նչ կ'ասես, Լուարսաբ, կարծեմ՝ որ վա՞ր չի
լինի. դրա համար է ասած թէ՛ բա՛ղդ տուր և յետոյ, կ'ուզես,
աղբանոց նետիր ինձ»:

VII

Թէպէտև առաւ-իշխանուհին իւր հաշւի պատճառով գործը մի
քիչ երկարացրեց, բայց պէտք է շուտով վերջացնէր, քանի որ երկու
կողմի կամքն էլ առել էր: Բացի սուր-իշխանուհու հաշւից, այդտեղ
մի ուրիշ վտանգ էլ յայտնւեց. նախ՝ աղջիկը քսան, մինչև իսկ
քսանը մէկ տարեկան էին ասում, բայց այդ էլի ոչինչ, կարող էին
մի կերպ յարմարեցնել ու խաբել, ձի-խօ չէր որ առամներից գու-
շակէին. սակայն ցաւն այն էր որ աղջիկը խիստ տգեղ էր: Մի՞թէ
կարելի է այդտեղ էլ խաբէութիւն անել, խօ չէին կարող աչքերը
կապել: Ճիշտ է, կարելի էր առաջ մի ուրիշը ցոյց տալ, իսկ յետոյ,
երբ որ նա կը գաջ պսակւելու՝ զօրով կը պսակէին, բայց սուր-իշխա-
նուհին վախենում էր. չէ՞ որ այն ժամանակ թրև կը տային նորա մա-
զերից: Բայց մազերից թրև տալն էլ ոչինչ, եթէ միայն առատ փող

ստացած լինէր, թէ չէ քսան թումանն ի՞նչ փող էր: ճիշդ է, Լուարսաբից մուրհակ էր վերցրել, բայց ի՞նչպէս կարող էր համարձակել նրան մօտենալ՝ այդպիսի մի որոգայթի մէջ գցելուց յետոյ. չէ՞ որ կը խեղդէր նրան առանց հազորդի արժանացնելու: Գանդատ տար ու մուրհակը զատաւորին ցոյց տա՞ր—դարձեալ անօգուտ. կամ Լուարսաբին կ'արդարացնէին կամ կէսը զատաւորն իրան կը յատկացնէր: Բայց գլուխը քարը այդ կէսինն էլ, դժւարն այն էր որ գաղտնիքը կը բացւէր ու նրան բանտը կը ձգէին:— «Ձէ՛, մտածեց իշխանուհին. թո՛ղ այս մուրհակն էլի մնայ այսպէս ինձ մօտ. երբ որ ժամանակը գայ՝ կը ներկայանամ, թէ ուեց՝ լաւ, թէ չէ ու ջհանդամը նորա գլուխը, մի խօսքով այս մուրհակը կամ հա՛ է կամ չէ՛: Ի՞նչու եմ բանն այդտեղ գցում. զգուշութիւնը լաւ բան է, աւելի լաւ կը լինի զնամ Մոսէ Գձերաձէին մի նաղդ տաս թուման էլ աւելացնել տամ՝ (ա՛յ դա ուրիշ բան կը լինի) ու վտահանամ Լուարսաբին խաբել: Թէ չէ զանգատ կամ մի դաւի-դառաբայ լոյս կ'ընկնի, դործը կը բացւի, գուցէ ուրիշ ուրիշ բաներ էլ վրաս հաստատեն ու մի խաթաբալայ սարքեն. ի՞նչու.— չէ՛, այդ իմ բանը չէ, ես սիրում եմ գործս պարզ բռնել:

Այդպէս կազմ ու պատրաստ էր սուտ-իշխանուհին, երբ նորա սալը մտաւ Գձերաձէնց զիւղը, իբր թէ մի ինչ որ հին եկեղեցի ուխտ գնալու պատրուակով: Միւս օրը, առաւօտեան ինքը Գձերաձէն կանխեց և սուտ-իշխանուհուն իւր տունը հրաւիրեց: Սկսեցին բանակցութիւնները:

—Իէ՛հ, իմ հարազատ քրոջիցս էլ լաւ քո՛յր, աղա՞յ է թէ աղջիկ,—հարցրեց Մոսէ Գձերաձէն:

—Ախոս որ աղջիկ է,—պատասխանեց սուտ-իշխանուհին ցաւելով:

—Ի՞նչպէս, չի՞ ուզում:

—Ո՛ր:

—Իսկապէս ի՞նչ է ասում:

—Աղջկան չի հաւանում — խնդրեմ չը նեղանաս — ագեղ է, ասում է:

—Վա՛յ քեզ Մոսէ, մի՞թէ տեսել է որ և է տեղ:

—Ձէ, ոչ մի տե՛ղ չի տեսել, բայց լսել է:

—Թէ չի տեսել, էլի կարելի է գործին մի տեսակ ընթացք տալ:

—Ի՞նչպէս:

—Թէ դու ինձ կը նպաստես ու իմ աղ ու հացս չես մոռանայ, ի՞մ քոյր, այդ գործը զլուս կը բերենք:

—Մի՞թէ ինձ էլ խնդրել է հարկաւոր, մի՞թէ չը գիտես, որ զլուս չեմ խնայի քեզ մի ծառայութիւն մատուցանելու համար:

—Աւրեմն թէ որ այլպէս է, մի քիչ համբերիր:

Մոսէն վերկացաւ, դուրս գնաց և մի քիչ ժամանակից յետոյ հետը բերեց մի սքանչելի գեղեցիկ և լաւ կազմած քով, ղեռահաս աղախին: Կանգնացրեց սուտ-իշխանուհու առաջ, այս ու այն կողմը շուռ տւեց ու յետոյ հրամայեց որ դուրս գնաց:

Փորձած սուտ-իշխանուհին իսկոյն գլխի ընկաւ թէ ինչ էր նշանակում այդ բայց իրան այնպէս ձեացրեց իբր թէ ոչինչ չի հասկանում: Մոսէ Գձեղաձէն մօտեցաւ նրան ու նստեց դարձեալ նորա կողքին:

—Հաւանեցի՞ր,—սկսեց Գձեղաձէն:

—Հրաշալի՛ է,—ասաց անկեղծութեամբ կեղծաւոր սուտ-իշխանուհին:

—Աւելի գեղեցիկ կը լինի եթէ աղջկաս շորերով զարդարենք:

—Ինչ ասել կուզի, կրկնապատիկ սիրուն կը դառնայ:

—Հիմայ դու ի՞նչ կ'ասես որ դրան մի լաւ զուգենք ու իմ աղջկայ տեղ ցոյց տանք նշան բերողին,—հարցրեց Մոսէն ու աչքը ջառեց նորա աչքերին, որպէս զի պատասխանն այնտեղ կարդայ:

—Ձե՞ որ նշանից յետոյ փեսացուն էլ կը գայ այստեղ. նրա հետ ի՞նչ ես անելու:

—Ո՞վ է սպասում մինչև այն ժամանակ. հէնց երրորդ օրը պատկը կը տանենք: Ել որտեղից կարող է ժամանակ գտնել աղջկայ տեսութեան գալու:

—Բայց չէ որ էլի պսակելու համար պէտք է գայ:

—Յետոյ արդէն ես գիտեմ: Երանի՛ թէ դու մինչև այն ժամանակ օգնես ինձ, յետոյ թող իմ վզիս լինի. զօրով պսակել կը տամ:

—Ձէ, սիրելիս, ես այդ գործի համար ձեռքս լաւնում եմ, այդ չեմ կարող անել, այժմեանից եմ ատում:

—Ի՞նչու:

—Ախր նա լսել է, որ տգեղ է:

—Դու աչդ մասին մի՛ մտածիր, — ընդհատեց նրան Մոսէն. երբոր նրան բերողը աչդ աղախնին տեսնի, կերթաց կը պատմի որ այդպիսի աղջիկ նա իւր կեանքումը տեսած չունի: Աչդ էլ մի կողմը. մի հինգ թուման և նրա ջանը, այնպիսի մի լեզու զնեմ նրա բերանումը, որ...

—Իւր եղբօրը կողարկի:

—Աւելի լաւ. եթէ կաշառք էլ չը տանք, մի՞թէ նա այն պէտք է չ'ասի, ինչոր իւր աչքով է տեսնելու, թէ չէ փողն էլ խօչեմ խնայում:

—Ձէ, սիրելիս, ես աչդ մեղքի մէջ չեմ՝ կարող մտնիլ. ահա՛ քո հինգ թումանն էլ, ես ձեռքերս լացի:

Մոցիքունը հանեց երկու հատ քսանհինգ մանեթանոց թղթադրամ ու տեց Մոսէին:

—Ուրեմն դու ինձ դաւաճանո՞ւմ ես, — ասաց սրտի ցաւով Մոսէն. ուրեմն դու ուզո՞ւմ ես օջախս քանդել. ուրեմն դու չե՞ս մեղքանում իմ խեղճ աղջկաս. է՛հ, դաւաճան փուճ աշխարհ... Ամենը սուտ է եղել. աղ ու հացն էլ, պատիւ տալն էլ, սէրն էլ, բարեկամութիւնն էլ... է՛հ, քո կամքն է... իմացիր միայն որ սրտումս թոյն քսած նեւ անցկացրիր, արձձի գնդակ զարկեցիր, անհաւատ լէզուդ նման քրիստոնեայ հոգիս կորցրիր:

Մոսէն կարծում էր թէ աչդ խօսքերով կարող կը լինէր փափկացնել նրա սիրտը, բայց չը գիտէր թէ սուտ — իշխանուհին ի՛նչ իշխանուհի էր. կամենում էր սուտ — իշխանուհուն խօսքերով խաբել... Թէպէտև սուտ — իշխանուհին մտքումը ծիծաղում էր, բայց երեսը կծկեց, ցոյց տալու համար թէ ինքը նեղանում էր որանկարող էր մի բանով օգնել:

—Դու չը մեռնես, Մոսէ, — ասաց իշխանուհին ցաւելով — և թո՛ղ այսպէս սևերես միանամ այն կեանքումը զժբաղդ ամուսնուս, եթէ պատրաստ չը լինեմ օջախիդ ծառայելու համար գլուխս զոհել. բայց ծառայել էլ կայ, ծառայել էլ:

—Ի՞նչ անենք որ կայ — ձայն տւեց արդէն մի քիչ սիրտաւած Մոսէն, քանի որ նկատեց թէ սուտ — իշխանուհին փափկելու վրայ է կանգնում. — Ի՞նչ անենք թէ կայ, մի՞թէ մենք էլ չենք հասկա-

նու՛մ ծառայութեան փոխարէնը հատուցանել, ի՞նչ ապերախտ մարդ ինձ գտար որ. քսան թուաման չէ՞ի խոստացել, թո՛ղ քսանըհինգ լինի, տո՛ օրհնած:

—Ձէ՛, սիրելիս, մի՞թէ բանը փողի վրայ է. մագերիցս թրև կը տան այս ծերութեանս հասակին, հոգիս կը կորցնեմ:

—Թո՛ղ քսանըեօթ լինի:

—Ձէ՛, սիրելիս, փողն ի՞նչ յիշելու է, այդ զործը մեծ վտա-
հու՛թիւն է պահանջում:

—Ձէ՛ որ կարելի է մի կերպ յարմարեցնել, թո՛ղ քսանըութ լինի:

—Ձէ՛, յարմարեցնելով՝ ասե՛նք կարելի է յարմարեցնել, բայց ո՞վ կը համաձայնի իւր գլուխը վտանգի ենթարկել:

—Թո՛ղ քսանըիննը լինի,—աւելացնում է կամաց կամաց Մոսէն և ամեն մի աւելացնելիս նկատում է, որ սուտ—իշխանուհին փափկում է:

—Շատ գլուխ դնել է հարկաւոր, թէ չէ կարելիութեամբ ամեն բան կարելի է:

Սուտ—իշխանուհին, այն ճարպիկ սուտ—իշխանուհին խիստ նենգամոռութեամբ արտասանեց այդ վերջին խօսքը. այնպէս էր ձևացնում իրան իբր թէ ամենևին ուշադրութիւն չէր դարձնում Մոսէի աւելացնելու վրայ, այլ միմիայն նրա մասին էր մտածում թէ կարելի՞ է արդեօք թէ ոչ: Շատուց է ինչոր սուտ—իշխանուհին համոզւած է թէ կարելի է, բայց երբոր նա մի պղնձի մէջ ձեռք էր կոխում՝ սիրում էր անպատճառ աւելի մեծ պատառը ջոկել: Եթէ Մոսէն այդ միտքը չէր յղացել, նա ինքը պէտք է խորհուրդ տար նրան նոյնը անելու: Ձէ՛ որ նա ասել էր թէ զրօքնով է նկարւած, մի՞թէ կարող էր ագեղ ազջիկը ցոյց տալ: Հէնց դրա համար էլ եկաւ, որ Մոսէի հետ խորհուրդ անի, ի հարկէ այն պայմանով որ փողն էլ աւելի պոկի: Քանի որ ինքը Մոսէն նրան կանխեց, վարձատրութեան խնդիրն էլ կիսով չափ կարգադրեց և նա ուրախացաւ ու միտք արեց հակառակել նրան, աւելի լաւ վարձ ստանալու յուսով:

—Թո՛ղ երեսուն լինի,—աւելացրեց դարձեալ Մոսէն—բայց աւելին տալ այլ ևս անկարող եմ:

—Ի՞նչու չէ,—սկսեց իրան յատուկ եղանակով սուտ—իշխանուհին, Կերբոր երեսուն թումանի հասցրեց—Ի՞նչու չէ, կարելիութեամբ կարելի է, բայց ես էլ պէտք է ներկայ լինեմ նշանդրէքին, որ գործը կատարելապէս յաջողի: Յաւն այն է միայն, որ ինձ անկարելի է այս դերիով գալ:

—Դէրիան էլ թո՛ղ քո չարեփոխը լինի,—վրայ բերեց ուրախացած Մոսէն, տեսնելով որ նրան լիովին համաձայնացրեց.—դէրիան վզիս վրայ լինի:

—Ուրեմն լսիր ի՞նչ եմ ասում. նշանը բերելու համար ես նրա եղբորը ուղարկել կը տամ. դու աղախնին լաւ զուգիր—աշխատիր միայն որ ոչ ոք չ'իմանայ—և երեք օրից յետոյ պէտք է անպատճառ պսակն էլ յարմարեցնես: Մի որևէ բան հնարիր, որ երիտասարդը չը կարողանայ իւր հարսնացուի տեսութեան գալ: Իսկ յետոյ, իմ գործն արդէն վերջացած կը լինի:

—Նշանդրէքի գիշերը փողը լիովին կը ջանձնեմ քեզ, իսկ հիմայ վե՛ր առ այս հինգ թումանը որպէս գրաւական:

—Ձէ՛, տասը թուման շնորհիր, ո՞վ գիտէ ի՞նչպէս է պէտք գալիս, խօ մէկէլ այստեղ չեմ վազ տայ:

—Թո՛ղ եօթ ու կէս թուման լինի առժամանակ:

—Տասը շնորհիր, էլի քո գործի համար եմ ուզում, քո գործի վրայ պէտք է բանեցնեմ, թէ որ պէտք լինի: Ինձ համար խօ չեմ ուզում:

—Ի՞նչ. մի՞թէ այդ տաս թումանը այն երեսուն թումանի հաշւում չես խնդրում:

Սուտ-իշխանուհին ծիծաղեց:

—Ի հարկէ, քա՛:

—Հա՛, այդպէս ասա՛, իսկ ես կարծում էի թէ այդ տաս թումանը առանձին ես վերցնում, որպէս զի իմ գործիս մասին ծախսես:

—Ձէ, ցաւդ տանեմ, այն հաշւումն եմ տանում: Իսկ դէրիացուն շուտով շնորհիր, որ կարելը հասցնենք:

—Ահա՛ տաս թումանը տալիս եմ, այնտեղից վեր առ դէրիիդ համար և յետոյ կը դրսուենք:

Սուտ-իշխանուհին համաձայնեց, բայց սխալեց:

Էլ ինչ երկարացնեմ, սուտ-իշխանուհին ու Մոսէն այդպէս սկսե-

ցին իրանց գործն և այդպէս էլ վերջացրին: Կալ թակարգ նետեցին Լուարսաբի առաջ և լաւ էլ որսացին:

Երկու շաբաթից յետոյ Լուարսաբը՝ յափշտակած գործի այդ յաջող ելքից՝ լաւ նշանով ճանապարհ դրեց իւր աւագ եղբայր Դաւթին: Մեծ պատուով ընդունեցին նրան: Մոսէն ամենևին հիւրեր չէր կանչել, որպէս զի իւր խարդախութիւնը չը նկատեն: Լուարսաբին էլ նամակ էր գրել թէ ինքը հիւանդ է և չի կարող հիւրեր ընդունել:

Ի հարկէ, այդ նամակից յետոյ քաղաքավարի Լուարսաբը չէր կարող շատ հիւր ուղարկել, այնտեղ: Միայն Դաւթին և մի ուրիշ ծանօթի էր ուղարկել, որպէս զի իւր հիւանդ աներոջ համար նեղութիւն չը լինի: Միայն թէ Դաւթին նա յայտնեց որ առաջ աշխատի փողի մասին խօսէ, իմանալ թէ երբ են յանձնում և ապա թէ աղջկան լաւ զննէ:

Մեծ պատուով ընդունեց Մոսէն Դաւթին: Աղջկայ տեղ այն սիրունիկ աղախնին զարդարեցին ու Դաւթին ցոյց տւին: Դաւթի ընդ նրան տեսնելուն պէս խելքը գնաց և համարեա թէ նախանձն էլ նորա սրտովն անցկացաւ, նամանաւանդ, երբ սկսեց նրան համեմատել իւր չորացած կնոջ հետ: Ընթրիքի նստեցան չորս հոգի՝ Դաւթի ընդ, նորա հետ եկած ծանօթը, Մոսէն և իւր հասակն առած որդին: Իշխանուհին էլ, թէև Մոսէի տանն էր, բայց նորա աղջկայ հետ ընթրեց: Մոսէն ներողութիւն խնդրեց, որ չէր կարողացել ժողովուրդ հրաւիրել ի պատիւ այդպիսի պայծառափայլ ազնաւանների:

— Ի՞նչ անեմ, ցաւդ տանեմ, իմ նոր բարեկամ—ասաց Մոսէն Դաւթին, հիւանդ էի, պարզերես չէի կարող դուրս գալ, խնդրեմ ժլատութեան մէջ չը մեղադրես ինձ, ցաւդ տանեմ: Դեռ հիւանդ մարդն ի՞նչ է, որ հիւանդ տանտէրն ի՞նչ լինի: Թէ չէ թո՛ղ Աստուած քեզ այնքան արեւշատութիւն տայ, ինչքան որ ես աղգականներ ու մօտիկ ծանօթներ ունիմ: Բայց ինձ վրայ նայողները ի՞նչ զւարճութիւն կը ստանային: Նստելի գերադասեցի ոչ ոքի չը հրաւիրել: Թո՛ղ այս նշանդրէքը տանավարի անցնի, հարսանիքն արդէն ե՛ս գիտեմ: Հարսանիքի մասին ի՞նչ հրամայեց իմ փեսան:

— Որքան շուտ, այնքան լաւ, ասում է,—պատասխանեց Դա-

ւիթը. խնդրեմ ինձ շողոքորթ չը համարեք, նա որ այս աղջկան տեսնի, նոյն վայրկեանին կը պսակւի, գլուխս մեռնի թէ սուտ լինե՞ս՝ ասելիս.

—Արեւ չը տեսածն է եղել,—աւելացրեց հայրը:

—Ի՞նչ անենք, փա՛ռք Աստուծոյ, Աստուած ինձ այդ է տուել, ամեն բան նրա կա՛նքիցն է կախւած,—ասաց Մոսէն. ուրախ եմ, ձեր արեւը զիտննայ, որ աղջկաս հաւանեցիք:

—Աստուած կեանք տայ նորահարսին,—ձեռք տւեց Դաւիթը գաւաթին—Աստուած երկուսին միասին պառաւեցնի՛:

—Շնորհակալ եմ, ձեր ցաւը տանեմ,—գլուխ տւեց ամենքին Մոսէն. ուրեմն քանի որ շուտ վերջացնենք, այնքան լաւ:

—Նա այդպէս էր ցանկանում,—պատասխանեց Դաւիթը, ես էլ, ճիշտն ասած, նոյն խորհուրդը կը տայի եղբօրս: Ել ինչ հարկ կայ բանն երկարացնելու:

—Իմ կարծիքով էլ այդպէս աւելի լաւ կը լինի, ասաց Մոսէն. աղջիկն այստեղ է հալւում—ի հարկէ հօրից չը պէտք է լսել այս խօսքը, բայց խօստար չէք, ձեզանից ի՛նչ ծածկեմ—աղջիկն այստեղ է հալւում...:

—Նա էլ այնտեղ, ձեր արեւը,—խօսքը խեց նրանից Դաւիթը:

—Ուրեմն երբոր կը հրամայէք, թող այն ժամանակը լինի հարսանիքը,—յայտնեց Մոսէն:

Մի խօսքով, վճռեցին որ երեքշաբթի երեկոյեան նորափեսան գայ ու հէնց այն զիշեր պսակեն: Հետեալ օրը Դաւիթը խօսք գցեց փողի մասին: Մոսէն նրան հաւատացրեց որ հարսանիքի միւս օրը իւր ձեռքով կը յանձնի երկու հարիւր թուման բաջաղլու ոսկին. ձեռքը ձեռքին խփեցին և Դաւիթը վերադարձաւ տուն (միւս օրը նորահարսին այլ ևս չը տեսաւ նա), իսկ Մոսէն մնաց իւր տանը: Երբոր Մոսէն, Դաւթին ձիու վրայ հեծեցնելուց և ճանապարհ զննելուց յետոյ, մենակ մնաց՝ ուրախութիւնից իւր ձեռքերը փշրտեց ու ասաց ժպտալով՝ յաջողակ կերպով տարայ գործս: Իմ դարդս հիմայ այն է, որ սուտ—իշխանուհուն մի որողայթի մէջ գցեմ, մի որեւէ պատրւակ հնարեմ, որպէսզի տւածիցս էլ աւելի չը տամ, թէ չէ նրանից որ խաբւեմ՝ ամօթ է:

Այս մտքումն էր որ սուտ-իշխանուհին—Մոսէն կին չու-

նենալու պատճառով նա մնացել էր նրա տանը աղջկան նայելու—
ուրախ-ուրախ նրա առաջը կանգնեց:

—Հը՞, ինչպէս եղաւ դորձը,—հարցրեց նա, շնորհաւորում եմ
որդուդ բաղդաւորութիւնը: Բայց ես շատ նեղութիւն կրեցի. շա-
րունակ քրտնքաքամ էի լինում, քո արււը, հա՛ հիմազ գլխի կընկնեն,
ասում էի, ու կը կորչեմ ես, բայց Աստուած օգնեց ինձ, չ'իմացան:

—Ե՛հ, օրհնւած,—պատասխանեց Մոսէն—«քրտնքաքամ» էիր
լինո՞ւմ, կարծես թէ առաջին անգամն ես այդպիսի բան բռնում:
Քրտնքաքամ էր լինում... ձեր արհեստն ուրիշ ի՞նչ է: Քրտնքա-
քամ էր լինո՞ւմ...

Սուտ—Իշխանութիւն ցնցեց:

—Հանա՞ք ես անում թէ ճիշտ ես ասում,—հարցրեց վախե-
ցած իշխանութիւն:

—Ի՞նչ հանաքի բան կայ այստեղ:

—Հիմազ հա՞:

—Հիմազ էլ ու առաջ էլ:

—Աստուած քեզ բարութիւն տայ թէ որ այդպէս է. միայն
ինձ ճանապարհ դիր ու յետոյ դու զիտես:

—Ուր ուզում ես գնա՞, ո՞վ է ձեռքդ բռնում:

—Ի հարկէ ոչ ոք չի բռնի, բայց խոստացածդ տուր ու Աս-
տուած քեզ բարութիւն տայ, ինչ ուզենաս՝ ասա՛ իմ մասին, սիրտս
չի ցաւի:

—Խոստացա՞ծը, ասում է... ինչ որ տւի նրա մասին եմ՝ դեռ
զղջում եւ դու էլի կարծում ես թէ բան պէտք է տա՞մ:

—Հիմազ դա նամո՞ւս է. պառաւ կնկանս փոշտի ձիու պէս
թրեւ տալ տւիր, աշխարհքումը զլուխս խաչտառակեցի, զլուխ բերի
ու հիմազ ա՞յդ ես ասում: Պա նամո՞ւս է:

—Իսկ այն նամո՞ւս է, որ ոտդ վեր ես քաշել զիւղէ զիւղ
ընկել եւ մոցիքլութիւն անո՞ւմ, նամո՞ւս է: Անցեալ տարի որ քրոջդ
աղջկան, այն մարդու տալու օրիորդին, տարար ու դաւառապետին
յանձնեցիր՝ նամո՞ւս էր. եւ երբոր յղացաւ՝ դեղ տւիր փորն աւերե-
ցիր՝ նամո՞ւս էր...

Սուտ—Իշխանութիւն կասաղեց, նա կորցրեց իւր սովորական զգու-
շութիւնը, փորձառութիւնն ու սառնարունութիւնը:

—Թէ որ այդպէս է,—գուաց կասաղած սուտ-իշխանուհին—
դու թաղես ինձ, դո՛ւ, թէ որ այդ գործը չը խճճեմ:

—Լաշաքդ դիր գլխիս,—պատասխանեց այդ սպառնալիքի վրայ
Մոսէն. լաշաքդ դի՛ր թէ որ այս բոպէիս գոմի մէջ չը փակեմ՝ քեզ
մինչև որ հարսանիքը վերջանայ: Ի՞նչ կարող ես ինձ անել, կը զան-
գատուե՞ս—չեմ կարծում որ քեզ դաւառապետի ձեռքը գցես, մեղ-
քերդ շատ են, կը դիզեն միմեանց վրայ և դու Սիբիրումն էլ տեղ
չես ունենայ, տո՛ւ սուտ-իշխանուհի: Չը կարծես թէ սա այն գաւա-
ռապետն է, որի համար աղջիկներ էիր տանում և որին զնդակի
պէս ձեռքումդ էիր խաղացնում. այն ժամանակն անցա՛ւ:

Բայց այդ խօսքերն էլ ուշքի չը բերին դառնացած սուտ-իշխա-
նուհուն: Այդ դառնութիւնիցն էր, որ այդպէս խելքը կորցրել էր,
ասպա թէ ոչ, փոխանակ բարձրանալու և սպառնալու, նա կարող էր
այնպէս խոնարհացնել իւր գլուխը, այնպէս կծկել նորա ձեռքում,
որ ամեն բան քամուն կը տար: Բայց հիմայ, ինչպէս ասացի, բար-
կութիւնից գիտակցութիւնը մթնացրել էր. այդ պատճառով նա նո-
րից ձայնը բարձրացրեց:

—Կը փակե՛ս գոմում... Ըհ, հողս այդ անշահ գլխիդ, մի՞թէ
քո աղախինդ եմ, թէ գորտի նման աղջիկդ...

—Ի՞նչ. ահա՛ թէ աղախնիցս էլ վատ չես. ես այս բոպէիս
քեզ ցոյց կը տամ թէ ինչպէս պէտք է գոմ ուղարկեմ քեզ,—ասաց
Մոսէն հանաքը թողնելով. քեզ որ կախեմ էլ, ոչ ոք ձայն չի հանի:
Բայց զգուշութիւնը լաւ բան է, որպէս զի յետոյ ինձ սուտ չը մե-
ղադրես, այս բոպէիս ցոյց տուր ինչ որ ունես գրպանումդ:

Յարձակեց սուտ-իշխանուհու վերայ մեր իսկական իշխանը:
Սուտ-իշխանուհին առաջ ընդդիմադրեց, բայց վերջը լացեղ արեց
հանել կապոյտ թաշկինակը, որի մէջ փաթաթել էր զանազան բա-
ներ: Սուտ-իշխանուհին մտքի մէջ ընկաւ և բերանը չորացաւ. մի
բառ չը կարողացաւ արտասանել: Մոսէն թաշկինակը բացեց և տե-
սաւ այնտեղ անպակաս իւր տաս թումանը. իսկոյն գցեց իւր գրպանը:
Յետոյ տեսաւ մի ուրիշ թուղթ. բացեց և տեսաւ որ դա մի մուր-
հակ է, այն մուրհակը որ սուտ-իշխանուհին խաբելով դուրս էր պո-
կել Լուարսաբից: Մինչդեռ Մոսէն այդ բաներով էր զբաղւած, սուտ-
իշխանուհին վերադարձրեց էլի իւր ճարպիկութիւնը, սատանայու-

Թիւնն ու փորձառութիւնը: Նա մտածեց. «այս գոռալս և սպառնալիքներս պէտք է թողնել, թէ չէ ճիշդ գումը գցել կը տայ: Թէկուզ փակի էլ՝ վնաս չունի. հինգ վեց օրը երազի պէս կանցնի. տունը մի նամակ կը գրեմ թէ այստեղ բաժինք ենք պատրաստում և թէ մինչև հարսանիքի վերջանալը չեմ կարող վերադառնալ. ո՞վ կարող է բան իմանալ: Բայց զոնէ այդ տասը թումանս յետ ստանամ, զոնէ այդ էլ չը կորցնեմ... Այս մտքերը մի ակնթարթում վազվզեցին սուտ և ճարպիկ իշխանուհու գլխում:

—Այս ո՞վ տւեց քեզ, — հարցրեց Լուարսաբը, մուրհակը նրան ցոյց տալով:

—Ի հարկէ հիմա՞յ դու չես հաւատայ, եթէ ասեմ որ այդ մուրհակը էլի քո զործի համար եմ ձեռք բերել: Թէ որ, բան է, նա հասկանար մեր խարդախութիւնը աղջկայ փոխելու մասին ու յետ կանգնէր, մենք այս մուրհակը ցոյց կը տալինք ու կ'ասէինք՝ պսակւիր, թէ չէ դատաւորին կը ներկայացնենք այս և նաղդ համարել կը տանք: Ահա՛ թէ ի՞նչու եմ մուրհակն ուղել, դու արդէն չես հաւատայ, բարկացած ես, բայց իմացիր որ սիրտս շատ էր ցաւում քեզ համար:

Թէ որ այդպէս է՝ ի՞նչու մինչև հիմա՞յ չէի՞ր տալիս:

—Ես մտածեցի, եթէ ցոյց տամ, դու այլ ևս այդ յուսով այնպէս չէիր հոգայ զործի համար: Ի՞նչ գիտեմ, չէ՞ որ մեղանշական ենք:

—Հիմա՞յ դու ուզում ես որ դրանով խաբես էլի՞:

—Արդէն ասացի թէ չես հաւատայ: Երբ մի անգամ մի մարդու վարկը կոտրւի, այլ ևս նրան ոչ ոք չի հաւատայ: Ինձ էլ նոյնն է պատահում: Դու կարծում ես թէ խաբո՞ւմ եմ քեզ. թէ ես քեզ խաբում եմ, վե՛ր առ, սիրելիս, այդ մուրհակը ու զեղջիր Լուարսաբին տալիք երկու հարիւր թումանից. ինձ այն տաս թումանն էլ հերիք է:

—Դրանով դու ինձ խաբել չես կարող: Այդ մուրհակն էլ ինձ կը մնայ ու տաս թումանն էլ, իսկ քեզ գոմի փոխանակ խրճթի մէջ կը փակեմ, որպէս զի մինչև հարսանիքը չը հեռանաս: Յետոյ արդէն ինչ որ սիրտդ ուզի՝ արա՛: Այ տղա՛յ, — զոռաց Մոսէն:

Մառան եկաւ:

—Այս սուտ — իշխանուհուն համեցէք արա՛ դէպի խրճիթը, մի

գորգ էլ տուր, մութաքայ ու անկողին: Հացն ու գինին չը պակասացնէք, միայն թէ խրճիթի դուռը պէտք է զրսից կողպէքով կողպես ու բանալին բերես տաս ինձ: Զը լինի որ այս բանը մի ուրիշն էլ իմանայ:

Ծառան տեղից չը շարժեց, կարծում էր թէ հանաք են անում:

— Զե՞ս լսում, տօ... որդի,— զուաց Մոսէն:

Հիմա արդէն նա լացեղ արեց հրամանին հաւատալու: Մօտեցաւ, ձեռք տւեց ու քաշեց սուտ— իշխանուհուն, որն հիմա աչնպէս կծկւեց որ բռնցքի չափ դարձաւ, բայց և աչնպէս էլի յոյսը չէր կորում ու կարծում էր թէ յաջողութեամբ զուրս կը պրծնի: Դարձեալ մի խօսք յարմարեցրեց ճարպիկութեամբ ու արտասանեց աչնպիսի մի ձևով, կարծես թէ նրանց մէջ բոլորովին ունի չէր պատահել:

— Ուհ, քո հոգուդ մեռնեմ, ի՛նչպէս սազում է քեզ սուտ բարկանալը: Այս սուտուց տղան էլ հաւատաց, կարծեց թէ ճիշդ ես հրամայում. գիւղացի մարդ է, շուտով գլխի չ'ընկաւ, մի' բարկանայ վրան, հոգուդ մատաղ լինե՛մ ես:

Քիչ էր մնում որ նորա այդ վարպետութիւնը Մոսէին ծիծաղացնէր: Ծառան էլ ֆնաց շարւած: Էլի շատ ճարպիկութիւններ գործ գրեց սուտ-իշխանուհին, բայց ի զուր. նրան փակեցին խրճիթի մէջ: Նա մի նամակ գրեց սուտն — որն առաջուց Մոսէն աչքի անցկացրեց — թէ բաժինքը պատրաստելու պտտճառով պէտք է մնայ աչնտեղ, ուստի և մինչև չորեքշաբթի օրը ի զուր թող չը սպասեն: Նամակն ուղարկեց և դնաց մտաւ խրճիթ, նստեց գորգի վրայ, հանեց իլիկը, որ միշտ հեան էր ունենում ուր որ գնում էր, ու սխեց մանեւ: Այդպէս կացաւ, իբր թէ ո՛չինչ:

(Վերջը միւս համարում):

ԴՅՃԱՄԵՐԳ Ն

ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԹՈՒՄԱՆԵԱՆՅԻ

Վտակը ժայռից ներքև է թռչում,
Թափ առած ընկնում քարերի զլխին,
Ջարկում աւազին, շաչում է, ճչում,
ձչում անհանգիստ, փրփուրը բերնին:

Ինչպէս ծերունին ձայնով պառաւած
Ձայնակցում է իւր թռռնիկի երգին,
Այնպէս է մօտիկ անտառը կամայ
Սրճագանգ տալիս ջրի աղմուկին:

Սակայն բնութեան զւարթ համերգի
Անխօս ունկնդիրն յաւիտենական —
Ժայռը մըտախոհ, իւր անյայտ մըտքի
Ետևից ընկած, լսում է նրան:

Մ Ի Կ Ր Ո Ւ Ն Ե Ր

Ս. ԲԱԼԱՂԵԱՆԻ

I

Միկրոբների տեղը օրդանիզմների շարքում: Միկրոբների մեծութիւնը և արտաքին տեսքը: Նրանց գոյանալու հորջր: Պուշէն և «ինքնական» ծագման» թէօրիան: Միկրոբների բազմանալու ձևերը: Նրանց տարածւելը օդի, ջրի և գետնի մէջ: Գլխաւոր փաստերը:

Առաջ բնագէտները իրանց շատ հասարակ էին երևակալում բնութիւնը. ողջ օրդանական աշխարհը՝ սկսւելով ողնաւոր և բարձր բոյսերով՝ վերջանում էր հասարակ և մանր օրդանիզմներով, որոնց աճնուամենայնիւ կարելի էր տեսնել հասարակ աչքով: Ուր աչքը ոչինչ չէր կարողանում նշմարել, աչքտեղ տիրում էր, նրանց կարծիքով, կեանքի կատարեալ բացակայութիւն:

Բաւց աչք կարծիքին վիճակած էր հիմնովին կերպով փոխել: Նրբ հնարեց միկրոսկոպը, որը մեծացնելով հարիւր, հազար անգամ մանր մարմինները, կարողացաւ տեսանելի անել այնչինչ որ առաջ աննշմարելի էր, երբ մարդիկ, զինւելով աչք երեսելի գործիքով, սկսեցին դիտել բնութիւնը, աչք ժամանակ նրանց դարմացած աչքերին բացւեց մի նոր, անազն աշխարհ մանր էակների կամ միկրոբների աշխարհը: Մարդ միաչն աչք ժամանակ տեսաւ, որ կեանքը եռում է աչքտեղ, ուր նա առաջ երևակալում էր կեանքի բացակայութիւն: Աչք մանր էակները, թէև անչափ և աննշմարելի, զարերի ընթացքում խառնւելիս են եղել, եթէ կարելի է աչքտես ասել, մարդկանց գործերում, կամ մեծ ծառայութիւնների անելով, կամ թէ սարսափելի միտքների բերելով: Աչք բաւական չէ. աչքում էլ հէնց մարդիկ, անասունները, բոյսերը, մի խօսքով բոլոր աշխարհը, ամեն մի բոյս էնթարկում է աչք զարմանալի էակների ազդեցութեանը: Միկրոբների կեանքը ուսումնասիրելուց վետոյ սկսեցին պարզւել զարմանալի արագու-

թեամբ չատ հարցեր, որոնց վճռելու համար զիտնականները չատ տարի-ներ անաջող աշխատում էին:

Բայց ինչ տեսակ արարածներ են այդ միկրոբները: Արդեօք նման-ում են նրանք կենդանիներին կամ բույսերին իրանց զարգացման և բազ-մանալու ձևով, թէ ընդհակառակը բռնում են բոլորովին առանձին տեղ օրգանական աշխարհում:

Ահա այն հարցերը, որոնց հետ ամենից առաջ պիտի ծանօթանանք: Հետազոտութիւնները ցոյց տւին, որ միկրոբները, կամ բակտերիա-ները, ինչպէս նրանց շատ անգամ անւանում են, պատկանում են բու-սական աշխարհին. դոքա համարւում են ամենաստոր և ամենահասարակ բույսեր:

Սակայն, եթէ նրանց զիտէր մի մարդ, որը քիչ է ծանօթ բնագիտու-թեան հետ, նա գուցէ ոչինչ նմանութիւն չը գտնէր բույսերի և բակտե-րիաների մէջ:

—Այլ ինչ նմանութիւն կարող է լինել, կը բացականչէր նա, ամեն-քին ծանօթ բույսերի և մի ինչ որ փոքրիկ, կոշիկ արարածների մէջ, որոնք ազատ լողում են զանազան հեղուկներում: Բայց այդպիսի դիտողը մի բան է մոռանում, որ իւր կարծիքը բույսերի մասին ճիշտ է միայն բարձր կազմութիւն ունեցող բույսերի վերաբերմամբ: Իսկ շատ ցածր բույսեր չունեն ոչ արմատ, ոչ ճիւղեր և իրանց արտաքին տեսքով չեն նմանւում բոլորին ծանօթ բույսերին: Այն բույսեր, որոնք անչարժ կպած չեն գետնին, այլ ազատ լողում են հեղուկում, նմանելով միկրոբներին: Ուրեմն զարմանալի չէ, որ բակտերիաները նույնպէս համարւում են բույսեր:

Միկրոբները ամենափոքրիկ արարածներն են ամբողջ աշխարհում: Այլ ճշմարիտ, երևակալել նրանց փոքրութիւնը անհնարին է. օրինակ, հաշււած է, որ եթէ չարենք կարգով 100,000 բակտերիա, նրանց բռնած տարածու-թիւնը մօտաւորապէս կը լինի հաւասար մէկ սանտիմետրի: Այն նրանց մէջ և աւելի մեծերը, բայց նրանց էլ անկարելի է նշմարել առանց միկ-րոսկոպի օգնութեան:

Բակտերիաները ունենում են զանազան տեսք, նմանելով զանազան առարկաներին, օրինակ՝ գնդակին, փալաթիկին: Ամենից շատ լինում են կոշոր գնդակաձև միկրոբներ, որոնց անւանում են «միկրոկոկ» և երկար բակտերիաներ, որոնց անւանում են «իւալիկ» կամ «բացիլ»: Եթէ վերց-նենք մի մի կաթիլ զանազան փչացած հեղուկներից և նայենք նրանց վրայ միկրոսկոպի տակ, չուտով կը նկատենք, որ այդ հեղուկներում սա-րածւած միկրոբները զանազանւում են ոչ թէ միայն արտաքին տեսքով, այլ և ուրիշ կողմերով: Օրինակ՝ մի տեսակ բակտերիաները բոլորովին անչարժ են, միւսները ընդհակառակը կաթիլի մէջ պոտտւում են արագու-թեամբ:

Բազմ ինչ տեղից են առաջանում միկրոբները: Արդեօք նրանք էլ միևս բոլորի և կենդանիների նման են բաղմանում, թէ նրանց գոյանալու ձևը բոլորովին տարբեր է: Ահա այն հարցը, որը երկար ժամանակ հետաքրքրում էր բնագետներին: Մինչև վաթսուհարյան թվականները այդ հարցը վճռած էր թուում, գիտնականների մեծամասնությունը համոզված էր, որ բակտերիաները գոյանում են տարբեր կերպով:

«—Մինչդեռ միևս բոլորը և կենդանիները, ասում էին նրանք, առաջանում են միմիայն իրանց նման ծնողներից (օրինակ՝ խնձորենին կարող է ստաջանալ միմիայն խնձորենուց), բակտերիաները ընդհակառակը գոյանում են զանազան օրգանական նյութերից»:

Երբևայդպիսի ալդ մտքի, նրանք բերում էին հետևեալ փաստերը: Յալոնի է, որ շատ անգամ գինու մէջ գոյանում է փառ (плеска) մինչև անգամ այն դեպքում, երբ գինին պահւում է կողպած շիշում: Միկրոսկոպը ցոյց է տալի, որ այդ թաղանթը բաղկացած է անթիւ բակտերիաներից: Նոյնպէս խմանալիս կը լինեն շատերը, որ եթէ վերցնենք օրինակ մի կտոր թարմ միս և գցելով նրան շիշի մէջ ամուր կողպենք, մի քանի ժամանակից չետոյ նա կը սկսի լուծւել և կը ծածկւի բաղմաթիւ միկրոբներով:

«—Պարզ է, ասում էին վերոյիշեալ գիտնականները, որ բակտերիաները չէին կարող դուրս կողմից մտնել շիշի մէջ, որովհետև վերջինս ամուր կողպած էր, ուրեմն նրանք գոյացել են գինուցը կամ մսիցը»: Այդ տեսակ բաղմանալը անւանում էին օրգանիզմների «ինքնակամ ծագում» (самопроизвольное зарождение организмов): Այս միտքը առանձին եռանդով պաշտպանում էր Ռուանի բնական պատմութեան թանգարանի կառավարիչ Պուլէն: Իսկ վերջինին հետևում էր գիտնականների մեծամասնությունը:

Հէնց այդ ժամանակներում բնագետների ուշադրութիւնը սկսեց գրաւել իւր վերաջ ջահել ֆրանսիացի գիտնական Լուի Պաստէօրը (Pasteur) իւր երևելի հետազոտութիւններով: Նա նոյնպէս զբաղւեց վերոյիշեալ հարցով, սկսելով փորձերի ամբողջ մի շարք: Եւ ինչպիսի փորձեր: Նորա այդ զարմանալի ճիշտ և սրամիտ փորձերը դարձան կլասիքական և օրինակելի՝ ապագայ սերունդների համար: Պաստէօրը հետազոտութեան դրական մեթոդը հասցրեց վերին աստիճանի կատարելագործութեան: Նա սկսեց աջակիսի անոդոք կերպով զննել բնութիւնը, որ վերջինս կամաջ աւանաջ պէտք է բացէր նորա առաջ իւր գաղտնիքների դոճա մի մասը: Փորձերը անելուց չետոյ, Պաստէօրը համոզւեց, որ Պուլէն և նորա համակողները չարաչար սխալւում էին: Ահա այն եղրակացութիւնը, որին նա հասաւ:

—Ինչպէս սունկը կարող է առաջանալ միմիայն սունկից, ինչպէս մի որ և է որթն կարող է ծնւել միմիայն որթնից, այնպէս էլ ամեն մի բակտերիա կարող է ծնւել և զարգանալ միմիայն իրան նման ծնողներից, իրան նման բակտերիաներից: Ինչտեղ չը կալ միկրոբ, կամ նորա սաղմը

(зародышъ), աշտեղ չի կարող գոյանալ ոչ մի նոր բակտերիա: Մեռած օրգանական նիւթերից երբէք չեն արտադրուում բակտերիաներ, հակառակ Պուշէի կարծիքին:

Պաստէօրի և Պուշէի մէջ սկսեցին տաք վիճաբանութիւններ: Այդ վիճաբանութիւնների տարօրինակ աղմկալի լինելը բացատրուում է հետեւալ հանդամանքով: Շատ ժամանակ էր, որ բնագէտ-փիլիսոփաներին հետաքրքրում էր այն հարցը, թէ արդեօք կա՞ն անանցնելի անդունդ բնութեան երկու աշխարհների՝ օրգանականի և անօրգանականի մէջ, թէ ոչ: Այսինքն հետաքրքրի էր իմանալ, արդեօք կենդանիները և բոյսերը անքան են տարբերուում մեռած, անօրգանական բնութիւնից, որ նրանց կարելի չը լինի կապել, թէ ընդհակառակը:

Աւելի գրաւիչ էր թուում այն միտքը, թէ այդ երկու աշխարհները անքան էլ տարբեր չեն մէկը միւսից. կարծում էին, թէ կան աղնալիսի դէպքեր, երբ մեռած բնութեան նիւթերը, փոխարկւում են կենդանի էակներին: Յայտնի բան է, անկարելի է, որ մեռած բնութեան նիւթերը, ուղղակի փոխէին բարդ կազմութիւն ունեցող կենդանիների և բոյսերին. ուրեմն, այդ փոխարկւելը պէտք էր փնտրել ամենահասարակ էակների շրջանում: Այդպիսիներ համարւում են բակտերիաները: Գուցէ հէնց այդ բակտերիաներն են կապում օրգանական աշխարհը մեռած բնութեան հետ: Գուցէ մեռած նիւթերը ուղղակի կարող են փոխարկւել բակտերիաներին:

Ահա աչսպէս էին տրամադրւած շատերը, երբ մի քանի գիտնականներ չափոնեցին, որ իրանց արած փորձերը ապացուցում են, որ իրաւ մեռած օրգանական նիւթերից դոյանում են բակտերիաներ: Խնչ ասել կուզէ, որ այդ ծանուցումը ուրախութեամբ ընդունւեց գիտնականների կողմից և բոլորը համոզւեցին, որ միկրոբներն են կապում կենդանի էակներին մեռած բնութեան հետ:

Այս հարցը, ինչպէս տեսնում է ընթերցողը, նեղ բնագիտական հարց չէր, այլ ընդհակառակը լայն փիլիսոփայական: Դրանով է բացատրւում, որ Պաստէօրի և Պուշէի մէջ ծագած վիճաբանութիւններին հետեւում էր լարւած ուշադրութեամբ հասարակութեան բոլոր զարդացած մասը: Այդ վիճաբանութիւններին վերջ տալու համար՝ ֆրանսիական Գիտութեանց ճեմարանը նշանակեց մի չանձնաժողով, որը, հետեւելով Պաստէօրի փորձերին, պէտք է վերջնական վճիռ կապցնէր: Պաստէօրը չաղթեց...

Բայց հետաքրքրի է իմանալ, թէ ինչպէս էր ինքը Պաստէօրը բացատրում այն փաստերը, որոնք անքան ապացուցիչ և ուժեղ էին համարւում «ինքնակամ ծագման» թէօրիալի պաշտպանողների աչքում: Ինչպէս էր նա բացատրում այն հանդամանքը, որ կողպած շիշկրում եղած զանա-հան հեղուկներում առաջանում են միկրոբներ: Չէ՞ որ այդ վերջինները Պաստէօրի կարծիքով չէին կարող զինու. կամ միւս հեղուկների նիւթերից դոյանալ: Ահա թէ ինչպէս նա բացատրեց այդ տարօրինակ երևոյթները:

Միկրոբների սաղմերը ալնքան փոքր են և թեթև, որ օդի ամենա-
չնչին շարժումը ընդունակ է նրանց բարձրացնել։ Նրանք բարձրանում են
և տարածւում օդի մէջ։ Ամենքին չափնի է, որ օդը խտակ չէ բուրդովին,
նորա մէջ լողում է փոշի։ Ահա հէնց այդ փոշիի մի չափնի մասը բաղկա-
յած է բակտերիաների սաղմերից։

Ամեն մի ժամ, ամեն րոպէ փոշիի հետ թափւում են օդից միկրոբ-
ների սաղմերը և ծածկում ալն առարկաները, որոնց պատահում են։ Օրի-
նակ փոշին, որը ծածկում է մեր սենեակների գրքերը, կահկարասիքը և
միւս իրերը, ունի իւր մէջ բակտերիաների անթիւ սաղմեր։

Երբ պատրաստւում է գինի չիրալից, վերջինիս մէջ նույնպէս թափ-
ւում են օդից այդ սաղմերը ¹⁾։ Նոր պատրաստած գինին ածոււմ են տա-
կառների և չիչերի մէջ ու ամուր կողպում։ Բայց ինչ օգուտ ամուր կող-
պելուց, երբ բակտերիաների սաղմերը արդէն տարածւած են գինու մէջ։

Այդ սաղմերը սպասում են բարեպատեհ պայմանների, որ զարգանան
անթիւ անհամար քանակութեամբ։ Երբ բաղմանում են ալնքան, որ զոյանում է
հեղուկի երեսին թաղանթ, ալն ժամանակ միաջն մենք նրանց նկատում ենք
հասարակ աչքով։ Ուրեմն չի նշանակում, թէ բակտերիաները զոյացան
գինուց չիչը կողպելուց չէտու, ինչպէս ասում էր Պուչէն։ Ոչ, նրանք միաջն
բաղմացան ալն սաղմերից, որոնք վաղուց (չիչը կողպելուց առաջ) ար-
դէն ընկել էին հեղուկի մէջ, միաջն աննկատելի էին մեզ համար իրանց
չափազանց փոքրութեան պատճառով։

Ինչ որ ճիշտ է գինու վերաբերմամբ, նույնպէս ճիշտ է և ուրիշ հե-
ղուկների, կամ պինդ նիւթերի վերաբերմամբ (կաթ, միս, դարեճուր և
այլն), որոնց մէջ նույնպէս առաջանում են բակտերիաներ։

Պատե՛օրը շատ փորձեր արեց այդ մտքերը ապացուցանելու համար։
Բերեմ այդ փորձերից միաջն մէկը։ Նա վերցրեց մի ապակէ կոշոր աման,
որի բերանը կարող էր լաւ կողպել։ Երբ այդ ամանի մէջ գինի և սկսեց
հեղուկը կրակի վրաւ եփ տալ։ Դրանով Պատե՛օրը ուզում էր սպանել ալն
միկրոբները և սաղմերը, որոնք վաղուց ընկել էին հեղուկի մէջ։ Միւս
կենդանի օրգանիզմների նման բակտերիաները չեն կարողանում տանել
չափազանց բարձր ջերմութիւն և մեռնում են։

Մի փոքր ժամանակ եփ տալուց չէտու Պատե՛օրը պինդ կողպեց
ամանի բերանը։ Նորա կարծիքով այդ հեղուկի մէջ էլ չէին կարող գո-
յանալ բակտերիաներ, որովհետեւ հեղուկի միջի բոլոր սաղմերը կոտոր-
ւած էին։ Եւ ճշմարիտ, նա պահեց այդ ամանը ամբողջ ամիսներ, մինչև
անգամ տարիներ, իսկ հեղուկի մէջ չը գոյացան բակտերիաներ։ Բայց երբ,

¹⁾ Առանձնապէս խաղողի շերտի վերաբերմամբ Պատե՛օրը ապացուցեց, որ
սաղմերը ընկնում են այդ հեղուկի մէջ ոչ այնքան օգնեց, ինչքան խաղողի կեղեւից,
որի մակերևոյթը լինում է ծածկւած սաղմերով։

ներկար պահելուց չեսող, մինեոն ամանի բերանը բացեց և ալղալիսով նորից ներս թողեց սաղմերով վարակած օղը, չ'անցաւ երեք օր և հեղուկի մէջ գոլացան անթիւ միկրոքներ: Դժանր է երեակալիլ աւելի դօրեղ վատտեր, քան սոքստ:

Ալղ վատտերը մեծ հարւածներ էին «ինքնակամ ծաղման» թէօրիալի համար: Վերջինս չը կարողացաւ նրանց դիմանալ և ընկաւ: Շուտով մոռացութեան աւին ալն հին վարդապետութիւնը, որը երկար տարիներ չուղաւ էր գիտնականներին:

Հիմալ տեսնենք, թէ ինչպէս են բազմանում միկրոքները: Սրանց բազմանալը կատարւում է ալնպէս, ինչպէս շատ ցածր բոլսրինը և կենդանիներինը: Ալսինքն ալսպէս, երբ բակտերիան հասնում է իւր զարգացման բարձր աստիճանին, նա բաժանւում է երկու մասի: Ամեն մի մասից միւսը բաժնւում է նոր բակտերիա, որը սկսում է մեծանալ և վստոյ նորից բաժանւում է երկու մասի, երկու փոքրիկ բակտերիաների: Աւ ալղ կերպով բազմանալը կարող է կատարւել շարունակ, մինչև որ բազմանալու պալմանները կը լինեն նպաստիչ:

Շատ ժամանակ նոր սերունդների բակտերիաները չեն պոկւում աւելի հներիցը, որոնցից գոլացել են, ալ մնում են կապւած նրանց հետ, կազմելով ալղալիսով ամբողջ շղթաներ, կամ ինչպէս ասում են, բակտերիաների կոլոնիաներ:

Ջանաղան տեսակ միկրոքները հեշտ ջուկում են իրանց կոլոնիաների ձևով, որովհետև ամեն մի տեսակը կազմում է առանձին ձևի կոլոնիա: Որինակ մի տեսակ բակտերիաներ ունենում են ուղիղ թելի նման կոլոնիա, միւսները—տափարակ և ալն:

Աս վերև արդէն ասացի, որ միկրոքները շարունակում են բազմանալ բաժանւելով, մինչև որ նրանց կեանքի պալմանները բարեպատեհ են, ալսինքն մինչև որ նրանց համար բաւականին սնունդ կալ ալն չըջանում, որի մէջ ապրում են, կամ թէ ալղ չըջանի ջերմութիւնը բաւականին բարձր է: Իսկ երբ բակտերիաների կեանքի պալմանները լաւ չեն, ալն ժամանակ նրանք սկսում են բազմանալ ուրիշ միջոցով, ալն է սաղմերով: Ամեն մի միկրոքի մարմնի մէջ գոլանում է մի փոքրիկ կոլոլ սաղմ, որը շուտով ծածկւում է թաղանթով (оболочка): Յետոյ միկրոքը մեռնում է, նորա մարմինը պատուում է և նորա միջից դուրս է դալիս միկրոքի սաղմ, կամ ինչպէս ընդունւած է ասել, միկրոքի սպորը (спора):

Երբ ալղ սպորը ընկնում է խոնաւ և տաք տեղ, նրանից շուտով զարգանում է բակտերիա, որը սկսում է բազմանալ կամ բաժանւելով, կամ թէ սպորներ տրոտալիւելով, նալած թէ ինչպէս են չըջապատող պալմանները:

Ապրոքների թաղանթը ալնքան հաստ է և տուր, որ կարողանում է հիանալի կերպով պաշտպանել սաղմերին ամեն տեսակ աննպաստ ար-

տաքին պալմաններից (սաստիկ ցրտից, բարձր ջերմութիւնից)։ Այդ բանում բակտերիաները քնքուշ են. նրանք բուլսրովին թուլանում են, երբ ջերմութիւնը ցածրանում է մինչև 0° և բուլսրովին մեռնում են, երբ ջերմութիւնը բարձրանում է մինչև 60° Յելլիուսի ջերմաչափով։

Սպորները ընդհակառակը զեղեցիկ կերպով պիմանում են թէ սպորներին ցրտին (մինչև -70°), թէ բարձր ջերմութեան. կան ալիպիսի սպորներ, որոնք չեն մեռնում մինչև անգամ $+140^{\circ}$ ջերմութեան ազդեցութեան տակ։ Ուրեմն հեղուկի եփ տալը նրանց չի կարող սպանել։ Սակայն պէտք է աւելացնում, որ երկար ժամանակ եփ տալը մեռցնում է նոյնպէս և ալդ տեսակ սպորները։ Շատ քիմիական նիւթեր, որոնք սպանում են ամեն մի կենդանի օրգանիզմ, չեն կարողանում ներգործել կամ ներգործում են շատ թույլ կերպով սպորների վերայ։ Ահա թէ ինչպէս են զրահաւորում բակտերիաները իրանց սպորներին։

Սպորների պաշտպանւած լինելը ահագին նշանակութիւն ունի ինչպէս մի միջոց, որը ապահովացնում է, եթէ կարելի է ալսպէս ասել, միկրոբների ցեղի շարունակութիւնը։

Այս բանում բակտերիաները բոլորովին նմանում են միւս կենդանի օրգանիզմներին, որովհետեւ ամբողջ կենդանի բնութեան մէջ կալ մի ալիպիսի զօրեղ ձգտում՝ ապահովացնել իրանց ցեղի շարունակութիւնը։ Մի տեսակի օրգանիզմները զեղեցիկ կերպով պաշտպանում են իրանց սաղմերին բակտերիաների պէս, միւսները ապահովացնում են իրանց ցեղը սաստիկ բաղմանալու ընդունակութիւնով։

Նրկրորդ տեսակ օրգանիզմներին պատկանում են, օրինակ, ձկները, որոնք տալիս են սաղմերի ահագին քանակութիւն, որպէս զի վերջիններից գոնէ մի քանիսը կարողանան զարգանալ և շարունակել ցեղը։ Իսկ եթէ նրանց սաղմերի թիւը փոքր էր հզել, այն ժամանակ գուցէ ցեղը չը պաշտպանւէր, որովհետեւ ձկների սաղմարը լաւ պաշտպանւած չեն և ալդ պատճառով ահագին քանակութեամբ փչանում են։

Բակտերիաների սպորները ընդունակ են տարինելով մնալ առանց զարգանալու, միևնոյն ժամանակը չը կորցնելով իրանց կենսական ուժը, որովհետեւ ալիպիսի սպորները ընդունակ են մի քանի տարից չլուրդաւալ բակտերիա և զարգանալ, եթէ միայն ընկնեն լաւ պալմանների մէջ։

Բուսերի և կենդանիների կեանքից չափոնի է մի վերին աստիճանի հետաքրքիր երևույթ, աչն է, որ թէ բոյսերը և թէ կենդանիները ընդունակ են չափոնի սահմաններում փոփոխել իրանց կեանքը և չարմարել արտաքին պալմաններին։ Բոլորը գիտեն, թէ ինչքան փոփոխական են ալդ վերջին պալմանները։ սաստիկ ցրտին հետևում է տաքը, խոնաւութիւնից չափոնի լինում է չորութիւն և ալն։ Ահա հէնց ալդ փոփոխութիւնների համաժառ, օրգանիզմները սկսում են փոփոխել իրանց կեանքը, նրանք չարմարւում են արտաքին նոր պալմաններին։ Միևնոյն բանը մենք նկատեցինք և միկ-

րոբներն Վերաբերմամբ, երբ շրջապատող հեղուկի ջերմութիւնը բաւականին բարձր է, նրանք բաղմանում են, արտադրելով քնքոյշ սերունդներ, հակառակ դէպքում բաղմանալը կատարւում է սպորներով, որոնք միայն կարող են դիմանալ ցրտին:

Ի՞նչ կարող է լինել աւելի զարմանալի, քան այս երևութը: Բաղմանութիւն օրգանիզմներ, չը նալած որ բոլորովին զուրկ են խնէթից և գիտակցութիւնից, գեղեցիկ կերպով չարմարեցնում են իրանց կեանքը զանազան աննպաստ պայմաններին, որպէս զի չը ոչնչանան:

Յալանի է, որ օդը անհրաժեշտ է թէ կենդանիների և թէ բուսերի համար: Այս բանում միկրոբները մի փոքր զանազանւում են. կան աղնալիսներ, որոնք նույնպէս չեն կարող ապրել առանց օդի, բայց կան և ուրիշները, որոնք զարգանում են առանց օդի: Այդ փաստի վերաջ հիմնւելով, Պաստէօրը բաժանում է բակտերիաներին երկու մասի, աէրոբ բակտերիաներ, որոնց համար հարկաւոր է օդը և անաէրոբ բակտերիաներ, որոնք զարգանում են առանց օդի:

Վերև ես չալանցի, որ բակտերիաները, կամ, աւելի լաւ է ասել, նրանց սպորները, տարածւած են օդի մէջ: Հետազօտութիւնները ցոյց տւին, որ սպորները բարձրանում են օդի մէջ գետնի երեսից: Գետինը ներկայացնում է ամենալաւ պայմանները նրանց զարգանալու համար. ուր փթում են կենդանիների և բուսերի մնացորդները, ալնտեղ բակտերիաները իրանց շատ բազդաւոր են զգում:

Ի՞նչ ասել կուզէ որ ջրերը, շփուելով գետնի հետ, ստանում են վերջինից միկրոբներ: Առաւել շատ բակտերիա կալ կանգնած և հոտած ջրերում:

Բակտերիաների տարածման խնդիրը մեծ նշանակութիւն ունի մանաւանդ ալնպիսի գիտութիւնների համար, ինչպէս առողջապահութիւնը և երկրագործութիւնը: Այդ պատճառով այդ հարցը լաւ ուսումնասիրւած է. արդէն տասնեակ միջոցներ կան հետազօտելու և իմանալու թէ ինչքան և ինչպիսի բակտերիաներ կան գետնի, ջրի և օդի մէջ:

Գաղափար տալու համար այդ տեսակ հետազօտութիւնների մասին, բերեմ ամենահասարակ միջոցներից մէկը: Որինակ, օդը հետազօտելու համար վերցնում են երկար ապակիի խողովակ, որի մի ծայրը ծածկում են բամբակով, իսկ միւս ծայրը միացնում են ասպերատորի հետ: Այս վերջինը մի ալնպիսի գործիք է, որը ծծում քաշում է օդը ալն անօթներից, որոնց հետ միացրած է: Ասպերատորի աղբեղութեան տակ խողովակի մէջ սկսւում է օդի հոսանք. օդը մտնում է խողովակի ալն ծալրովը, որը ծածկւած է բամբակով, իսկ միւս ծալրովը մտնում է ասպերատորի մէջ: Բամբակը նորա համար են դնում խողովակի մէջ, որ օդը, անցնելով բամբակի միջով, թողնի ալնտեղ լւր միջի փոշին: Մի որոշ ժամանակից քետու բամբակը հանում են և զցում իստակ, բակտերիաներից ազատւած ջրի մէջ. ջուրը խլում է բամբակից նորա բոլոր սաղմերը: Ահա եթէ

վերցնենք այդ ջրից մի կաթիլ և նալենք նորա վերաջ միկրոսկոպի օգնութեամբ, մենք կը տեսնենք այն միկրոբներին, որոնց խլել է օդից բամբակը և տղպիսով կարող ենք զաղափար կազմել օդի մէջ տարածւած բակտերիաների մասին:

Բակտերիօլոգիական հետազոտութիւնները հարստացրին գիտութիւնը շատ հետաքրքիր փաստերով: Բանից զուրս եկաւ, որ գետնի վերնի շերտերը լցւած են բակտերիաներով: Բացի դրանից, հետազոտութիւնները ցոյց տւին, որ բակտերիաները հաւատար կերպով չեն տարածւած գետնի մէջ, ինչտեղ գետինը սաստիկ վարակւած է զանազան լուծուող նիւթերով, ալնտեղ բակտերիաների թիւը աւելի մեծ է: Միևնոյն բանը նկատուում է օդի վերարեքմամբ. օդում նոյնպէս կը գտնենք զանազան քանակութեամբ բակտերիաներ, նալած թէ ինչ տեղի օդն ենք քննարկում քննութեան:

Շատ հետաքրքիր են Պաստէօրի արած հետազոտութիւնները, որոնք վերաբերում են այս հարցին: Նա անալիզի ենթարկեց օդը չորս տեղ, որոնք գտնւում էին զանազան բարձրութեան վերաջ ծովի մակերևութից: Առաջ նա քննեց օդը դաշտումը, քստոյ բարձրացաւ և քննեց օդը մօտակալ լեռան ստորոտում, երրորդ քննութիւնը արաւ լեռան վերաջ 850 մետր ծովից բարձր, իսկ չորրորդը նոյնպէս լեռան վերաջ 2000 մետր ծովից բարձր: Այդ քննութիւնները բերին նրան այն եզրակացութեանը, որ օդի ցածր շերտերում աւելի շատ բակտերիաներ կան, քան թէ բարձր շերտերում: Իսկ 3000 մետր բարձրութեան վերաջ օդը համարեա բոլորովին ազատ է բակտերիաներից: Այժմ մի քանի տեղ կանոնաւոր կերպով պարապւում են այդ հարցով: Մանաւանդ նշանաւոր են Մոնսուրիի գիտարանի (գտնւում է Պարիզի չրջակայքում) գիւրեկտոր Միկէլի հետազոտութիւնները: Դիտարանի բակտերիօլոգիական հետազոտութիւնները մի քանի տարի է, որ անընդհատ շարունակւում են, իսկ դրանց հետեանքները չափոնւում են ամեն տարի զուրս եկող *Annuaire de l'observatoire de Montsouris* հրատարակութեան մէջ:

Այդ տեսակ հետազոտութիւնները ցոյց տւին որ քաղաքներում օդը աւելի շատ բակտերիաներ ունի, քան թէ բաց դաշտում: Միևնոյն անգամ միևնոյն քաղաքում բակտերիաները հաւատար կերպով չեն տարածւած օդում. քաղաքի կենդրոնում, ուր բնակիչները շատ խմբւած են ապրում, օդում աւելի շատ բակտերիա կալ, քան թէ կենտրոնից հեռու տեղերում: Այս բանը գեղեցիկ կերպով երևում է հետեեալ փաստերից: Միկէլի ղեկավարութեամբ հինգ տարալ ընթացքում կատարւում էին համեմատական հետազոտութիւններ երկու տեղ՝ Մոնսուրիի գիտարանում և Պարիզի Ռիւոլի փողոցում: Մոնսուրիի գիտարանը՝ ինչպէս վերև ասեցի, գտնւում է Պարիզի չրջակայքում, իսկ Ռիւոլի փողոցը—քաղաքի կենտրոնում:

Ահա հետեանքները. Մոնսուրիում օդի մի խորանարդական (կուբիկահան) մետրը պարունակում է իւր մէջ 480 բակտերիա, իսկ Ռիւոլի փողո-

ցում, արմինքն քաղաքի կենտրոնում, օդի նույն քանակութիւնը պարունակում է իւր մէջ 3480 բախտերիա: Ուրիշ խօսքերով, Պարիզի կենտրոնում օդի մէջ 7 անգամ աւելի շատ բախտերիա կալ, քան թէ նույն քաղաքի չրջակայքում:

Հետաքրքրելի են նույնպէս այն հետազոտութիւնները, որոնք վերաբերում են առանձին տներին. ուսումնարաններում և հիւանդանոցներում միկրոբների թիւը օդի մէջ աւելի մեծ է, քան թէ մասնաւոր տներում ¹⁾:

Կան այնպիսի բակտերիաներ, որոնք բացառապէս ապրում են ջրերում, օրինակ *Cladotrix*-ը: Այս վերջինը բաղմանում է զարմանալի արագութեամբ. պատահում է մինչև անգամ, որ այդ բակտերիաները, բազմանալով, կտրում են ջրի հոսանքը ջրանցքի խողովակներում:

Միկրոբների սպորները գտնւում են մինչև անգամ ձիւնի և անձրևի կաթիլների մէջ:

Գժուար չէ խմանալ, թէ ինչտեղից են ընկնում սպորները անձրևալին ջրերի մէջ. անձրևալին կաթիլները, թափւելով բարձրից, մեքենաւորաբար բերում են իրանց հետ այն սպորները, որոնք տարածւած են օդի մէջ:

Բացի դրանից, բակտերիաները ամեն մի վալրկիան մտնում են օդի հետ մեր թոքերը շնչառութեան ժամանակ: Իսկ ստամոքսում նրանք լինում են ահագին քանակութեամբ: Ստամոքսը նրանք մտնում են ջրի և կերակուրի հետ:

Մի խօսքով քիչ տեղ կը գտնւի, ուր բակտերիաները մուտք գործած չը լինէին:

Այժմ աւելորդ չի լինիլ համառօտ կերպով առաջ բերել միկրոբների վեհանքին վերաբերեալ գլխաւոր փաստերը:

Սխալ է այն կարծիքը, թէ իբր միկրոբները կարող են գոյանալ զանազան լուծուող և մեռած նիւթերից: Մի որ և է չրջանում կարող են առաջանալ նոր միկրոբներ միտն այն դէպքում, եթէ նույն չրջանում կան միկրոբների սպորներ:

Միկրոբները շատ օրգանիզմների նման բաղմանում են հասարակ բաժանմամբ. բացի երբ նրանց կեանքի պայմանները վատանում են, նրանք սկսում են արտադրել սպորներ: Այս վերջինները, լաւ պաշտպանւած լինելով, կարողանում են գլխանալ ամենայն տեսակ աննպաստ արտաքին պայմաններին:

Մի խօսքով, թէ իրանց ծագման և թէ զարգացման և բաղմանալու ձևերով, միկրոբները բոլորովին նմանւում են միւս ստոր օրգանիզմներին. նրանք բնութեան ամենահասարակ և ամենափոքրիկ արարածներն են. Հենց այդ չափազանց փոքրութեան պատճառով նրանք մնացին անչափս ամբողջ դարեր:

Միկրոբները անհաշւելի քանակութեամբ տարածւած են օդի, ջրի և դետնի մէջ: Այս բանում մի ընդհանուր օրէնք է նկատւում, որ միկրոբները աւելի մեծ քանակութեամբ տարածւած են կեղտոտ տեղերում, ուր լուծւում են զանազան օրգանական նիւթեր:

ՄՄԲԱՏ ԶԱՅԱԶԻԶԵԱՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾ-ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍ

ԵՂԻՇԷ ՄԱՂԱԹԵԱՆԻ

II

Որքան էլ ակնյայտնի է Նազարեանցի ազդեցութիւնը Շահազիզեանի վերայ, սխալ կը լինէր ենթադրել մեր բանաստեղծի գաղափարներն մէջ լոկ մեքենայական փոխառութիւն: Շահազիզեանը բաւականաչափ ինքնուրոյն մտածող է՝ մի ճանաչած աւտորիտէտի ստրկաբար չը հետեւելու համար: Այդ բանին ապացոյց է այն «Հրապարակախօս Զայնը», որի մէջ էնթուզիաստ աշակերտը տեղ-տեղ թէւ համետութեամբ, բայց և այնպէս քննադատում է, ուղղում է և նոյն իսկ հերքում է ուսուցչին: Այսպէս օրինակ, հայոց եկեղեցու վերանորոգութեան վերաբերեալ Նազարեանցի մի առաջարկութեան առիթով՝ Շահազիզեանը նկատում է որ յօդաճառքիրը ի զուր է դործ ածել «րէֆորմ» բառը: Խօսելով «Հանդէս նոր հայախօսութեան» գրքի մասին, նա գտնում է որ Նազարեանցի այդ աշխատութիւնը «ազատ չէ այլ և այլ արւեստական և աւելորդ հայեցողութիւններէ»: Նազարեանցի ոճը նա չի համարում միշտ հարթ ու հաւասար և, նրա թարգմանական յօդաճանքից մի անյաջող պարբերութեան օրինակ բերելուց յետոյ, աւելացնում է. «և այսպիսի պարբերական խօսքը զգւելի է և անմարտելի նոր աշխարհաբառ լեզուում»: Այս օրինակներից էլ պարզ է որ Շահազիզեանը ոչ թէ կուրօրէն, այլ միանգամայն գիտակցաբար է վերաբերւում Նազարեանցի մտքերին և առհասարակ նրա ամբողջ գործունէութեանը, կարեցածին

չափ մատնացոյց անելով նրա դրական և բացասական կողմերը: Մեր նպատակից դուրս է՝ որոշել մեր հեղինակի անաչառութեան և անկողմնապահութեան աստիճանը իւր պաշտպանողական գրածի մէջ. բայց եթէ ճշմարիտ է որ ժամանակակից գործիչներին անաչառապէս գնահատելը դժւար է,—գրեթէ անհնարին է այդ այն մարդկանց համար, որոնք այդ գործիչների մերձաւոր աշխատակիցներն ու բարեկամներն են եղել: Նահազիզեանը, որպէս Նազարեանցի աշակերտ և մտերիմ՝ բարեկամ, չէր կարող այլ կերպ վերաբերուել նրա գործունէութեանը, քան որպէս վերաբերուել է «շրապարակախօս Ջաջնի» մէջ. չէր կարող մանաւանդ այն քննադատական գրութիւնից յետոյ՝ որ ճգնաւժ էր Նազարեանցի գրական-հրապարակախօսական գործունէութիւնը հաւասարեցնել զրօյի: Ինչ և իցէ, մենք բաւականաչափ պարզաւժ ենք համարում, որ Նահազիզեանը յամենայն դէպս ոչ որպէս կոյր երկրպագու, այլ որպէս համոզուած գաղափարակից է մտնում Նազարեանցի դրօշակի տակ: Եւ այդ իրողութիւնը մի բնական հետեւանք էր մեր հեղինակի ստացած կրթութեան և նրան շրջապատող հասարակական-կուլտուրական պայմանների:

Ինչ էր այդ կրթութիւնը և որո՞նք էին այդ պայմանները: Իւր սկզբնական ուսման շրջանը, որ անցել է հայրենիքում, այսպէս է պատկերացնում ինքը Նահազիզեան. «Շատ լաւ միտս է թէ ինչպէս մանկութեան օրերին, Աշտարակ գիւղում, ուսում էի առնում և ես. ուսումնակից մանկերս երբեմն եկեղեցու գաւթում, երբեմն տէրտէրի բակում նստաւած, սերտում էինք մեր դասերը: Տէրտէրը՝ մողնցի զունդ զունդ Տէր-Սարգիսը, կռնատակին բալիշ դրած, երկու երկու կանչում էր մեզ դաս ասել՝ այսինքն բարձր ձայնով երգել. դողդողալով չօքում էինք նորա առաջը, ասելով «Անժօր և Որթոյ և Հոգոյն սրիոյ», սկսում էինք պատասխանել: Երբ որ մեզանից մինը կակազում էր դասի վերայ, Տէր-Սարգիսը ուղղում էր թաթալօշով, ճիպոտով կամ չւանի գաբով: Մեր խմաստութեան սկիզբն էր աժճու, ապա Սաղմոս Դաւթի, և յետոյ Նարեկը: Բարեբախտաբար, փոքրիկ Սմբատը շուտ է ազատուում այդ խալիֆայական ուսումնարանից և դեռ պատանի՝ գալով Մոսկւա, մտնում է Նազարեանց ճեմարան: Այսպիսով հայ նահապետական շրջանից դուրս եկած մի տղայ հայոց «միջնաշխարհի» մի գիւղից անսպասելի կերպով ընկնում է «Ռուսաս-

տանի սիրտը: Կարելի է երևակայել հայ մանուկի հոգեկան դրութիւնը օտարութեան մէջ: Առաջին զգացմունքը որ պաշարում է նրա ամբողջ էութիւնը՝ հայրենիքի կարօտն է: Այդ կարօտը տանջողական պիտի լինէր մանաւանդ ապագայ բանաստեղծի դիւրազգաց սրտի համար, սրտի՝ որին ամեն ինչ օտար էր հիւսիսի ցուրտ երկնակամարի տակ՝ մարդիկ, լեզուն, գաղափարները, սովորութիւնները, նիստ ու կացը: Զարմանալի չէ, որ դեռ վեցերորդ դասարանի աշակերտ՝ Նահապիղեանը այրում է իւր սիրած երկրի կարօտով:

Տու ք ինձ ճերմակ ճախրասըլաց

Օղապարիկ երիվար,

Տու ք զի սլացեալ թռեաց ի բաց

Ի չքնաղիկն իմ աշխարհ:

Բայց որքան ջերմ է նրա սրտում այդ կարօտը, այնքան ըստ երևութին քիչ առիթ է ունեցել նա այց գալու իւր հայրենիքին: Ուսումը աւարտելուց յետոյ՝ Նահապիղեանը ստանձնում է վերակացուի և ուսուցչի պաշտօն Լազարեանց ճեմարանում, որտեղ վերջին պաշտօնը նա վարում է մինչև օրս: Աւելի քան քառորդ դար է ահա, որ Նահապիղեանն ապրում է Մոսկւայում, և իսկապէս նրա անւան հետ է կապւած և իւր ամբողջ գործունէութիւնը թէ որպէս մանկավարժի, թէ որպէս բանաստեղծի և թէ որպէս հրապարակախօսի:

Յիսնական և վաթսնական թւականներին՝ Նահապիղեանի աշակերտութեան տարիները՝ Լազարեանց ճեմարանը բաղկացած էր վեց գիմնազիական և երկու մասնագիտական դասարաններից: Ուսանելի աւարկաների թւում կար, ինչպէս և այժմ, նաև հայոց լեզուն, որ պարտադիր էր ճերմարանի բոլոր հայ աշակերտների համար: Պէտք է կարծել որ մողնցի Տէր-Սարգսի աւանդած գրաբառը—չենք խօսում նրա դաստոտութեան հակամանկավարժական եղանակի մասին— ոչ բոլորովին ապարդիւն անցաւ. ընդհանրապէս ժրագլուխ և յառաջադէմ՝ Նահապիղեանը մանաւանդ մեծ յառաջադիմութիւն ցոյց տուաւ գրոց լեզւի գիտութեան մէջ: Այդ գիտութիւնը վաղ բացաւ նրա առաջ հայոց կլասիկական մատենագրութեան դանձարանը, և դեռ աշակերտ՝ Նահապիղեանը ծանօթացաւ մ.ր բոլոր ընտիր մատենագիրների գրւածներին: Մի կողմից ազգային գրականութեան և

պատմութեան այդ ջերմեռանդ ուսումնասիրութիւնը, միւս կողմից՝ լաւ ոգւով տոգորւած ազնիւ ընկերական շրջանը, էլ աւելի բորբոքեցին պատանու սրտում վառւած հայրենասիրական կրակը։ Սակայն ոչ աղքատիկ հայ գրականութիւնը, ոչ ընկերները, բնականաբար չէին կարող վճռական դեր խաղալ Նահաղիզեանի տաղանդի զարգացման և ուղղութեան մէջ։ Կրա համար հարկաւոր էր աւելի հարուստ գրականութիւն և աւելի լայն և զարգացած շրջան։ Այլի անցկացնելով «Ազատութեան ժամեր»-ի էջերը, դժւար չէ նկատել՝ որ հեղինակը բաւական ծանօթ է ուսաց և եւրոպական բանաստեղծների հետ. ահա այստեղ մի էսլիզրաֆ Պուշկինից, մի ուրիշ տեղ մի երկու տող Շէքսպիրից, մի երրորդ տեղում՝ մի թարգմանութիւն Գիթէից (եւրկինք անդորրիկ, լերինք են ի քուն՝ Հմմտ. Термонтовъ: „горныя вершины“)... Բայց ամենից հետաքրքրականն այն է, որ այդ փոքրիկ ժողովածուի վերնադիրը և առաջին երեսը յիշեցնում են ա՛յն անգլիացի բանաստեղծի անդրանիկ ժողովածուն, որի հզօր ազդեցութեանը ենթարկւեց մեր բանաստեղծը աւելի ուշ։ Յայտնի է, որ Բայռլնի բանաստեղծութիւնների առաջին գրքոյկը կրում էր նոյն վերտառութիւնը — „Hours of idleness“: (Ազատութեան ժամեր):

Օտարազգի գրականութեանը Նահաղիզեանին ծանօթ լինելուն աւելի փայլուն և շօշափելի ապացոյցներ է տալիս նրա «Լեռնի վիշապ»։ Այդ պօէմը ուրիշ բան չէ, բայց եթէ նմանողութիւն Բայռլնի «Չալլիդ-Հարուդ-ին»։ Ամբողջ տներ նրա մէջ փոխադրւած կամ ուղղակի թարգմանւած են անգլիացի հեղինակի ուսած թարգմանիչ Մինայեւից։ Այստեղ դնում ենք համեմատութեան համար մի քանի հատուածներ։

Թէ ով էր Լեռն, և ինչ նորա ցեղ —
Ձեզ ասելու չեմ, — աղ աւելորդ բան.
Մի հին հալ տանից, և ալն ոչ չքեղ,
Ծագում էր Լեռն։ Ալսքան բաւական.

Здѣсь говорить я не хочу,
Чѣмъ предокъ Чайльда занимался:
Объ этомъ просто умолчу.
Могу одно сказать: былъ знатенъ
Его почтенныхъ предковъ родъ.

Նա կեանք չէր վարում ճգնաւորական
Եւ միշտ խնդրելով խօսք ու դրոյցներ
Պատրաստ էր մեկնել ձեռն մոռէ -
մութեան, —

Не разъ средь бѣгнущаго собранья
Гарольдъ сидѣлъ и хмурилъ бровь,
Какъ будто прошлое страданье,
Иль оскорбленная любовь

Քաղ ինչո՞ւ, Անհաս, Դու խնայել ես Օ! для чего въ странѣ счастливой
Պարզեւել սոցա և ազատութիւն: Народъ свободный не живетъ?

Ինքը հովիւը սպառազինած Лишь кое-гдѣ бредеть пастухъ,
Պատասպարում է հօտը ոչխարի: Онъ долженъ быть вооруженнымъ,
Чтобъ защищать своихъ овецъ.

Բայռընի ազդեցութեան կնիքը դրոշմած է նաև «Աւոնի վշտի» հետ հրատարակած մանր քնարերգական բանաստեղծութիւնների վերայ ¹⁾: Հետաքրքրական է, որ այստեղ նկատուում է զլիսաւորապէս էլի «Չալլի-Հարոլլի» ազդեցութիւնը, թէև ներքև դրած համեմատական տախտակի մէջ ընթերցողը կը գտնէ հատածներ նաև Բայռընի լիրիկական կտորներից:

Ինչո՞ւ, ինչո՞ւ խաղացիք,
Չէ թնկում քաղցր երգեհոն,
Ինչո՞ւ, քնքուշ խաղուհիք,
Թողել էք ձեր պիանոն:
Մոռացել են դոքա ասես
Փափուկ սեւը կանացի.
Սրտում վրէժ, կարիճի պէս
Դիմում են վրանը ոտիսի:
Որպէս տան մէջ, նոցնպէս կուռում
Վանգնած են հեղ և հպարտ,
Դնդակներին կուրծք են ուղղում...

Къ чему-жъ гитару покидая,
Забывъ стыдливость и покой,
Теперь испанка молодая
За мечъ хватается рукой?
Забыты женскія приманки
И, новымъ мужествомъ горды,
Кругомъ становятся испанки
Съ своими братьями въ ряды;
И тѣ, которые когда-то
Боялись самыхъ легкихъ ранъ,
Вступивъ ногой въ военный станъ,
Становятъ грудь подъ штыкъ сол-
дата.

Չարմանում էք, ինչ ասում եմ.
Քէ դուք նոցա տեսնէիք
Խաղաղ օրով, երբ քաղցրադէմ
Բռնած կիթառն զեղեցիկ,
Փափուկ մասներն արծաթեւար
Նւագարանին զիպչելով,
Պարտէզի մէջ ծաղկաղալար,—
Դուք կը լսէիք անխռով

Но если бѣ ихъ вы увидали
Не въ дни войны, когда на васъ
Изъ подъ таинственной дали
Глядѣла нѣжно пара глазъ ²⁾
И у окна, въ часы досуга
...
...
Могли слышать рѣчи звукъ.

¹⁾ Сочинения лорда Байрона въ переводахъ русскихъ поэтовъ, т. I, издание третье, С. Петербургъ, 1883 г.

²⁾ Քիչ յետոյ նախադիզանը՝ խաղուհու տեսքը նկարագրելին՝ յիշատակում է նաև նրա «խառն անողի ջուր տալիս»:

Սիրող ձախը, սիրող հոգին,
Հիւսած սրտի թելերից.
Սիրել գիտէ իտալուհին,
Զրկւած բոլոր աշխարհից:

Ինձ ասացէք. ո՞վ ձեզանից,
Որի մէջ մարդու սիրտ կա,
Զը խեղդելով արատաւից,
Կարող է մնալ անզգայ,
Տեսանելով ալս ողբալի
Սրածութեան աւերած,
Եւ սրբութիւնն իտալիսալի
Նշաւակով անարգած:
Անթոմ եմ չար ժամանակ...

Մի կանք, մի շունչ ձեզ օգնական,
Առէք սուսեր—եւ լառանջ.
Դուք սիրտ ունիք ասպետական,
Յարձակեցէք ձախ ու աջ:
(«Իտալուհիք եւ իտալացիք»):

Եւ տէր, եւ ծառայ մի հողով ծածկւած:
(«Միջին Տիգրան»):

Մասին, քեզ միայն աղօտ երազով ¹⁾
Կարող էի ես երևակայել,
Եւ արւեստաւոր, սերտած տողերով
Քո գեղեցկութեան մեծութիւնն եր-
գել:

Հեռու ցնորներ. ես ականատես
Նշմարում եմ լիառն:

...
То не подумали бы все вы
Увидеть съ трепетом потомъ
У сарагосскихъ стѣнъ съ мечемъ
Воинственной испанской дѣвы,
Гдѣ и спокойна и строга—
Она съ оружіемъ ждетъ врага.

...
Она съ ребяческихъ пеленокъ
Служить любви осуждена.

О! кто безъ слезъ посмотритъ нынѣ
На край измученный отъ ранъ,
На искаженные святыни,
На жертвы хищныхъ англичанъ?
Будь проклятыя часть...

Сыны Испаніи, пронитесь!
Оружье въ руки и—впередъ!
На крикъ призывный отзовитесь:
Впередъ! васъ рыцарство зоветъ.

Рабъ и властитель стали прахомъ.

Парнасъ! тебя я вижу нынѣ
Не въ смутной грезѣ прежнихъ дней
Но съ вѣчнымъ снѣгомъ на вершинѣ
Подъ небомъ родины твоей,
Во всемъ твоёмъ величьи дикомъ!

...
Я зналъ тебя въ мечтахъ когда-то
Давно
Теперь я здѣсь! Сбылись мечты.

¹⁾ Հմմտ. Ալեշան «Եւ նախագահն Մասին»: ²⁾ Սուսերէն տեւքի մէջ քեզ յիշող:
«Счастливей всехъ поэтовъ нынѣ»:

Ծուռըր խոնարհած, ես ինձ բազմ-
 դուռըր
 Այժմ կարծելով²⁾ քան մի ալ կրգիչ,
 Քեզ հարկ եմ տալիս, դու մինչև անոր
 Սովոր ես ազդել հմալքդ թովիչ:
 Եւ թոթովում եմ որպէս երեխայ,
 Քեզ, Ազատ Մասիս, վերջապէս տե-
 սալ:
 («Մասիս»):

Но я молчу, позабывая
 Все, что хотѣлъ сказать въ стихахъ;
 Поэтовъ древнихъ вспоминая,
 Могу лишь только пасть во прахъ

 И молча думать въ этотъ часъ:
 Я вижу. наконецъ, Парнасъ!
 („Чайльдъ-Гарольдъ“).

Թէ սպիտակափառ շուշան ձեռներով
 Առնէիր այս թերթը—քո սիրով
 գրած,
 Թէ հոգի բերող կապուտ աչքերով
 Նայէիր սորան,—նով մեծ Աստուած,
 Ո՛րքան բաղդ, և ջուր, և երանութիւն
 Կարող էիր դու ինձ հասուցանել:
 Ո՛վ կուս նաղելի, թէ յանկաս լիչել
 Պոէտի անուն, ինչպէս մտածեց
 Եւ ինչպէս մեռաւ-կարող այս սողեր
 Թող ևս հնչեն պապանձած լարեր:
 Իմ ֆեմարն կեանքս քեզ ընծայ բերեց:
 («Սիրու կեանք»):

Какъ одинокая гробница
 Вниманье путника зоветъ,
 Такъ эта блѣдная страница
 Пусть милый взоръ твой привлечетъ.
 И если, послѣ многихъ лѣтъ.
 Прочтешь ты какъ мечталъ поэтъ,
 И вспомнишь, какъ тебя любилъ онъ,
 То думай, что его ужъ нѣтъ,
 Что сердце здѣсь похоронилъ онъ.
 („Въ Альбомъ“ пер. Лермонтова“).

Դիտեմ, կը կանգնի կեանքիս զօրու-
 թիւն,
 Կը մեռնի մարմին, կը փախ գիակ,
 Եւ անվերջ է այս լեզափոխութիւն:
 Բայց դու ո՛ւր, Հոգի, սֆիւնքս ան-
 դուշակ...
 («Սիրու կորուստ»):

Когда нашъ теплый трупъ по смер-
 ти остываетъ,
 Какой безвѣстный путь душа долж-
 на избрать?
 Оставивъ пыльный слѣдъ, отъ взо-
 ровъ исчезаетъ,
 Но какъ, куда, зачѣмъ-кто можетъ
 въ мірѣ знать?
 И что съ душой тогда?
 („Часы досуга“).

Ախ, ես չեմ կարող չը գովել այդ
 գիշեր,
 Այդ անուշ գիշեր, ուր խաղաղական
 Դաշըն խուսբերով դալիս են ժամեր
 Ահա լուսինը:

Вошла луна. Клянусь, нѣтъ мочи
 Мнѣ не хвалить такую ночь!

Ա'ն, առանց սիրոյ ինչ է մանկու-
թիւն,
Աստ, նոյն չէ, թէ խորին ծերութիւն,
Թէ սէրը գնաց, զրկանք աշխարհի
Եւ լանձն կ'առնում, և գալուստ մահի:
(«Խորհրդաւոր գիշեր»):

Ո'վ դու վաստակած անցաւոր,
Ե'կ, հանգստացիր. աչտեղ կեցու-
թիւն
Կարող ես գտնել. քեզ հովանաւոր
Կը լինեն ծառեր, և մի զարթուն
Ոգի կը ստանաս—Արբիւր, ներշնչիր
Բարեխառն զեփիւռ և օդ քաղցրու-
թեան.
Թէ հիւանդ ես դու. ինձ հաւատացիր—
Քո զգալարանքը և քո գոյութիւն
Եւ կը նորոգւեն և կ'առողջանան:
Եւ բարի քուն աչքքան անդորրիկ
Կը փակեն աչքերդ, մինչ վարդանման
Այդը կը շողալ, և նորածիղ
Կ'աւետէ քեզ օր: Աչտեղ, սիրելի,
Թռչում են ժամերն աննկատելի:
(«Անտառի մէջ»):

Ի դէպ է աչտեղ, երիտասարդներ,
Որ դեռ նւիրած չէք կնոջ սրտին,
Որ, դեռ ցնորած, չէք ճանաչել սէր,
Լսել խորհուրդս: Թէ ազ խրատին
Ականջ դնէիք—զուք կարող էիք
Լինել բաղդաւոր և սիրով աշխարհ
Ոտք կոխել հաստատ: Ո'վ դուք պա-
տանիք,
Խեղդեցէք կիրքը ձեր իշխանաբար,
Թէն բորբաքէր սիրով կրակով
Ձեր բոլոր կեանքը: Արձակ նախեցէք
Սիրած ընկերիդ աչքերին, տեսէք—
Ձը վառւեն նոքա մեղմ աղաչանքով,
Եւ հաւատացէք արտեր կ'սկսեն

Кто-жъ радъ, себя повѣривъ строго,
Упасть подъ тяжестью лѣтъ.
Когда въ немъ молодости много,
Но нѣтъ любви и счастья нѣтъ?
Увы! когда любовь пропала
И больше въ насъ не рѣцвѣтеть—
Пусть смерть на встрѣчу къ намъ
идеть.

Пускай же странникъ утомленный
Здѣсь отдохнетъ въ полдневный зной.
Свѣтла здѣсь зелень; благовонный
Играетъ вѣтеръ. Здѣсь больной
Въ себѣ найдетъ иныя силы:
Пусть этотъ воздухъ жадно пьетъ—
Не будутъ больше члены хилы
И сладкимъ своимъ онъ здѣсь заснетъ.
О странникъ! приходи же лѣтомъ
Сюда, въ цвѣтущій, пышный садъ:
Какъ дни и ночи пролетятъ—
Ты не замѣтишь въ мѣстѣ этомъ,
Ты не замѣтишь никогда,
Какъ долго тянутся года.

Тотъ сердце женщины знаетъ плохо,
Тотъ вовсе ихъ не могъ понять,
Кто лишь мольбой и силой вздоха
Старался страсть въ нихъ пробуж-
дать.

До побѣжденныхъ—нѣтъ имъ дѣла!
Люби подругу юнныхъ дней,
Но ей въ глаза гляди ты смѣло,
Не работнистуй передъ ней.
Умѣй сдержать порывы ласки,
Хотя-бъ очевъ въ крови кипѣлъ,
Будь дерзокъ съ женщиною, смѣлъ;
Подъ вѣѣшнимъ льдомъ наружной
маски

Եւ գալ նոցա մէջ—ե ձեզ կը սիրեն՝ Умѣй въ ней чувство раздражить—
(«Եւ դու աղպէս»)։ Тогда она начнетъ любить.

Դու դագաղունն ես—քո պատկերն Въ могилѣ ты, но образъ милый
պաշտաւ. Надолго память сберегла.

Կրում եմ իմ մէջ որպէս սրբութիւն։

Ո՛վ աչտահետե իմ սրտի համար О, вѣчно милая подруга!
Կարող է բերել նոր վշտութիւն. Кто мнѣ отдастъ тебя опять?
Ով նախամեծար ընկեր սիրելի...

Եւ դու, մեզ երգող այս տխուր խօսքեր, А ты, шгравшій намъ на лирѣ
Շուտով կը ստանաս քո կեանքի վախ- Вотъ эту пѣсню до конца,
ճան, Твой голосъ скоро стихнетъ въ мирѣ.
Շուտով կը լռեն քնարիդ լարեր... („Чайльдъ Гарольдъ“).
(«Եւ նա մեռաւ»)։

Կ ե ա ն ք ը—գեղեցիկ պարգև աշխար- Ты, человекъ, хотѣлъ одинъ
հում Къ землѣ прикованный, подняться
Եւ կեանքից հեռու ինչ ճանապարհ До тайнъ небесъ...
կալ. Жизнь-лучшій даръ. Путей не зная,
Ո՛վ մարդ, քո սիրտը ուր է վերա- Гдѣ жъ съ жизнью встрѣтишься
նում, иной;
Կապած, կաշկանդած երկրիս վերայ (,Часы досуга“).
(«Առ հրաժարւածը»)։

Ինչպէս ասացինք, անգլիացի պօէտը մենակ չէ առաջնորդում
մեր բանաստեղծին. այսպէս և «Լեոնի վշտի» և նորա հետ հրատա-
րակւած բանաստեղծութիւնների մէջ տեղ-տեղ աչքի են ընկնում և
ուրիշ օտարազգի բանաստեղծների ընթերցանութեան հետքերը։
Յիշենք դրանցից մի քանիսը։

Համէտը ըստ Կրոնէրերգի թարգմանութեան, առաջին գոր-
ծողութեան մենախօսութիւններից մէկի մէջ ասում է՝

Презрѣнный миръ: ты опустѣлый садъ,
Негодныхъ травъ пустое достоянье.

Պանիայի պրինցի այս հռչակաւոր բացականչութիւնը նահա-
զիզեանի պօէմի հերոսը փոխադրում է այսպէս՝

Սի՛րտ իմ, սիրտ իմ, վշտի չտաակ,
Պարտէզ թուռտ բոյսերի...

Երևելի իտալացի պօէտներին՝ մանաւանդ խոր է ազդել մեր բանաստեղծի վրայ Ջակոմո Լէօպարդին, որի մի („All Italia“) երգի արձագանքը երեք տեղ է հնչում Նազաղիզեանի գրքոյում:

Ես քանի անգամ երկնքից հարցրի,
Քանի աղօթքով դէպ երկիր դարձաւ,
Ասացէք զուք ինձ, որ բռնաւորի
Շարժեցաւ ձեռք անպարտիղ վերաւ:

Я землю спрашивалъ, я къ небу
обращался
Съ своей мольбой: скажите мнѣ,
скажите,
Кто осквернилъ ее? Кто гнусною
рукою
Ее обременилъ тяжелыми цѣпями.

Եւ միթէ ոչ ոք քո զաւակներից
Փաղատակելու չէ սուսեր ձեռին:

И изъ твоихъ сыновъ неужели никто
Въ твою защиту мечъ не обна-
жаетъ.

Պատկառելի կին, մալր մեր նետահար,
Աչրիութեան մէջ անպատիւ եղած,
Աչքերում արիւն, մազերն անլարդար.
Ապտակւած է, անբուժ խոցոտւած:
(«Ատոնի վիշտը»):

Теперь ея чело и грудь ея открыта.
И, горе, горе мнѣ, изранена она!
Вся въ язвахъ! Вся въ крови! О,
дивная жена —
Обезображена, поругана, избита!

И на землѣ сидитъ она въ тоскѣ и
страхѣ,
И волосы растрепаны, раздѣта...

Ճակատը սեղմած ծունկերի միջին,
Արիւնոտ շիթեր ծաղկում են աչքից:
(«Անահիտ»):

Между колѣнами свое лицо скры-
ваетъ
И плачетъ горько и ломаетъ руки.
(„Къ Італіа“) ¹⁾.

Գերմանացի բանաստեղծներից՝ Նազաղիզեանը իրաւամբ է նա-
խապատուութիւն տալիս «Պատուտի» ստեղծագործողին, թէի ինքը
աւելի համակրում ու հետևում է Հէյնէին:

Շատ գանձեր կան, շատ և ակներ
Ովկիանեան չատակում,

Mein Herz gleicht ganz dem Meere,
Hat Sturm und Ebb und Flut,

¹⁾ Տե՛ս նմանապէս «Հովիտ արամութեան» երես 153:

Շատ զգացմունք կան, շատ խորհուրդ- Und manche schöne Perle
 ներ In seiner Tiefe ruht ¹⁾։

Սիրով վառւածի սրտում։

Հէջնէի ազդեցութեան տակ է գրւած և մեր բանաստեղծի «Մի
 զւարթ մանկան» ոտանաւորը ²⁾։

Ուրախութիւն քեզ անսահման.

Ո՛վ դու մանուկ սիրելի.

Ծլես, ծաղկես և ծերանաս,

Տալով պտուղ արժանի.

Որպէս ծաղիկ, մանուկ քաղցր ես,

Եւ չնորհազեղ որպէս օր։

Մանուկ, մանուկ, ինձ չը խաբես

Միշտ կաց սպիւկէս լուսաւոր։

Du bist wie eine Blume,

So hold und schön und rein;

Ich schau' dich an, und Wehmut

Schleicht mir ins Herz hinein.

Mir ist, als ob ich die Hände

Aufs Haupt dir legen sollt'

Betend, dass Gott dich erhalte

So rein und schön und hold.

(«Buch der Lieder»)

Ֆրանսիական բանաստեղծութիւնը նմանապէս յայտնի չափով
 արձագանք է գտել Շահազիզեանի երգերի մէջ։ Կոմս Էմմանուէլի
 թարգմանութեան մէջ՝ Բ Ե Ր Ե Ն Ժ Է Ի մի քերթւածը ունի և այս տունը.

Ախտաբորբոք երիտասարդք

Իւրեանց անձը երջանիկ

Կը հաշւէին, թէ լինէին

Նորա ձեռքում խաղալիք,

որ Շահազիզեանը այսպէս է փոխադրում.

Շատ ախտաբորբոք երիտասարդներ

Ծաղկած մանկութեան վառուն շնորհով,

.....

Բաղդաւոր էին, թէ այդ կախարդիչ,

Այդ մաքուր կոյսը մի ժպիտ բաշխէր։

(«Մեծ թատրոնի մէջ»)։

1) Ռուսերէն տեքստը, որից օգտուել է Շահազիզեանը, այս բոլորէն չ'ունենք
 ձեռքի տակ։

2) Նմանութիւնը, յամենայն դէպս, շատ հեռաւոր է։

Ծանօթ. Խմբ.

Ռուսաց մատենագիրներից շատերը մասն ունեն մեր բանաստեղծի ստեղծագործութիւնների մէջ, բայց մենք կը բաւականանանք Շահազիզեանի ոտանաւորների մէջ միայն Լերմոնտովի ազդեցութեան հետքերը որոշելով:

Վերը մէջ բերած ¹⁾ «բայց սպասեցէ՛ք etc» խօսքերը փոխադրած են «Ժամանակիս Հերոսի» հեղինակի մի բանաստեղծութեան վերջաբանից.

Но есть и Божій судъ, наперетники разврата,
Есть грозный судія, онъ ждетъ,
Онъ недоступенъ звону злата...

(„На смерть Пушкина“).

Քիչ առաջ լիշա՞ծ «Տո՛ւք ինձ ձերմակ...» պատանեկական փորձի մէջ նմանապէս պարզ լսուով է ռուս բանաստեղծի մի երգի արձագանքը.

Отворите мнѣ темницу,
Дайте мнѣ сіиные дня,
Черноглазую дѣвицу,
Черногриваго коня...

Լերմոնտովից են փոխ առած և հետևեալ հատուածները՝

Եւ քո պատկերդ հոգուս միջում
Նկարեցաւ լուսատես.
Աչնտեղ, ո՞վ կուս, ինձ գերեցիր...
Այժմ չ'ունիմ մի ուրախ ժամ.
Տխուր է սիրտս իբր դադաղ,
Ես մեռանել մինչև անգամ
Յանկանում եմ, ո՛հ, աւանդ:
(«Առաջին սէր»):

И съ той поры безплотное видѣнье
Ношу въ душѣ моей, ласкаю и
люблю.
Окончивъ трудъ дневныхъ работъ,
Я часто о тебѣ мечтаю,
Я плачу, я томимъ тоской
Я умереть желаю съ ними.

Գիտէ՞ք, ես կեանքից ալ չեմ սպա-
սում Ի՞նչ և չեմ լինուի
Ոչ լաջողութիւն, ոչ պերճ ապագա,
Ի՞նչ և չեմ լինուի

Ужъ не жду отъ жизни ничего я
И не жаль мнѣ прошлаго ничуть,
Я ищу свободы и покоя,
Я не жалею о прошедшемъ ничуть.

¹⁾ «Մուրճ» № 3, երես 369:

Ես խանդարում եմ և չեմ ափսոսում. **Я-бъ хотѣлъ забыться и уснуть.**
 Ոչքնչ չեմ թողնում աշխարհիս վերա... **Но не тѣмъ холоднымъ сномъ могоу**
гилы
 Արդէն իմ կուրծքը ալ բարձրանում չէ **Я-бъ желалъ навѣки тамъ заснуть,**
 Եւ առաջաւ պէս չը գիտէ չնչել. **Чтобъ въ груди дрожали жизни силы,**
 Հանգիստ է խնդրում, բայց կը գտանէ **Чтобъ дыша, вздымалась тихо грудь-**
 Նորան հողի տակ... Նա կամի ճնջել:
 («Բանաստեղծի խորհրդածութիւն»).

Թող անմիտ մարդիկ փրփրան ու գոչեն— **Укоръ невѣжъ, укоръ людей—**
 Անվեհեր հոգին կը մնալ միշտ ազատ. **Души высокой не печалить;**
 Թող ալիք ժալուր զարկեն ու կոծեն— **Пускай шумитъ волна морей—**
 Նա, ծաղր առնելով, կը մնալ միշտ հաստատ. **Утесъ гранитный не повалить ¹⁾.**
 («Ազգային վիճակ»):

(Հարունախուլութիւն և վերջ հետեւեալ համարում)

1) Համեմատ. նմանապէս Նահապետ. Երես 163—169 և Լերմոնտ. «Она поетъ и звуки таютъ». «Ճշմարտախոս» (Երես 202) և «Пророкъ» և այլն:

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

?.—«ԻՆՁ Է ԿԱՅԾԱԿԸ». Ժողովրդական ընթերցանութեան համար (պատկերներով), 32 երես, տառ № 12, Թիֆլիս, տպարան «Արօր» 1891 թ. գինն է 5 կոպեկ:

Ժողովրդական-մանկական ընթերցանութեան համար բնագիտական բովանդակութեամբ հրատարակութիւնների մասին մի անգամ գրախօսութեան մէջ լիշած ենք (1890 թ. № 11) «Պատիկ է բալց չտտիկ է» գրքուկի առիթով: Մեր փոքրիկ գրականութիւնը մանաւանդ սղքատ է բնագիտական գրքուկներով. «Թաւամազ մեղու», «Հսկալ մըջիւն», «Ի՞նչ է խօսում սենեակը», «Մորեխ», «Պատիկ է բալց չտտիկ է» գրքուկներով համարեա բոլորովին սպառւում է աչդ պաշարը: «Ինչ է կալծակը» գրքուկով ուրեմն աւելանում է մի ցանկալի գիրք էլ լատնի բովանդակութեամբ:

Աչդ գրքուկում զիւրամատչելի և հետաքրքրական ձևով բացատրւում է որտտի և կալծակի պատճառը, հաւանցօրէն հասկացողութիւն է տրւում

նոյնպէս էլէքտրականութեան և ալն միջոցների մասին, որ մարդս գտել է կալծակի պատճառած վնասների դէմը առնելու համար: Պատկերներից մի քանիսը անւաջող են նկարած, պակասութիւն է նոյնպէս չը լիշատակելը բնաւ, թէ՛ ինչ լեզուից, կամ հեղինակի գրւածքից է փոխադրւած, կամ թարգմանւած:

«Ինչ է կալծակ»-ի նման գրքուկների ընթերցանութեան լալն տարածումը ժողովրդի մէջ, չատ նախապաշարմունքներից կ'ազատի նորան և կը ցուց տալ թէ ինչպէս մարդկային զննող միտքը կարող է ոչ միայն իմանալ բնութեան երևոյթների պատճառը, ալ և թէ աչդ հզօր ուժերը կարող է մարդ նաճել և իւր օգտին գործադրել:

Լ. Ս.

- 1) ԿԱՐԱՄՋԻՆ, Ն. Մ. — «ԹՇԻԱՌ ԵՂԻՍԱԲԵԹ», վէպիկ, թարգմանեց Դաւիթ Տէր-Դաւթեանց, 51 էրես, Թիֆլիզ, տպ. Մ. Վարդանեանցի, 1891 թ., գինն է 10 Կ :
- 2) ՆՈՅՆԸ. — ԹՇԻԱՌ ԼԵՁԱ, թարգմանութիւն Միքայէլ Բէզլարեանցի, Թիֆլիս, տպ. «Արօր» Տ. Նազարեանցի:

Ռուսաց գրականութեան պատմութեան մէջ Կարամզինը (1766—1826) պատուաւոր տեղ է բռնում: Մասնաւորապէս ռուս վիպագրութեանը արած ծառայութիւնը կապանում է նրա մէջ, որ նա «իջեցրեց նրան անհասանելի հերոսական աշխարհից՝ սովորական, ամենօրեայ և բոլորին հասկանալի կեանքի շրջանը: Մինչև այդ ժամանակը գոյութիւն ունեցող վէպերը վերաբերում էին գլխաւորապէս հերոսական պատմութիւնների տեսակին. նրանց մէջ դուրս էին բերած աւանդական, հնազարեան անձնատուութիւններ, որոնք նման չէին հասարակ մահկանացուներին իրանց ոգու և մարմնի պիւրութիւն» (Галаховъ. Исторія русской словесности): Այս նոր շրջանը նա սկսեց իւր «Бѣдная Лиза» վէպիկով, որը մեղ մտ երևաց այս վերջին ամսիս երկու թարգմանութիւններով:

Գործողութիւնը կատարւում է Մոսկւայի շրջակայքում. աչտեղ մի աղքատ խրճիթի մէջ «բնակւում էր չքնադագեղ Նզիսարէթը՝ իւր պառաւ մօր հետ: Նզիսարէթի հալը բաւականի հարուստ գիւղացի էր, սակաւ նրա մահից լսուող կիներ և դուստրը աղքատացան». մօր ծերութեան պատճառով ընտանիքի միակ կերակրողը Նզիսարէթն էր. «նա հիւսում էր քա-

թան, գործում էր գուլպէք, գարնան ժամանակ հաւաքում էր մրգեղէններ և այդ բոլորը ծախում էր Մոսկւայում: Անցաւ երկու տարի Նզիսարէթի մօր մահւանից լսուող: Մարգագետինը ծածկեց ծաղիկներով և Նզիսարէթը եկաւ Մոսկւա, իւր հետ շուշաններ բերելով»: Աչտեղ նա պատահում է «բնաւորութեամբ բարեամիտ, սակաւ թույլ և թեթեամիտ մի երիտասարդի», Երաստին, «Նզիսարէթի գեղեցկութիւնը նորա սրտի վերաջ տալաւորութիւն գործեց». նա գիտւում է Նզիսարէթին, 5 կուպէկանոց շուշանի փոխարէն առաջարկում է մէկ ռուբլի, բայց գիւղացի աղջիկը հրաժարւում է, ասելով. «Ինձ գնից աւելին հարկաւոր չէ»: Երաստը հարցնում է օրիորդի բնակարանը և ցանկութիւն է բացում, որ նա միայն իրան ծաղիկներ ծախէ: Երիտասարդը գրաւում է օրիորդի սիրտը. միւս օրը Նզիսարէթը ամենագեղեցիկ շուշաններ է քաղում, տանում է քաղաք. աչտեղ «չատերն էին նրանից կամենում ծաղիկներ գնել, բայց նա պատասխանում էր, թէ նորա ծախու չեն և նոքա աչքերը կարծես մի ուր և է բան էին փնտռում»:

Երեկոյեան նա վերադառնում է տուն, ծաղիկները թափում է Մոսկւա գետը. — «Ոչ ոք չը տիրացաւ ձեզ»

առաջ նա: Երաստը միջոց է գտնում մուռք գործել այդ բնականը, նա սիրում և սիրում է Եղիսաբէթից: Նա խոստանում է Եղիսաբէթին նորա հետը ամուսնանալ: Հասաւ ալն վալր-կեանը, «հիւր օրիորդի անարատութիւնը պէտք է չքանար: Պատօնական սէրը տեղի տւեց ալնպիսի զգացմանց, որոնք Երաստի համար նոր չէին»։ Նա սկսեց իւր ալցելութիւնները սակաւացնել: Պատերազմ սկսեց, Երաստը, իբրեւ զինւորական, ստիպւած էր Մոսկւայից հեռանալ: Անցնում է ժամանակ. մի օր Եղիսաբէթը Մոսկւա է գնում. ալստեղ նա հանգիպում է Երաստին և իմանում է, որ նա ամուսնացած է մի հարուստ ալրիի հետ: Յուսախաբւած օրիորդը վերջ է տալիս իւր կեանքին:

Ահա գրքի բովարդակութիւնը: Պատմութիւնը ոչ մի նշանաւոր բան չի ներկայացնում և նույն խոյ մեր բերած բովանդակութիւնից կարելի է նկատել նորա մի քանի անբնական կողմերը: Այժմեան զրականութիւնով փոքր ի չստէ կրթւած մէկի վրա հազիւ թէ նա մի առանձին տպաւորութիւն գործէ, գուցէ նշանակութիւն ունենալ հասարակ գրագէտների համար: Վէպիկի զլխաւոր արժանաւորութիւնը պատմական է. նա մի նորութիւն էր իւր ժամանակի համար, որը խորը տպաւորութիւն թողեց ժամանակակիցների վրա և հեղինակին հասարակութեան սիրելին դարձրեց:

B.

ՀԱՅՁԷ, ՊԱՌԻԼ.—ԵՆՈՆՅԱՅԻ ԲԵՐԴԷ՝ վէպիկ, գերմաներէնից թարգմ. Փիլիպպոս Վարդանեան, 108 երես, Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի. 1891 թ., գինն է 30 կ.:

Հաղար Եօթ հարիւր վաթսուհան թւականների վերջերումն էր. հզօր Ֆրանսիան պատրաստուած էր չարձակել միայն երկու հարիւր հաղար բնակիչ ունեցող Կորսիկայի վրա. Կորսիկացիք մտադիր չէին արժան ծախել իրանց ազատութիւնը. նրանք իրանց կողմից ևս սկսեցին պատրաստուել լուսահատ բնդդիմադրութեան համար: Ահա այդ ժամանակն էր, որ դրւեց Կոնցալ բերդի հիմքը: Սա հիւսիսային Կորսիկայի բանալին էր: Բերդի պաշտպանու-

թիւնը լանձնւեց գնդապետ Ջիակոմալին, հոգով զեռ երիտասարդ, բազմ հասակով արդէն ծեր մէկին: Բաւական չէր երկիրը բերդերով ամրացնել, աւելի անհրաժեշտ էր ամրացնել Կորսիկացիների սիրտը ազատութեան սուրբ գաղափարով. հարկաւոր էր կանչել ամեն մի Կորսիկացու, որ նա դուրս գար պատերազմի դաշտը հալոնների ու ազատութեան թշնամու զէմ կռուելու համար: Այս բոլորը մեծ աջողութեամբ կարող էր անել հոգևորականութիւնը:

որը կորսիկալում, իբրև մի կաթուղի-
կական երկրում, մեծ աղղկեցութիւն
ունէր իւր հօտի վրայ, բայց ընդհա-
կառակը «մի քանի քահանայ և մա-
նաւանդ Կանարիի (հիւսիսային Կոր-
սիկայի գլխաւոր քաղաքներից մէկը)
քահանան ալտուրի սկզբունքներ էին
քարոզում՝ թէ նրանք, խաղաղու-
թեան պաշտօնեայ լինելով, չը պիտի
մասնակցեն աշխարհային շփոթնե-
րին».— թէ թշնամիները և ընկերները
միասկէս քրիստոնեայ լինելով՝ հա-
ւատար օրհնութեան կարօտ են.—
թէ սուրբ գրքի ուսման նպատկով՝ մի
քահանայ, որ իւր ձեռքերը մկրտած
մարդու արեան մէջ է թաթախում,
ոչ միայն դատապարտութեան, այլ և
նշուլքի արժանի է,— և ուրիշ ալ-
տուրի բաներ: Ասեա թէ մարդս տէր-
տէր լինելուց առաջ իւր հայրենեաց
որդին է՝: Պատկի զօրավարի ական-
ջին հասան Կանարիի քահանայի ալս
քարոզները. նա խոկոյննորան հեռա-
ցրեց եկեղեցուց, նորա տեղը նշա-
նակելով Ատեմբրէ քահանային:
Ծխականները, սիրելով իրանց հին
քահանային, զժող էին ալս փոփո-
խութիւնից: Առաջիկայ կիւրակէն
Ատեմբրէ քահանան իրան ծխական-
ներին ծանօթացնելու համար բեմ
բարձրանալով, ի միջի ալոց ասաց.
«Իմացէք, ամենասիրելի որդեակներ,
որ ես էլ ձեզ նման պաշտում եմ
երկնքում մի սուրբ Նրորդութիւն,
բայց երկրի վրայ էլ դա: անում ու
չարդում եմ մի երրորդութիւն, և ալս
երկրային երրորդութիւնից ահաւա-
սիկ սա է հայրը».— Եւ նա հանեց չու-
ջարի տակից մի հրացան ու զրեց
սեղանի վրայ:

«Եւ սա է որդին».

Աչժմ նա հանեց զրաբանից մի ա-
հաղին ատրճանակ և զրաւ սեղանի
վերայ:

— Վերջապէս ահա և սուրբ հոգին:

Այս խօսքերի վրայ նա բաց արաւ
իւր դօտին և գուրս հանեց մի դա-
շտն, որ նոյնպէս զրեց սեղանի վրայ
միւս ղէնքերի մօտ:

Մի ալտուրի մարդով փոխարի-
նեց հին քահանային զօրավար Պատ-
կին: Նոր քահանայի առաջին զոր-
ծերից մէկն էր, հեռացնելով ներքին
թշնամութիւնը, միացնել ներքին ու-
մերը արտաքին թշնամու դէմ. ալս-
պէս նրան աջողակեց հաշտեցնել եր-
կու նշանաւոր ընտանիքների ներ-
կալացուցիչներին՝ Օրոսնտո Ալեք-
սանդրին և Ֆրանչէ Օրթիկոնին:
(Ծանօթ. գէնը 35—37 երեսների
վրայ հեղինակը պատմում է հայր
Ատեմբրէի ջանքերը ամուսնական
կապերով ամրացնել ալս երկու ըն-
տանիքների հաշտութիւնը, Ֆրան-
չէի որդի՝ Զիամէթուի և Օրոսնտուի
աղջիկ՝ Կատալինիայի հարսանիքը,
թէ ինչ սովորութիւններով է կա-
տարում հարսանիքը Կորսիկայում,
ինչ պարեր ևն պարում, ինչ ջանքեր
գործ զրին կանարացիք հարսանիքի
սովորով ներկայացում տալու, ինչ
հաղուստներ ունէին ղերականաւոր-
ները, ինչեր պատահեցին ներկայաց-
ման ժամանակ և ալս և ալս): Ինչ
սպասում էին, ալս էլ կատարեց:
1768 թ. օգոստոսի 4-ին Ֆրանսիա-
ցիք ահագին ուժով լարձակեցին
Կորսիկայի վրայ. մի քանի բերդեր
վերցնելուց փառ, նրանք պաշարե-
ցին Նոնյանու Պաշարումը ալսբան

անակնկալ էր եղել, որ չէր աջողակ
ուտելիքի և ջրի պաշար վերցնելու.
բերդապահը, ինչպէս ասացինք, Զխա-
կոման էր. բերդը պաշտպանուում էր
5—6 պահակով և մի թնդանօթով:
Պաշտպանւելու մասին զեռ կարելի
էր դնել մտածել, եթէ միայն ուտե-
լիքի պաշարը չը սպառուէր: Գնդա-
պետը վճռել էր թող տալ Ֆրան-
սիացիներին ներս մտնել բերդը և
ապա կրակ տալով վառօղի շտեմա-
րանը՝ օդ թռցնել բերդը իրանց
թշնամիների հետ միասին: Զինուոր-
ները համաձայն չէին այդ վճռի հետ,
նրանք կարծում էին, թէ այդ բանը
մի հատ մարդ էլ կարող է անել.
նրանք այդ իմաստով մի նամակ թո-
ղին գնդապետին և զիչերով հեռա-
ցան բերդից: Նամակը ընկճող տալա-
ւորութիւն թողեց գնդապետի վրա.
Նա լսող պատմում էր: «Իմ պահա-
պան հրեշտակը երկտասարդի արիւն
էր ամէլ այս դառամած ջղերիս
մէջ»,—ապա հօթանասունչորս ամիս
սիրտս վառւել էր հալոննասիրու-
թան ամենասուրբ կրակով, և ես ար-
դէն սկսել էի հերոսական մահան
նախարհ կրանքը վալելել: Բայց խե-
ղօքութիւնը, նղովից արմատ խելօքու-
թիւնը, որ ամեն տկար որոշումների
մաղրն է և ամեն վեհանձն վճիռների
կորձանջը, —տունս քանդեց...: Ահա
այդ բոլիւն էր, որ հանձարեղ բան
երեսայ ինձ՝ բանակցութեան միջո-
ցով մեր թնդանօթներ և քառասուն
կեպինար վառօղը թշնամու ձեռքից
փրկելու միտքը, որ և կատարեցի:
Գուցէ երկրպէս էլ մաս ունէր այդ
հաշիւ մէջ: Այսպէս թէ աջպէս
չը կատարուեց այն, ինչ իբրեւ պե-

տահատ հալոննասիրութեան միայն մի
վեհանձն օրինակ բաւական կը լինէր
այն սրբազան հուրը վառւելու կոր-
սերի սրտում, —այն հուրը, որը խ-
կուն ալրում, լափում և ամբն է
ղարծնում ամեն մի տնային հոգ,
արծաթի սէր, զոյքերի, ինքնապա-
հութեան ետական կիրք: Ֆրանսիա-
ցիք սխալ գաղափար ունէին պաշար-
ւածների մասին. միւս օրը նրանք
բանակցութիւն սկսեցին գնդապետի
հետ և համաձայնեցին թող տալ
պաշարւածներին, հեռանալով պատե-
րազմական պատիւներով, դուրս տա-
նել զէնքերը ու պաշարը և այդ բո-
լորը իրանց սալելով տեղափոխել
կորսիկացիների բանակը: Մեծ եղաւ
նրանց զարմանքը ու ամօթը, երբ
սպասած զօրքերի փոխանակ՝ բերդից
դուրս եկաւ միայն ծեր Զխակոմոն,
ձեռքին բռնած կորսիկեան զօջակը:
Անձնատուր եղաւ նոցայի բերդը. նրա
հետ ընկճեց և ամբողջ կորսիկան:
Ֆրանսիական զօրքերի հետ ներս
մտան և ֆրանսիական սովորութիւննե-
րը, ֆրանսիական լեզուն: Պատահում
են մարդիկ, որոնք արհամարանքով են
վերաբերում զէպ ամենը, ինչ հու-
րենի է և իբրեւ մարմնացած պար-
սաւանք ալգալիսիներին՝ ժալուրի
վրալ ցցւած են չին բերդերի աւերակ-
ները՝ որոնք չիչեցնում են որդիներին
հալրերի աղնիւ ու աղատ անցեալի
մասին:

Մենք զիտմամբ ալքան մանրա-
մասն պատմեցինք զրքի բովանդա-
կութիւնը, համողւած լինելով որ այս
կերպով աւելի լաւ, քան մեր սկիա-
կան դատողութիւններով, կարող ենք
ծանօթացնել ընթերցողներին զրքի

բնւաւորութեան և նշանակութեան հետ: Յանկալի է, որ մեր կեանքի առաջադիմութեան նախանձախնդրեանը նպաստէին ալս համակրելի գրքի տարածելուն:

Ձեռք կարող մի փաքրիկ նկատողութիւն չանել գրքի մի պակասութեան մասին: Վերի մենք ասացինք, որ հեղինակը ամբողջ 35—37 երեսներում պատմում է թէ ինչ սովորութիւններով է կատարւում հարսանիքը Կորսիկալում, ինչ տեսակ պարեր կան աչնուդ, ինչ կերպով գլուխ բերեց ներկայացումը և ալն: Որքան և ալ տեղեկութիւնները ինքն ըստ ինքեան բնասորոշ լինեն, մի երկրի հետ ծանօթանալու համար, բալց պէտք է խոստովանւած, որ դրանք շատ հեռու չարեւրութիւն ունեն Նոնցալի

բերդում ալ ժամանակ կատարող իրողութիւնների հետ: Այլալիս աննպատակաւարմար մանրամասնութիւններ, աւելորդաբանութիւններ, բռնելով գրքի համարեա 1/3, կարող են ձանձրացնել ընթերցողներին. կարող է պատահել, որ ընթերցողներից շատերը վաղեմ գիրքը, առանց միայն ունենալու ալ ևս վերադառնալ դէպի նա: Գա շատ ցաւալի կը լինէր և մենք խորհուրդ կը տալինք մեր ընթերցողներին համբերութեամբ անցնել ալ տեղերը, իսկ աւելի ծուլերին կ'առաջարկէինք բայ թողնել երես 27—62 մինչ 4-րդ սուղներքերից ալ թույցքը պնդան էլ մեծ կորուստ չի լինիլ փտաղալ անցքերը հասկանալու համար:

B.

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ, ԱՂ.— ՀԱՎԻԻ ՀԱՐՍՆԱՅՈՒՆ, (հայի անցեալից): Մոսկւա, տպարան Մ. Բարխուդարեանցի, 1891 թ., փոքր քառածալ, 35 երես, տառ № 12, գինն է 5 կոպէկ:

Հովիւ Աբէլը սիրահարած է մի գիւղացի աղջկալ հետ: Վերջինիս ծերունի հալըր մի օր գալիս է տուն և ասում թէ «փախիր Նազլուն», որովհետեւ՝

«Աչնուդ գիւղի մէջ ստոր գիւղացիք Տանուտէրի հետ պալման նն գրել Բեզ խլիլ ինձնից, իմ սիրուն գասրիկ. Թուրք աղալի մօտ քեզ ընծալ տանել:

Ինչպէս տեսնում էք, հալ ժողովուրդը «փախնալով աղալի մօտակից», հալրենի գիւղից հալածում է

«սիրուն Նազլուն»: Բողբոլին տարօրինակ կերպով հալըր ինքը չէ կամեում աղատուել, ալ ուղում է մնալ տանը միադնակ և, օրհնելով իւր աղջկալ և Աբէլի ապագալ պսակը, մեռնում է: Բալց ինչ է անում Աբէլը: Ընթերցողին անչալս պատճառով՝

«Արդէն կապել էր խեղճի կոները Եւ բանտարկել էր չարասիրտ աղան»: Նազլուն էլ ընկնում է սար ու քար իւր սիրածին սրտուելու: Վերջապէս մի անգամ, երբ Նազլուն կանգնած

էր մի ազգիւրի մօտ, մօտենում է նրան մի ինչ որ «բարեսիրտ Ֆաթմա», նորա մանկութեան միակ ընկերը, որին փախցրել էր աւաղակ Ասկարը: Չանազան քնքով խօսքեր արտասանելուց լետու, Ֆաթման տանում է Նազլուն և թագցնում մի քարադրի մէջ: Նոյն երեկոյան թափառական աղջիկը, զգեստաւորւած տղի շորով, գալիս է աւաղակի մօտ և խնդրում, որ վերցնի իրան իրիւս ծառայ: Միւս օր Նազլուն արածեցնում է տիրոջ հորթերին: Բայց ինչ եղաւ Աբէլը: Ահա ինչ եղաւ. նա արդէն աղատել է իւր կապանքից և «թողնելով գիւղում իւր ոչխարները Սիրիւղն փնտռել անշաղկապ վայելք»:

Սա էլ է ընկնում սար ու քար, անտառների և, ինչպէս ալլ անում են Նալ և Գամաղեանթին, հարցումներ է տալիս անշունչ առարկաներին թէ արդեօք չեն տեսել նորա սիրուհուն: Մի անգամ, երբ Նազլուն և Ֆաթման հով տեղում նստած իրար համբուրելով և քնքշութիւններ անելով զրոյց էին անում, հրաջանը որոտում է, Նազլուն գետին է ընկնում, Ֆաթման նոյնպէս վիրաւորւած է: Բանից երևում է, որ ալլ եղբւրնադործը աւաղակ Ասկարն է: Երբ Ֆաթման լալտնում է թէ սպանւածը աղջիկն է, Ասկարը՝ արդարանալով, որ իրան խաբել և զրդել է սպանութեան իւր երկրորդ կին Ջիբան, զղջում է արածից, ներողութիւն է խնդրում գիւղից, լալիս, համբուրում: Եւ ապա, աւաղակապետ Կարլոս Մօօրի հման՝ իւր կնոջ սպանել տալուց լետու

...Սկսեցած որտով

Գնում է մտնում դատաստանատուն: Յանցանքի համար անկեղծ լալտելով խնդրում է բանալ գործին քննութիւն:

Ալլ միջոցներին Աբէլի հալրենի գիւղում թուրք աղան և հալ ժողովուրդը ծախում են Նազլունի կապերը: Աբէլն էլ, երկար թափառելուց լետու գտնում է իւր սիրուհու «տեղերեզմանը» և, ընթերցողին անշաղկապաճառով, նա ճանաչում է անտեղ թաղւածին: Նա ուշաթափ գետին է ընկնում և երբ ուշքի է գալիս, խենթանում է: Հէնց ալլպէս էլ

«Եւ նա խոնարհեց դռը վիճակին. Մինչև գերեզման մնաց խելազար»:

Ահա ամբողջ կոմիկիան: Ես, ճշմարիտ, դժւարանում եմ գտնել այս պօէմայի մէջ տեղծագործութեան մի հատիկ նշույ: Ո՛չ իրական կեանք, ոչ մի բնորոշ խօսակցութիւն, ոչ մի ջերմ զգացում: Իսկական հալ գիւղի և ժողովրդի կեանքի նկարագրութեան ակնարկ անգամ չը կա: Լեզուն, ոճը — բոլորովին պրոզա, և այն էլ անհամ պրոզա:

Ալլպիսի գրւածներին վիճակւած է մեռնել լոյս տեսնելուց առաջին օրերում: Ոչ միայն արտատպւելու (նա մի անգամ տպւեց անցեալ 1890 թւին «Արձագանքում»), տպագրութեան անգամ նա անարժան է: Արհեստական միջոցներով չի կարելի գրականական դիակներ պահել. եթէ պահեն, կը պահեն, ինչպէս եզրադրական զմուռած դիակներ, որոնց հոգին չի ներշնչւելու, եթէ հազար տարիներ էլ անցնեն:

Մ.

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԳԵՐ

1) УМИКОВЪ, Н., студентъ.—Физиологія бѣлковаго запаса въ животномъ организмѣ. Работа удостоена Медицинскимъ факультетомъ золотой медалі. Изъ физиолога химической лабораторіи Харьковск. университета. *գրին է?*

2) ՄԱՄԻՈՆԵԱՆ, Ա.—«Հովի հարճացուն (Հալի անցեալից)»։ Մոսկւա, տպ. Մ. Բարխուդարեանի։ 1891, գրին է 5 կոպ.

3) ՏՈՒՍՏՅՈՅ, Լ. կոմս.—«Ատուած գիտէ արդարն ու մեղաւորը, բայց դատաստանը չուտ չի անում»։ Թարգմ. Մ. Ա. Հրատարակութիւն Թիֆլիսի լճկերութեան հալերէն զրքերի հրատարակութեան № 31։ Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 1891, գրին է 7 կոպ.

4) ՎԱԼԴԵՆԻՐ, Դ.—«Հաւատարիմ Սաւիտրին»։ Հնդկական վէպ։ Դերմաներէնից թարգմ. Փիլ. Վարդանեան, գրին է? Հրատարակութիւն Նոյն ընկերութեան № 32։ Թիֆլիս, տպ. Յովհաննէս Մարտիրոսեանցի 1891 թ. գրին է 10 կոպէկ։

5) ՍՊԻՐԻ, Եօհաննա,—«Վարդ-Բէսլին»։ Դերմաներէնից թարգմ. Ի. Յ.—Հրատարակութիւն Նոյն ընկերութեան № 29. Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի, 1891 թ., գրին է 10 կոպ.

6) ՄՈՊԱՍԱՆ, Դի գր.—«Գիւղական աղքատ»։ Թարգմ. օր. Մ. Մալուման։ Թիֆլիս. տպ. Տ. Նազարեանցի, 1891 թ., գրին է 5 կ.

7) ՇՁԵԴՐԻՆ.—«Գիւղական Վարժուհի»։ Նոյն տպարան, 1891 թ., գրին է 5 կ.

8) «ԳԻՒՂԱԿԱՆ ԱՂԲԱՏ».—Նոյն տպ., գրին է 5 կ.

9) ԲԱՀԱԹԲԵԱՆ, ԱԻԵՏԻՔ.—«Հին հայոց տաղաչափական արւեստը»։ Դուշի, տպ. Մանուկի Յակոբեանցի, 1891 թ., գրին է 50 կոպ.

10) ՍԱՀԱԿԵԱՆՅ, ՍԱՀԱԿ քահանայ, միարան Մոզնու Սուրբ Դէորդ եկեղեցու.—«Սրբազան պատմութիւն Հին-Ուխտի»։ Երկրորդ տպագրութիւն։ Հրատ. Կենտրոն. զրաւաճառանցի։ Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանի 1891 թ., գրին է 40 կոպ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄՍԻԱՅ ՔՐՈՆԻԿ

Կաթողիկոսի մահը.—Կուսակրօնի սեփականութեան խնդիրը.—Հայոց Հրատարակչական Ընկերութեան ընդհանուր ժողովը.—Շէլգունով:

Քրիստոսի խաչելութեան, մահւան և լարութեան ամիսը այս տարի առանձին բօթաբեր ամիս էր երկրալին մեծութիւններն համար: Հէնց մահւան լուրեր են որ հետագիրը աւետում էր մերթ Բերլինից, մերթ Պետերբուրգից և այլ տեղերից: Հաջորդը նմանապէս բաժին ունեցաւ ալ մահացութեան տուրքի մէջ, և ալն էլ դեռ ամենից խոշորը, ամենից զդաւին՝ գնովը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կեանքի, Մակար Ի-ի, որ վախճանեց անցեալ ապրիլի 16-ին, քիչ օրեր Ջատիկի տօնից առաջ: Մի առժամանակ Ս. Եջմիածինը զաւաւ ընդհանուր ուշադրութեան կենտրոնը, համարձակ կարելի է ասել՝ ամբողջ Առաջաւոր Ասիայի համար, դուրս մէջ և ամբողջ Կովկասը, չը խօսած ալն աւելի հեռաւոր սահմանների մասին, մինչ որ այսպէս կամ ալնպէս հասնում են Կաթողիկոսական աթոռանիստ վարի եկեղեցական-վարչական ազդեցութիւնը, ոգեկան կապը կամ պատմական շխտակները:

Մի ինչ որ տարօրինակ թախիծի արտապատութիւն ունի ալն սգաւոր զանգահարութիւնը, որ ընդունել է լուսաւորչական եկեղեցին մահադուժը չափարարելու համար: Ալն չտալ՝ թէն ոչ առանց տաքտի զանգահարութիւնը, որով սովորապէս ծխականները հրաւիրում են եկեղեցին աղօթելու՝ տեղիք է տալիս կամաց, հասահատ վարնող զանգաղ, զանգահարութեան որ ալնքան լարմարեցրած է մարդկային տխուր տրամադրութեան:

Ալգալիսի զանգահարութիւնը Թիֆլիսում ինձ սկսեց լսելի լինել միալն կէսօրից շատ անց: Եւ դեռ եղելութիւնից ոչինչ չը գիտէի, ալնպէս որ իմ մի ծանօթ կնոջ հարցմունքին, որ հիւր էր իմ տանը, թէ ալ ինչ է նշանակում ալգալիս զանգակ տալը՝ ես բաւականի միամիտ կերպով

պատասխանեցի թէ՛ ով գիտէ, երեւի մեծ պատառ վերջին շարաթը ալդպէս պէտք է անել: Միմիայն մի քանի ժամ անց, դէպի իրիկուն, զուրս գալով փողոցը և պատահելով իրար հետ խօսակցող երկու ծանօթներին՝ ևս խնայալ թիֆլիս հասած հեռագիրներին աչն լուրը թէ Մակար I կաթողիկոսը վախճանել է զեռ ևս առաւօտաւ մօտ 7 ժամին:

Չարմանալի իրողութիւն, և մեկնեցէք ալդ ինչպէս կամենաք, բայց ևս բնաորոշ եմ գտնում, որ կաթողիկոսի մահւան լուրը առաջին ժամերում ամբողջապէս չը կլանեց մեր ուշադրութիւնը, աչնպէս որ մի ժամ զուրսը եղած ժամանակ՝ որքան ծանօթներ էլ որ պատահում էին, բայց մեծ մասամբ խօսակցութիւնը պտտում էր Հրատարակչական Ընկերութեան ապրիլի 13-ին կալացած ընդհանուր ժողովի խնդրի շուրջը: Բայց ևս ալդ մեկնում եմ նրանով որ կաթողիկոսի մեծ հասակը սպասեցնել էր տալիս մի ալդպիսի վախճան, և երկրորդ՝ որ նորա մահով մի աչնպիսի խնդիր էր բացւում ամբողջ ազգի առաջ, որի ծաւալը շատ է մեծ, որպէս զի կարելի լինի շատ մտքեր փոխանակել հէնց առաջին իսկ ժամում: Ով պէտք է լինի հանգուցեալի լաջորդը, — դա մի աչնպիսի խնդիր է, որը ամեն մէկի մտքում պտտում է հէնց առաջին իսկ ժամից, բայց և աչնքան նւիրական մի խնդիր է, որ մարդ որքաւ պղծութիւն է համարում խօսել ու գործել առաջին իսկ տպաւորութիւնների ազդեցութեան ներքոյ: Բնական է ուրեմն որ առաջին խօսակցութիւնները աւելի վերաբերւում էին կաթողիկոսի մահւան հանդամանքների մանրամասնութիւններին: Բայց, Տէր Աստուած, ինչ բաներ միայն չէին պատմում ալդ մասին: Խօ մենք գիտենք թէ իսկութիւնը միայն շատ ուշ կ'իմանանք, զույգ աւելի ուշ, քան մեզ հարկաւոր է: Ասիալում ամեն ինչ մութն է, ամեն ինչ խորհրդաւորութեան քօղով պատել գիտեն: Բայց որ աւելի ցաւալին է, ալդ աչն է, որ լաճախ իրականութիւնը աւելի էլ խորհրդաւոր է:

Մի բան միայն եկաւ խառնելու մեծ հանդէսների փառահեղութիւնը, ալդ աչն կողոպուտն է, որին ենթարկւեց հանգուցեալ կաթողիկոսի զուրսը: Մի Հաջի Յակոբ, կաթողիկոսի ալդ երկարամեալ ծառան և միանդամալն նորա փեսան՝ ժամանակը եկած համարեց մաքրապարզել աչն, ինչին իւր ձեռքերը միայն հառնել կարող են: Սա մի ախուր իրողութիւն է, բայց երբեք կարծեմ չը պատահեց որ ազգը ապահով կենալ թէ իջմիածինը կամ կաթողիկոսի գոյքը չի կողոպուել մի որ և իցէ մերձաւորի ձեռքով: Ամեն անգամ որ մի կաթողիկոս վախճանւում է, ալդ խնդիրը նորից ծաղում է: Յիշում եմ Գէորգ IV կաթողիկոսի մահւանից չետ պատահած դէպքերը. և ահա նորից մի նման պատմութիւն, բայց արդէն իսկապէս հաստատւած: Եւ Հաջի Յակոբ և չը գիտեմ ինչ որ մի Բերդ բանտում են:

Բայց երանի, հաղար երանի որ եթէ վերջ ի վերջոյ կորուստ լինի — աչն գումարից աւելի չը լինի, քան ինչ ալժմ հրապարակապէս լալտնի է:

Նշխարական կորուստը զրամով և իրեղէններով ցուց են տալիս մինչ 30 հազար բուբլի:

«Արձագանք»-ի ասելով հանգուցեալ կաթողիկոսը կտակ ունէր թողած, մի կտակ, որին իբր վիսնէր, պէտք է տոբադրած լինէն Մամբրէ եպիսկոպոս Սաճառարեան, ալժմեալ առաջնորդը Թիֆլիսի թեմի, և Արիտաակէս եպիսկոպոս Սեդրակեան, նոյն թեմի նախկին առաջնորդը: Ստորագրութիւնը պէտք է կատարւած լինի, երբ հանգուցեալ կաթողիկոսը Թիֆլիս էր 1888 թուականին, թագաւոր-կալսեր Կովկաս դալու օրերը: Արդ ալժմ ալ կտակը չի չափնուում: Պէտք է ենթադրել որ ալժ կտակը, ալ իրեղէնների հետ միասին, մասնակ է կողոպուտի. բայց ալժ ժամանակ նա երևի կը գտնէի, քանի որ կասկածաւածները բռնւած են:

դ) Պատահմամբ հիւր դալով 'Աուբալ' բաղաւորնակ մեծ. պ. Յակովբ Ագամեանցը և ներկայ գտնւելով մի ժողովում, բազուցիների լատուկ առատաձեռնութեամբ խոստացաւ տարեկան մի հարիւր ռուբլի նպաստ տալ 'Աուբալի' դպրոցին և աշխատել իւր բարեկամների մէջ ևս նւէրներ ժողովել չօգուտ մեր դպրոցին:

դ) Նոյն աչս՝ ժողովում կազմեցաւ մի համախօսական, որով պ. պ. ներկայ եղողները և լատու հասարակութեան ուսումնասէր մասը ընդունեց հետեւեալ վճիռը: Գպրոցապատկան դումարը բաժանել վստահելի անձինքների մէջ, իւրաքանչիւրին հարիւրական լուբլի՝ պարտամուրհակ առնելով Հոգաբարձութեան անւամբ, իւրաքանչիւր եռամեակի սկզբում տոկոս վճարելով հնգական ռուբլի, կամ տարեկան 20% (Իսկապէս 20% -ը, որ մենք գործ ենք ածում տոկոսադրամ կամ արդիւնք անուններով, պէտք է չընդունել որպէս տոկոսիք, ալ որպէս ժողովրդական նւէր՝ չատկացրած իրանց դպրոցին, որ կառավարում է իրանց ձեռքով):

Այդ օրից սկսած՝ Հոգաբարձութիւնս սկսեց բաժանել իւր մօտ եղած առձեռն 1699 ռ. 38 կոպ. հաւատալի և վստահելի անձանց, որին շատ և որին քիչ խնդրելով: Բացի դորանից՝ Հոգաբարձութիւնս ամենաչն կերպ աշխատել է, իւր մօտ 30—50 ռուբլուց աւելի առձեռն փող չը պահել, որպէս վի դպրոցի եկամուտը չը վնասուի: Նոյն իսկ Հոգաբարձութեանս անդամները լաճախ իրանց սեպհականութիւնից հողալով դպրոցի ընթացիկ ծախքերը, երեք ամսից լատու միաչն ստացել են ալդ դումարը, երբ եռամսեալ տոկոսները ժողովել են: Իսկ եռամսեակներից ժողոված 5-ական մանէթներից երբ լրացել է 100 ռ., իսկոչն և եթ մտցրել է դարձեալ նոյն կերպ շահեցողութեան մէջ՝ համաձայն համախօսական վճռի:

ե) Տեսնելով որ արդիւնաւոր շահեցողութիւնը կազմում է դպրոցի նիւթական առաջին աղբիւրը, Շամախու կօնսիստօրիալի հետ երկար դրապրութիւններից լատու՝ վերջապէս վերջին տարիս՝ 1889 թ. մարտ ամսին աջողեցաւ մեզ արքունական բանկի արժեթղթերից 1900 ռ. վերածել՝ կանխիկ դրամի և նոյն կարգով բաժանել հալ-ժողովրդականաց վստահելի անձանց:

զ) Հիմնաւոր, օրինական և պարտադիր դրութեան մէջ դնելով վերի լիշած մեր գործողութիւնը, մենք ամենաչն աշխատութեամբ հոգ տարանք,

նւիրատու միանւագ և տարեկան բաժանորդներ գտնել, և ինչպէս չարգելի ընթերցողը կը տեսնէ ներփակած հաշիւի՝ իւրաքանչիւր տարի ամենաշն շնորհակալութեամբ ստացել ենք նւերներ մեր բազմաբնակ համալսարանից և Ղուբայի հաշիւատարակութիւնից:

է) Նոյն իսկ և ազգաշահ Մարդասիրական Ընկ. Բազալ՝ հէնց մեր գործունէութեան առաջին քալում (1885 թ. յունւար) մեզ խրախուսեց և չարգելով մեր միջնորդութիւնը՝ սահմանեց տալ մեր դպրոցին տարեկան 200-ական ռուբլի նպաստ չորս տարեալ ընթացքում, որի վճարումը թէև մեր դպրոցների ընդհանուր փակմամբ (1885 թ. մարտ) ընդհատել էր, ալսու ամենաշնիւ սկսեցաւ շարունակել դպրոցների կրկին բացելովը 1886—87 ուս. տարւանից: Յոսով ենք, որ որոշւած չորս տարուց ընտոյ Մարդաս. Ընկ. պիտի լծօթարի մշտնջենաւորել իւր նպաստը՝ 400 ռուբլու հասցենով ¹⁾:

ը) Եւ որովհետեւ ուսման վարձը (թօշկադրամ) մեր նախորդների օրով դպրոցի համար գրելթէ ոչինչ արդիւնք չէր կալմում, մենք աշխատեցինք ալս արդեանց աղբիւրն էլ կանոնաւոր դրութեան վերածել, և ալսպէս՝ ա. տարին ստացել է մօտ 100 ռ., բ. տարին՝ 200-ի մօտ, իսկ գ. տարին՝ տղալսը մօտ 250 ռ., իսկ օրիորդացը 150 ռ. միասին 400 ռ. մօտ, չը նալելով՝ որ շատ աղքատ աշակերտներ և աշակերտուհիներ սովորում էին անվարձ և ստանում էին ուսումնական պիտուքներ:

թ) Դպրոցական բոլոր կահ-կարասիքը, նստարանները, գրատախտակները, քարտէզները և ուրիշ պիտուքները գլխովին փոխւած և վերանորոգւած են մեր օրում և համաձայն են մանկավարժական կանոնների արդի պահանջներին:

ժ) 188⁸/₉ ուս. տարւանից բացելով օրիորդական դպրոցի ա. բաժանմունքը՝ հրաւիրւած է Վալիանեան դպրոցի աշակերտուհիներից մի վարժուհի ձեռագործութեան և արդէն ուսանում են 13 օրիորդ: Յօգուտ օրիորդական դպրոցի արդէն ժողոված ունինք մի փոքրիկ գումար նւերների և Հոգաբարձութիւնս դարձեալ հոգում է գործը դնել ամուր և հիմնաւոր դրութեան մէջ և եկող տարի Աստուծով բացելու է բ. բաժանմունք: Յանկալի է մեզ յուսալ, որ ալսուհետեւ ես շարունակելով՝ պիտի բացւին մնացող բաժանմունքները թէ՛ տղալոց և թէ՛ օրիորդաց դպրոցներին, երկդասեան դպրոցի անունը սեպհականելով:

ժա.) Հարկաւոր ենք համարում վիշել նաեւ մէկ երկու խօսքով, որ

¹⁾ Չարգելի Մարդասիրական Ընկերութիւնը յերաւի պարտ է օգնել Ղուբայու աղքատ հայ դպրոցներին. ըստ որում՝ զուբայեցիք 1869 և 70 թւականներին, երբ տորոնի շահաւէտ արդիւնադործութիւնը ծաղկած դրութեան մէջ էր, 32 անկողնի տնդամ էին աւել Մարդ. Ընկ., իւրաքանչիւրը 100-ական ըուբլի ստորագրելով: Աւելի զուբայեցիք կարօտելով օգնութիւն էին հայցում ընկերութիւնից, մի՞թէ նա պիտի գլանար:

սողն 1888³/₀ սեւ. թ. հիմնել ենք արւեստանոց կից դպրոցին, ուր կէսօրից լետող մեծ աշակերտները սովորում են կազմարարութիւն. կազմում են թէ՛ դպրոցի աշակերտներին և գրագարանի գրքերը և թէ՛ ընդունում են ալ պատէրներ: Յուսով ենք, որ եթէ դպրոցը նիւթական առանձին օգուտ էլ չունենալ, ալնուամենայնիւ միաս աւաններն չի կրիլ և աւարտող աշակերտները թողնելով դպրոցը՝ գոնէ, որ և իցէ նիւթական օգուտ էլ դուրս տարած կը լինին:

Ժբ) Հոգաբարձութեան աշխատութեան մէկն էլ սա է եղել, որ ժողովրդականացնէ ալս պարզ միտքը, թէ ամենալն հանգուցեալ, որ թողնում է ժողովութիւն, չը մտածնալ նաև իւր լիշատակի համար գոնէ մէկ փոքրիկ գումար լիշելիք թողնել իրանց դպրոցին: Իսկ ամենալն պսակողից էլ միշտ խնդրել ենք ու համոզել որ ըստ չափու կարողութեան նւէր տալ լօղուտ մեր դպրոցին:

Ժգ) Հոգաբարձութիւնս իւր ձեռքի տակ աւանդ ունեցած գիւղական դպրոցապատկան և ալ հրիտակների գումարները ևս ուշք է դարձրել, ըստ կարելոյն, անշահ չը թողնել: Եւ ալոպէս դանաղան անվտանգ և ապահով գործերի մէջ մտցնելով՝ ստացել է աւելորդ արդիւնք 10—20⁰/₀:

Ժդ) Հետեւել ենք երբեմն թատրոնական ներկայացումն տալ վարժապետաց և ուրողների մասնակցութեամբ լօղուտ դպրոցին, որի լաջողեցնելը գաւառական փոքր քաղաքներում առհասարակ կապւած է լինում մեծ դժւարութեանց հետ:

Ժե) Տեղական եկեղեցու պ. երեցիոսի հետ համաձայնութիւն կալացնելով՝ եկեղեցապատկան առձեռն դրամները ևս 20⁰/₀-ով ցրւած է ժողովրդեան վստահելի անձանց վերալ. ուստի Ղուբալի եկեղեցին իւր նիւթական միջոցներով և նրանցից ստացւած օժանդակութեամբ ալսուհետեւ մեծ զիւրք պիտի ունենալ դպրոցաց ծախքերը ծածկելու և մատակարարելու նախահաշի մէջ: Ինչպէս մեր հաշուեցուցակից երևում է, Հոգաբարձութիւնս եկեղեցուց ստացել է հետեւեալ դրամական նպաստները. ա) 1885 և 1886 թւերին 256 ու. 65 կոպ. բ) 1887 թ. 187 ու. 35 կոպ. գ) 1888 թ. 44 ու. 61 կոպ. և դ) 1889 թւին 111 ուրլի: Վերջին երկու տարւանս մէջ սպասուում էր տարեկան 4—600-ական ուրլի, բայց եկեղեցին ունենալով արտակարգ ծախքեր ¹⁾, Հոգաբարձութիւնս ոչ մի դրամական նպաստ անգամ չէր սպասում: Եկող տարի շնորհիւ պ. երեցիոսի, Հոգաբարձութեանս հետ համերաշխ և ձեռք ձեռքի տւած գործելուն, դպրոցը կունենալ մշտական արդիւնքի մի առատ աղբիւր, որն աճելով կարող է հասնել տարեկան 1000 և աւելի ուրլու:

¹⁾ Եկեղեցույ մօտ գտնւած Հնուց անշէն մէկ գետինը միացնելով եկեղեցու բակի հետ պիտի շրջապատւի, եկեղեցույ մէջ վերանորոգութիւններ պիտի լինին և թեմիս սրբ. Սաւաճնորդին ի Ղուբայ այցելութիւնը արտակարգ ծախք է պահանջում:

Որպէս զի շօշափելի կերպով ներկայացրած լինինք մեր գործունէութեան պատկերը, հարկաւոր է մէջ բերել մեր տարեկան մուտքի և ելքի գումարները համառօտ թւանշանները (որոնց մանրամասնութիւնները հաշւեցուցակի մէջ), որոնցից հեշտ կը լինի ընթերցողին անել եզրակացութիւնները:

Ա. և Բ. տարի:—Հոգաբարձութիւնս 1885 թւի լուծարի 1-ին ստացած ունէր իւր նախորդներին, որպէս չիշւեցաւ, զրամազլուի 3699 ո. 38 կոպ., և 1885 և 86 տարիների ընթացքում ունեցել է արդիւնք, վարւելով ըստ իւր նախագծած ծրագրի, 2229 ո. 34 կոպ., գումարն 5928 ո. 72 կոպէկ: Այդ շրջանում ունեցել է ծախք (դպրոցների փակման պատճառով քիչ) 563 ո. 05 կոպ. ուրեմն զուտ արդիւնք ունեցել է 1666 ո. 29 կոպէկ:

Գ. տարի:—1886/7 ճեմար. թւում ունեցել ենք զրամազլուի 5365 ո. 67 կոպ., արդիւնք՝ 2022 ո. 77 կոպ., գումարն՝ 7388 ո. 44 կոպ., ծախք՝ 1353 ո. 41 կոպ., ուրեմն զուտ արդիւնք՝ 669 ո. 36 կոպէկ:

Դ. տարի:—1887/8 ճեմար. տարում զրամազլուի ունեցել ենք 5385 ո., արդիւնք՝ 2305 ո. 21 կոպ. գումարն՝ 7240 ո. 21 կոպ., ծախք՝ 2263 ո. 44 կոպ., հետևաբար զուտ արդիւնք՝ 440 ուրլի:

Ե. տարի:—1888/9 ճեմար. տարում զրամազլուի ունեցել ենք 6425 ո. արդիւնք՝ 3014 ո. 91 կոպ., գումարն՝ 9039 ո. 91 կոպ., ծախք՝ 2263 ո. 44 կոպ., հետևաբար զուտ լաւելած արդիւնք՝ 751 ո. 47 կոպ.: Ուրեմն մնում է առ 1-ն սեպտ. 1889 թ. զրամազլուի 6776 ուրլի 47 կոպէկ:

Ինչպէս չպտտնի է, 1885 և 86 թւերում համաձայն 1884 թ. մայիսի օրէնքին մեր դպրոցներն էլ ենթարկւած էին կառավարութեան կողմից փակման վիճակին. սակայն Հոգաբարձութիւնս՝ չը նաչելով թեմական կօնսիստօրիալի մի քանի հրամանագրերին, ալն է՝ կամ դպրոցապատկան գումարը լանձնել տեղական եկեղեցւոյ երեցիփոխին ի պահեստ, և կամ ձգել արքունի բանկ՝ ուր պիտի շահէր 30/0 միալն, — շարունակեց իւր գործունէութիւնը, ստանալով տոկոսիք 200/0 և մտնելով անշան գումար: Դպրոցների բացումից չուող թէև ծախքներս աւելացան, երբ ստիպւած եղանք պահել մէկի փոխարէն մի քանի ուսուցիչներ, ալսու ամենաշնիւ, նիւթական միջոցների բարւոքմամբ, կարողացանք պահպանել դպրոցները և ապօր ի վերջոյ մի համեստ գումար իբր աւելւած վետ դնել: Այստեղ աւելի նկատելի առնելու համար, հետեւեալ հաշիւս ենք կազմում, որից պարզ երևում է, թէ առ 1-ն սեպտ. 1889 թ. Հոգաբարձութիւնս որքան նիւթական կարողութիւն է թողնում թէ՛ զրամով և թէ՛ կահկարասիքով ի սեպտեմբերի 1-ին ղուբալի հաւոց եկեղ. ծխ. երկսեռ դպրոցաց:

- 1) Մուհակաւոր ստանալիքներ 200/0 տոկոսաբեր
զանազան բարեհաւատ անձանց վերալ 6776 ո. 47 կոպ.
- 2) Սպասելիք նւէրներ, որ քիչ լետացան իւր ժա-
մանակիցն մեզ հասնել՝ մօտ 500 » — »

3) Նոր շինած կահ-կարասիք, արժողութեամբ . .	380 ռ. — կոպ.
4) Մանկական Գրադարան և դպրոցական պիտույք	200 » — »
5) Թատրոնական կուլիսներ և պարագալք.	50 » — »
6) Մամ և մանր տտանալիք.	51 » — »
7) Օրիորդաց ձեռագործութիւնը արժողութ.	20 » — »
8) Կազմարարական գործիք և պարագալք.	50 » — »

Գումարն է . . 8027 ռ. 47 կոպ.

Այս գնահատութեան 3, 4, 5, 7 և 8 համարները մէջ չիշած մանկական գրադարանը, նստարանները, դպրոցական պիտույքները, կազմարարական և թատրոնական գործիներն ու պարագալքը, մանրամասնաբար մոցրած են Հոգաբարձութեան հաշեմատեանների մէջ, որպէս ծախք, բայց մինք ալտակող մէջ բերելով, միմիայն կամեցանք ընթերցողին աւելի մօտ ծանօթացնել մեր դպրոցի առանձին և ներկայ նիւթական մասի դրութեան հետ:

Մեր ներկայացրած հաշից երևում է, որ 1885 թւին Հոգաբարձութիւնս ստանալով իւր Նախորդից 3699 ռ. 38 կոպ., հինգ տարուց լեռն դպրոցի պահպանութեան համար ծախսելով 6045 ռ. 11 կոպ., ալժմ լանձնելու պատրաստ ունի իւր լեռնորդներին առ ձեռն դրամ 6776 ռ. 47 կ. և դպրոցական պիտույք են մօտաւորապէս 1300 ռուբլու, նշանակում է որ հինգ տարուա ընթացքում, Հոգաբարձութիւնս իւր կարողութիւնից վեր ծախքեր անելով՝ մեծամեծ գոհողութեամբ, Ղուբալի դպրոցը հասցրել է ծաղկած դրութեան և ալսօր իրան լանձնած դրամագլխին աւելացրել է գրեթէ նոյնչափ և սուրի գումար: Եւ այս գումարը կարօտում է զարձեալ անշահատէր անձինքների խնամատարութեան, որպէս զի բազմապատկւի և արգիւնաւէտ լինի:

Որպէս զի մեր դպրոցների ներկայ դրութիւնը կարելի լինի համեմատել Նախորդ հոգաբարձութեան վերջին տարուա եկամուտի և նրա աղբիւրների հետ և այս հիման վերաջ գուգակչիւ համեմատական կազմել Նախորդների և մեր գործունէութեան մէջ, չառաջ ենք բերում Նախորդ հոգաբարձութեան վերջին տարուա հաշեմատեանի համառօտութիւնը, երևում արի կարգաւ, ուր պարզում են նրանց ժամանակաւ եկամուտի աղբիւրներն ու գումարն, ծախուց քանակութիւնը և տարուա վերջին գում մնացորդ արգիւնքը:

Նախորդ հոգաբարձութեան վերջին 1884 թւականի հաշիւը.

Մ Ո Ւ Տ Ք Ը

Ա. Նախընթաց 1883 թւից փոխանցւած է.

- 1) Առձեռն դրամ 1697 ռ. 37 կ. Ռ. Կ.
- 2) Բանկալին արժեթղթեր 2000, ընդամենը 3698 37

	Թ.	Կ.
Բ. Տոկոսիք 1) բանկային դպրոցական արժեթղթերից	100	—
2) Առձեռն գրամներին	150	—
Գ. Եկեղեցուց 1) եկեղեցական 800 ռուբլի բանկային արժե-		
թղթերի տոկոսիքը	40	—
2) Գանձանակադրամ	25	75
Դ. Մոմալաճառութիւնից արդիւնք	145	—
Ե. Պատկանէրք դանդախ անձերից	13	50
Տարեկան ընդհանուր մուտքը	474	25
Համադումարն	4172	62

Ե Լ Ք Ը

Ա. Ռոճիկներ		
1) Վարժապետ Գր. Աբրահամեանցին	250	—
2) Արշակ Արշակունւն	143	93
Բ. Տան վարձ	26	66
Գ. Վառելախալտ	32	40
Դ. Ջրի և ալ մանր ծախքերի	9	20
Ե. Մառաշի վարձ	11	05
Միասնաց դումարը	473	24
Մուտքը ծախքից հանելով մնում է առ 1-ն լուծ. 1885 թ. 3699 38		
Համադումարն	4172	62

Այստեղից պարզ երևում է որ 1884 թւի սկզբին դպրոցն ունեցել է զրամադրութիւն 3698 ռ. 37 կոպ., և նոյն թւի ընթացքում արդիւնք եղել է 474 ռ. 25 կ., ծախք 473 ռ. 24 կ., իսկ տարու վերջին դուռ արդիւնք մնացել է 1 ռ. 01 կոպէկ:

Սորա հետ համեմատական կազմելու համար դրած են տեղեկացուցիւ վերջում մեր հինգամսալ հաշւեցուցակը, իսկ աչտեղ հոգաբարձութիւնս կարող է մասնացուց անել մեր դպրոցների ունեցած աշխատանքների և արդեանց աղբիւրների վերաջ, և վստահանում է լուսալ, որ եթէ այսուհետեւ ղգուչաւոր, խոհմ ու ջերմեռանդ հետեողութիւն լինի, աչս արդիւնքները, որ աշխ մախատեսուում է 3500 ռուբլու չափ, կարող են մշտնջենաւոր դառնալ և ղեռ. ես աճել ու բաղմանալ աւելի քան 5000 ռ., որով բացի հարկաւոր ծախքերը ծածկելուց՝ ամեն տարի կարելի կը լինի մի համեստ գումար լետ ղնել լապահոյութիւն մեր դպրոցների ապագային:

Աչս գործում մեծ ղեր է խաղում հողաբարձութեան համերաչիս գործունէութիւնը և գործին անչահասէր սիրով վերաբերւելը, որով միաչս կարելի է եղածները բարեկարգել և աճեցնել, իսկ նախատեսւածները կարգ

ու կանոնի տակ դնել և բազմացնել: Այսպէս անա ալժամ կան և նախա-
տեսած են հետեւեալ արդեանց աղբիւրները, որոնցից մինչ ալժամ ստացւել
են և ալսուհեան պիտի ստացւին եկամուտներ մօտաւորապէս տունազն
հետեւեալ չափով:

Ա. ԲԱԳԻՒՅ՝

1. Երեք բարեգործների տարեկան նւէրներից.	300	ռուբլի
2. Եւ պատահականներից.	100	»
3. Մարդասիրական ընկերութիւնից տարեկան.	200	»

Բ. ՂՈՒԲԱՅԻՑ՝

1. Գլորոցական գումարների 20%	1300	»
2. Եկեղեցական գումարի 20%	600	»
3. Թոշակադրամ ուսանողներից	400	»
4. Մումալաճառութեան արդիւնք	200	»
5. Պատկանւէրք.	30	»
6. Հոգեբաժին հանգուցեալներից	50	»
7. Թատրոնական ներկայացումից	50	»
8. Գանձանակադրամ եկեղեցուց.	60	»
9. «Խորհուրդ Մեծի» համար շրջելուց.	50	»
10. Զատկական ախարի լաւելած.	60	»
11. Պատահական նւիրատուութիւնք Գլուբալի հաւ հա- սարակութիւնից և օտարաքաղաքացի բարեգործ անձերից թէ՛ լօզուտ զպրօցաց և թէ՛ գրա- դարանին.	200	»

Գումարը. 3600 ռուբլի

Վերջացնելով մեր ասելիքը մեզ լանձնած զպրօցի տնտեսականի
մասին և թողնելով միայն թւանշաններին խօսելու և ապացուցանելու
մեր գործունէութեան չափը, ալժամ անցնենք զպրօցի ներքին կազմակեր-
պութեան լաւաջադիմութեանը, որի համար անա լաւաջ ենք բերում
ալս տարալ ուսումնական տեղեկագիրը համառօտիւ (188⁹/₉ ուսումնա-
կան տարի):

Գլորոցը բաղկացած է եղել 3 տղաւոց և 1 օրիորդաց բաժանմունք-
ներից: Երկու սեռի ուսանողների թիւը տարալ ընթացքում եղել է 73
հոգի, որից 13 օրիորդներ, 60-ը տղաւք: Վերջիններից 4 հոգի ընտանե-
կան հանգամանքների պատճառով թողին զպրօցը:

Աւարկաների զասաւանդութիւնը Վհհափառ Կաթողիկոսի հաստա-
տած ծրագրի համեմատ է ընթացել: Աւանդւել է՝ Կրօն, Հալոց լեզու,
Թւաբանութիւն, Ռուս. լեզու, ձեռագործութիւն, երգեցողութիւն, գեղա-
գրութիւն և գծագրութիւն: Կանոնաւոր ուսումը, օրիորդաց զպրօցի նոր
բացւելուն համար, սկսւել է սեպտեմբ. 20-ից:

Ուսուցիչների թիւը եղել է 4 հոգի. 1) աւագ-ուսուցիչ՝ Խաչատուր փանեանց, որ աւանդել է՝ հաւոց լեզու և ազգաւի՛ն ու եկեղեցական երգեցողութիւն թէ՛ տղաւոց և թէ՛ օրիորդաց բոլոր բաժանմունքներում չաբաթական 30 դաս: 2) Վարժուհի ա. Գալիանէ փանեանց,—միայն ձեռագործութիւն օրիորդաց բաժանմունքում, չաբաթական 6 դաս. 3) Նիկողալ Տէր-Յովհաննիսեանց,—կրօն բոլոր բաժանմունքներում, թւաբանութիւն օրիորդ, ա. բաժ. և վալելէա-գրութիւն չաբաթական 30 դաս. 4) Հայրապետ Տիգրանեանց,—Ռուսաց լեզու բոլոր բաժանմ., թւաբան. տղաւոց ա. բաժ., գեղագրութիւն ու գծագրութիւն տղաւոց և օրիոր. ա. բաժանմ., առաջին կիսամեակում չաբաթական 21 դաս, երկրորդում 30 դաս:

Օրիորդաց ա. բաժանմ. 13 աշակերտուհիներից փոխել են չաջորդ բաժանմ. 12 հոգի, մնացել է նոյն բաժ. 1 հ.:

Տղաւոց ա. բաժ. աշակերտաց թիւը՝ 16 հ., փոխել են 11 հ., մնացել են նոյն բաժ. 5 հոգի. տղաւոց բ. բաժ. աշակերտաց թիւը՝ 17 հ., փոխել են 13 հ., մնացել են նոյն բաժ. 4 հ., տղաւոց գ. բաժ. աշակերտաց թիւը՝ 21 հ., փոխել են 13 հ., մնացել են նոյն բաժ. 8 հ. ընդամենն երկսեռ դպրոցների բոլոր բաժանմունքներից փոխել են չաջորդ բաժանմունքները 49 հոգի, մնացել են 18 հոգի նոյն բաժանմունքներում:

Ուսումնական տարւալ ընթացքում տօն և կիրակիների թիւը 72 օր է: Այստեղ պէտք է նկատել, որ միայն Զատիկի արձակուրդը տևել է 14 օր, ըստ որում ուսուցչական խումբը, Հոգաբարձութեանս պատւէրի համաձայն, զնացել էր Փիլիբար վիւղը՝ տեղւոյն դպրոցի աշակերտներին քննելու և չառաջադիմութեան վերաբերեալ իրան ճիշտ տեղեկութիւն հաղորդելու: Զուտ պարապած օրերի թիւը 187 է:

Շաբաթական դասերի թիւը իւրաքանչիւր առարկայից իւրաքանչիւր բաժանմունքում.

	Ուսուցիչն.						
	օր. ա. բ.	առ. ա. բ.	առ. բ. բ.	աղ. գ. բ.	գոմարն	ա. ընթաց.	
	չ	ա	բ	ա	թ	ա	կ
1. Կրօնից՝	2 դաս	2 դաս	2 դաս	2 դաս	8 դաս	216 դաս	
2. Հաւոց լեզուից՝	6 »	6 »	6 »	6 »	24 »	748 »	
3. Ռուսաց լեզուից՝	6 2-դ կ.	6 2-դ կ.	6 »	6 Ա 12 Բ	24 (372)	748 »	
4. Թւարանութ.	6 դաս	6 դաս	6 »	6 դաս	24 դաս	748 »	
5. Զեռագործութ.	6 դ. օրի սրբաց		—	—	6 »	187 »	
6. Երգեցողութիւն.	2 դ. (Ա. և Բ. բաժ. միաս. 2		—	2 դաս	6 »	187 »	
7. Գեղագրութիւն.	2 դաս	2 դաս	2 դաս	2 »	8 »	216 »	
8. Գծագրութիւն.	2 »	2 »	2 »	2 »	8 »	216 »	
	32 դաս	24 դաս	26 դաս	26 դաս	108 դ.	3266 դ.	

Ուրինն ուսումն. տարւալ ընթացքում բոլոր առարկաներից զուտ դասեր աւանդել են, ինչպէս երեսու է հաշւից, 3266 դաս: Տարւալ ընթացքում ուսուցիչները բաց են թողել ընդամենը 150 դաս, որից՝ 1) Հ. Տիգրանեանցը 50 դաս՝ Հոգաբարձութեան թուլտութեամբ, անձնական գործի համար Բաղու գնալու պատճառով. 2) Նիկ. Տէր-Յովհաննիսեանցը 75 դաս, նոյնպէս Հոգաբարձութեան թուլտութեամբ, Շուշի գնալու պատճառով. 3) Խաչատուր Փանեանց 25 դաս հիւանդութեան պատճառով: Ուսուցչաց բաց թողած 150 դասը հանելով ընդհանուր դումարից՝ մնում է զուտ պարապած 3116 դաս:

Որպէս ապացոյց մեր դպրոցների չափազանց լիարժեք կարևոր ենք համարում մէջ բերել մի մասնաւոր դէպք, որ տեղի ունեցաւ անցած 1887 թւի հարցաքննութիւններին: Մեր դպրոցի հարցաքննութեան օրերը սահմանած էր աչնպէս, որ տեղւոյս պետական տարրական դպրոցի աւուժ-թերականները (асистенты) կարող լինէին երկու դպրոցաց (պետական և մեր) քննութեան ներկայ լինելու և քննելու ալս երկու դպրոցաց աշակերտներին բոլոր առարկաներից, որ ապա տալին իրանց կարծիքը: Հարցաքննութիւնից երկաց, որ մեր աշակերտները լեզուների և միւս առարկաների մէջ աւելի վարժ են, իսկ թւաբանութեան մէջ տնտնամաս բարձր ու զարգացած: Նոյն իսկ Բաղու Նահանգական Ուսումնարանական շրջանի պ. անուշը և նորա օգնականը, երբ 1887, 88 և 89 թւերին աչցեւեցին Ղուբալ, ներկայ գտնւելով վիչեալ երկու դպրոցաց դաստոտութիւններին, իրանց մասնաւոր և չատուկ շնորհակալութիւնը լալտնել են՝ խոստովանելով մեր դպրոցի չափազանց լիարժեք:

Տեղեկագրիս Ժ.Գ. լօգւածում լիշած աւանդական դրամներն են. 1) Հանդուցեալ լիշատակաց արժանի Պօղոս Ալեքսանեանցի կտակած 1500 ռուբլին, որի տոկոսիքն՝ ըստ կամաց կտակողի՝ գործադրում է լօգուտ Խաչմաղի դպրոցին, և 2) Նոյն հանդուցեալը չաւանդ լանձնել է 500 ռուբլի, որի տոկոսիքը՝ ըստ մեր մասնաւոր համաձայնութեան, 12% չահեցողութեամբ ստանում է Հոգաբարձութիւնից տեղական քահանան՝ ի լիշատակ հանդուցելոյն տարին մի անգամ պատարագելու համար:

Այս գումարների տոկոսիքը նշանակւած նպատակին ճշգրտութեամբ գործադրել է Հոգաբարձութիւնս և ապուհետե էլ պիտի գործադրուի, համաձայն հրիտակողի կամքին: Այս գումարների մանրամասն հաշիւը միապէս վերջի Ե. տարւալ համար տես հաշեցուցակի մէջ 1888/9 ուսումն. թւին:

Յիշատակութեան արժանի է, որ լարդելի Մարգար. Ընկերութիւնը վաղուց ի վեր սահմանած ունէր գրամական նպաստ նաև Ղուբալի գա-

առում գտնուող երկու թաթախոս ¹⁾ Քիլւար և Խաչմազ անւամբ հալ գիւղերի դպրոցաց, բայց ուսումնարանների վակամարը (1885 թ.) ընդհատել էր և դպրոցները մնում էին վակւած մինչև 1888 թիւը:

Ուստի Հոգաբարձութիւնս իւր պարտքը համարեց միջնորդել Մարդասիրական ընկ. ընդհանուր ժողովի առաջ, որը և լարագելով մեր խնդիրը՝ սահմանեց չօգուտ Քիլւարին տարեկան 300 ու., իսկ Խաչմազին 100 ու., ղեկելով ալղ երկու գումարները Հոգաբարձութիւնն տնօրէնութեան տակ և սուանձին լանձնարարականով մեղ վերապահեց ալղ երկու դպրոցաց տնտեսական և ուսումնական մասերի վերահսկողութիւնը: Կամենալով գործն աւելի հիմնաւոր դրութեան մէջ դնել, Հոգաբարձութեանն անդամներից երեք հոգի և Մարդաս. Ընկ. կողմից մեծ. պ. Ներսէս Սարումեանցն, ուղեկցութեամբ ղուբեցի ալղ պատուելի աղգաւնոց՝ 1888 թւի օգոստոսին, գնալով Քիլւար գիւղը՝ կազմել են տեւ մի համախօսական, որով գիւղացիները իւրաքանչիւր տարի պարտաւորուում են տալ չօգուտ իրանց դպրոցի 150 ռ. փող, 130 քիւլացորին (մօտաւորապէս 50 փութ) և 100 սալ վաւա: Իսկ Մեծ. պ. Ներսէս Սարումեանցն էլ բերանացի խոստացել է բարեգործ բաղուցիներից նւէր ժողովելով մօտաւորապէս 2000 ռ., ի կատար ածել կիսատ մնացած տեղական (Քիլւարի) եկեղեցին և կառուցանել դպրոցի շինութիւնը երկու բաժանմունքով՝ տղաւոց և օրիորդաց՝ էլի Հոգաբարձութեանն վերահսկողութեամբ: Թաթախոս Խաչմազ հալ գիւղի դպրոցը ևս անխնամ և անկարգ վիճակի մէջ է և զուրկ նիւթական միջոցներից: Ուստի Հոգաբարձութիւնն արդէն չարաբերութեան մէջ է մտել գիւղատիր պ. բժ. Զաւենցի և Սրբաղան Առաջնորդի հետ և ալսպէս ընդհանուր ուժով չուսով կնք, որ կարելի է ոչ հեռու ապագաւում գործը կարգի դնել, ի գործ դնելով նաև Մարդաս. Ընկեր. ալղ նպատակի համար սահմանած տարեկան 100 ռուբլի նպաստը և հանդուցեալ Պ. Ալէքսանեանցի վերոյիշեալ հրիտակած 1500 ռ. արժեթղթի կտորներով գոչացող տարեկան 71 ռ. 25 կոպ. արդիւնքը: Ուսման մատակարարութեան եղանակի վերահսկողութեան համար Հոգաբարձութիւնն սահմանել է՝ Ղուբալի դպրոցի ուսուցիչներին տարին երկու անգամ ուղարկել քննութեան թէ Քիլւարի և թէ Խաչմազի դպրոցաց և, ալսպէս կադմիւ տալով տեղեկագիր՝ ուղարկում է թէ Մարդ. Ընկ. և թէ Թեմիս Առաջնորդին ի գիտութիւն:

1) Ղուբալի գաւառում հիւսց եղած բաղմաթիւ հայ գիւղերից (որոնց աւերակներն ու գերեզմանատեղիքը ջայտօք երևում են), այժմ միայն կոնդուե կան երկու հարազատան գիւղեր, ընդամենն 150—160 ծովերով, Քիլւար և Խաչմազ անւամբ, որոնք լեզուները փոխած են և խոսում են աղաւաղած պարսկերէնով: Որով խոսում են նաև Ղուբալի գաւառում շատ մահաճգական գիւղերալք և հրէայք անգամ: Ալղ լեզուն անւանւում է թաթալեզու, թաթալերէն:

ի հաշիւ աւանդական ալս դրամներին Հոգաբարձութիւնս առձեռն պատրաստ ունի առ 25 լուսիսի 1889 թ. հետեւեալը:

ա) Խաչմադու դպրոցին բանկալին տոմսակ 1500 ր.	
և առձեռն դրամ 65 ր. 68 կ. գումարն	1565 ր. 68 կ.
բ) Քիլւարի դպրոցին առձեռն դրամ (դեռ տարեկան բոլոր ծախքը ի մի հաւաքելով հաշիւ չը մըտցրած) գումարն	199 » 95 »
գ) Ղուբալի եկեղեցում տարեկան պատարագ մատուցանելու համար Պ. Ալէքսանեանցի կտակած 500 ր. և տոկոսիքը մնում է 60 ր.	560 » — »
	Գումարն 2325 » 63 »

Մեր խօսքը վերջացնելուց առաջ՝ պարտք ենք հաժարում, մասամբ չեղելով մեր նպատակից, լաւաջ բերել ի քննութիւն մեր չարգելի հասարակութեան և՛ ապագալի մասին մեր մտադրութիւնները, որ անսլառառ մեր չարգելի քննորդները ի նկատի պիտի ունենան իրադրոճելու:

Խրախուսած և փորձւած լինելով մեր հնգամիս պաշտօնավարութեան միջոցում, մենք արդէն, ինչպէս վերև լիչեցինք, հիմք ենք դրել օրիորդաց դպրոցին՝ բանալով ա. բաժանմունքը 13 աշակերտուհիներով, իսկ տղայոց համար արդէն կան երեք բաժանմունք 60 աշակերտներով: Անշուշտ աշակերտուհիների թիւը զաւ տարի եթէ չեռապատուի, շուտաւ է, որ կրկնապատուի, որով և պիտի բացւի նաև օրիորդաց բ. բաժանմունքը: Տղայոց դպրոցում ևս մի քանի կարևոր անտեսական բարեփոխութիւններ մտցնելով՝ անշուշտ պիտի բացւի գ. բաժանմունքը: Նկող տարւալ համար էլ սպասելի է նորեկ 10—20 աշակերտներ: Ն. ալսպէս ունենալով 2 օրիորդական և 4 տղայոց, գումարն 6 բաժանմամբ դպրոցներ, սրանց շաբաթական 150—160 դասերի համար պիտի ունենալ 5—6 ուսուցիչ և վարժուհի, իւրաքանչիւրին առնւաղն 25 դասով: Ասածներիցս երևում է, որ եկող ուսումն. տարւալ համար, կը հարկաւորւի նոր 2—3 ուսուցիչ, որոնց ռոճիկները, միասին առած, անշուշտ կը պահանջեն ծախքերի նոր չափւած՝ ոչ պակաս 1000 բուրլուց: Սրա համար մեր լիտնորդներին մնում է հետեւ և աշխատել նոր արգեանց աղբիւրներ գտնելու, դորձելով համերաշխութեամբ և սիրով, որը կախած է նախագահի ղեկաւարութեան հատութիւնից: Նթէ ալս կերպ անհնար եղաւ իրադրոճել գոնէ պէտք է դպրոցները վերածել պետական—տարւական դպրոցների սխտեմին որոնցում մէկ վարժապետով կառավարւում է 3 ամբողջ բաժանմունք, իսկ 2 վարժապետով 5 բաժանմունք: Նթէ ալս սխտեմին վերածւի, անշուշտ ծախքի խնաւորութիւն կը լինի և դպրոց-

ներիս ծախուց նախահաշիւը նոյնը կը մնալ, փոքր չաւելած միայն կը պահանջեն: Թէ ալսպէս և թէ ալնպէս, Հոգաբարձութեան քաղցր է լուսալ, որ չարգոյ Մարդաս. Ընկ. կը բարեհաճէ Ղուբալի զպրոցի համար սահմանած տարեկան 200 բուբլին մշտնջենալով՝ դարձնել 400 բ., և մեր մեծապատիւ աղագլինները և նւիրատու պարոնները՝ չը դադարեցնելով՝ իրանց նպաստը՝ չեն զլանալ աւելի եռանդով աջակցել և օգնութեան ձեռք կարկառել մեր գործին՝ միջոց և խրախուս տալով, որպէս զի մեր լեռնորդները կարող լինեն եռանդով շարունակել և չառաջ տանել թէ Ղուբալի և թէ երկու թաթախօս հալ գիւղերի չքաւոր մանուկների մալրենի լեղումը դաստիարակութեան գործը:

Ի գէպ՝ մենք փտահանում ենք խնդրել մեծ. նւիրատուների և ալգալնոց հաւատը: Մեր ներկաւացրած հաշիւը թող ամեն ոք քննէ, ղննէ. և ապա համոզւելով, որ ոչ մի կուպէկ զուր չի մսխւել և ցորենի մի հատիկն ընկնելով բարեբեր գետնի վրա՝ չէ փճացել, թող շտապէ իւր լուսան ևս ձգելու այս վսեմ գործի գանձանակի մէջ, որով միջոց տալով՝ Հոգաբարձութեանը շատ մանուկների ուսումնական պիտուքը հողաւու, մասնակցած կը լինի և նրանց բարոյական աղգալին—կրօնական դաստիարակութեանը և ալսպէս ինքը ևս վարձատրւած կը լինի բարոյապէս:

Ձենք կարող լուութեամբ անցնել և մեր ամենախորին շնորհակալութիւնը չը չալտնել նախկին թեմակալ Թադէոս Ձիւնական արքեպիսկոպոսին (ալժմ հանգուցեալ) և ալժման վիճակաւոր առաջնորդ՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանցին, որոնք սիրով կատարել են Հոգաբարձութեան խնդիրները և, ըստ մեր առաջարկութեան, կարգադրել են ամեն պահանջներ. մի խօսքով՝ որպէս Հալր, սիրով են վերաբերւել դէպի իրանց չանձնւած հօտի դաստիարակութեան գործը: Այն, արժանի են եռապատիկ շնորհակալութեան, որովհետեւ թէ խրախուսանքով, թէ օրհնագրերով և թէ հրամանագրերով մեզ միշտ խնամել և հալրաբար աջակցել են մեր գործունէութեանը: Մենք կրկնեցինք մեր շնորհակալութիւնը և պիտի կրկնենք. որովհետեւ մեր հալրենի երկրից մեր քաղած ամենաստուգ տեղեկութիւնները ստիպում են մտածելու, թէ որչափ մեծ նշանակութիւն ունի հօտի կառավարութեան մէջ բարի, իմաստուն և խոհեմ հովիւը, երբ գործում է Հոգաբարձութեան հետ համերաշխութեամբ, առանց անձնական նեղ հաշիւների: «Ձուգութիւն է մալր բարեաց, անդուգութիւն ծնող չարեաց»:

Պարտք և պատիւ ենք համարում մեզ չալտնել հրապարակապէս մեր երախտագին շնորհակալութիւնը պ. պ. Յակովբ Աղամեանցին, Դրիգոր Թումալեանցին, Ներսէս Սարումեանցին, Առաքել Դաւթուրեանցին, Մկրտիչ Սանասարեանցին (հանգուց.) և ալլոց բարեսիրաց և զխաւորապէս Մարդասիրական Ընկերութեան, որոնք, որպէս հաստաբուն նեցուկներ մեր զպրոցին՝ զօրալիգն և ապաւէն են կանգնած մինչև այսօր: Շնորհակալութիւն նմանապէս և հանգուցեալ Ներսէս Կրասիլնիկեանցի մեծ. ժառանգներին, որոնք

վնահանաբար ընծալել են մեր դպրոցին բնակարանի վարձը, տարեկան 200 ռ. գնահատութեամբ, և լուս ունենք, որ ապուհետև ևս չարունակելով նոյն գովելի և ամենալն ջատագովութեան արժանի բարեգործական ուղղութիւնը, վերջապէս կընդունեն Հոգաբարձութեան ամենախոնարհ առաջարկութիւնը և նոյն բնակարանի չինութիւնը կը նւիրեն Վուբալի դպրոցին՝ ի լաւերժական փշատակ Վրասիւնիկեան ասմին: Առաջմ Հոգաբարձութիւնս ամենալն տարի ալս բնակարանի կարևոր կարկատանները վերանորոգում է և չինութիւնը, որ չին և խարխուլ դրութեան մէջ է, պահպանւում է ամեն խնամքով՝ տարեկան մոխելով 150-ից 200 ռուբլի:

Վերջապէս արժանի են շնորհակալութեան և Վուբալի թէև սակաւաթիւ, բայց սիրով և համերաշխութեամբ մեր գործին նպաստող հաջ հասարակութիւնը (բացառապէս չենք խօսում), որն ամենալն պատրաստակամութեամբ նպաստել և աջակցել է մեր ստանձնած գործին:

Անարդարութիւն կը լինէր մեր ափսոսանքի վերջոյ չը լալտնել և մեր նախկին գանձապահ-ընկեր Միրզաջան Յովհաննիսեանցի վաղաթաւամ կրօնասէան համար, ըստ որում նրա սրտեւանդն և համերաշխ գործակցութիւնից մեր դպրոցը զեռ ևս շատ օգուտներ ոգտտում էր: Օրհնեալ լինի ամենալն արդիւնաւոր ազգայնոց տէրներ:

Մենք երբէք չէինք ուզում հրապարակ դուրս գալ և մեր գործերը հրատարակութեան լանձնել, որը մեծաւ մասամբ անապարժութիւն էր երևում մեզ. բայց մութ անկիւններից մեր ականջը հասած զանազան տատարկարան զրախօսութիւնները և մեր բարեկամ մարդկանց խորհուրդը մեզ ստիպեցին հրապարակ ելնել և մեր հնգամեայ գործունէութիւնը զնել հասարակաց քննութեան և դատաստանի առաջ: Ով ոք եթէ ունենալ որ և իցէ թիւրիմացութիւն և զգալ ստուգելու կարօտութիւն, խնդրում ենք ամենալն վստահութեամբ դիմել Հոգաբարձութեանցս զրախօսեակը և հաշիւ ու համար պահանջել: Մենք ամենալն ուրախութեամբ կը ներկայացնենք մեր ժապաւինեալ մատեններն ու հաշիւները և կը տանք հարկաւոր բացատրութիւնները:

Մեր նշանաբանն եղել է՝ «հասարակաց գործը անձնական գործերից բարձր դասել, հասարակաց գործի մէջ լինել անխարդախ և անշահասէր, գործել ընկերաբար, համերաշխութեամբ և ալս միտքն ու զաղափարը ընդհանրացնել ու զարգացնել հասարակութեան մէջ»: Թէ որքան մենք կարողացել ենք դիմել և մերձենալ մեր նպատակին, ալ թող վճռէ հասարակաց դատաստանը: Միտք մենք մեզ երջանիկ և վարձատուած կը համարենք, եթէ ալ դատաստանը գտնէ, որ մենք մեր տանձնած պաշտօնը կատարել ենք սրբութեամբ, դիմել ենք զէպի բարին, ազգօգուտը և մերովսանն օգնել ենք հալ-մանուկ սերնդի կրթութեան սրբալան գործին:

Ի վերջոյ կը ցանկանք մեր փոնորդներին ամենալն չաջողութիւն, կը

խնդրենք, որ մեր սկսածները շարունակեն համախոհութեամբ ու առանց կրքերի և աւելի պաշտօնացնեն, գործեն հրապարակաւ՝ հասարակութեան հետ ձեռք ձեռքի տաւծ և ոչ կղզիացած: Այլ և կաղաչենք Աստուծոյ, որ նրանց աւելի շնորհք տալ, որպէս զի մեր գործած մարդկային սխալներից իրանք ազատ լինեն՝ լօգուտ և ի չառաջադիմութիւն մեր ուսումնական հասարակութեան և ազգին: Ամէն ¹⁾:

Հոգաբարձուք Ղուբայի հայոց Եկեղեցական-ծխական երկսեռ դպրոցների՝

{	Բախիշ-Բէշ Մարգարէանց
	Ահարոն Ղասաբէանց
	Յարութիւն Մէլիք-Ղարաբէանց
	Նիկողայոս Բ. Բաշաբէանց

Ղուբայ. 1889 թ. Սեպտ. 1-ին:

1) Վեհափառ Կաթողիկոսի նոր կանոնադրութեան համաձայն, մեր եկեղեցա-կան-ծխական դպրոցաց վրայ այսուհետեւ անխտիր պիտի նշանակուի Հոգաբարձութեան նախագահ տեղական քահանաներից մէկը, որից հետեւում է, որ եթէ մէկ տեղ միայն մէկ քահանայ կայ, անհրաժեշտ նրան պիտի հաստատուի Նախագահ, առանց ի նկատի առնելու նրա բարոյական արժանաւորութեան չափը: Պարզ է, որ հոգեւոր եղանակութիւնը պէտք է մեծ զգուշութիւն ունենայ նախագահ նշանակելու հարցի մէջ և ամենայն անգամ մեծ ուշադրութիւն բանեցնէ, որպէս զի ի պաշտօն կոչուելու վարչական ընդունակութիւն ունեցող խոհեմ և բնութեան քահանայի միայն: Եթէ չը կան այդպիսիք, մեր կարծիքով, աւելի լաւ է գործն էլ յանձնել աշխարհականների, քան թէ դպրոցները մասնել անընդունակների ձեռք և գործը խորտակման վտրճի ենթարկել: Փորձը շատով ամենայն տեղ, հաւաստի ենք, որ մեր գաւառութիւնը պիտի արդարացնէ: Ասկայն մէկ տարւայ զանգաղկոտութիւնը կարող է ազգին շատ թանկ նստել:

Յաւաք որով խոստովանում ենք, որ ահա մեր Ղուբայի դպրոցը այս անախորժութիւնը սկսել է ճաշակել...: Հրաւիրում ենք Թեմիս Սրբազան Առաջնորդի ամենալուրջ ուշադրութիւնը:

Բ.-ը Մ.... Կանց:

Մայիսի 5-ին 1890 թ. Ղուբայ:

ՀԱՄԱՌՈՏ ՀԱՇԻՑՈՒՑԱԿ

Ղուբալի Հայոց Եկեղեցական-Ծխական երկդասեան դպրոցի, 1885 թ. Յուն. 1-ից ց 1-ն Սեպտեմբերի 1889 ամի, լընթայս հնգամեայ շրջանի

Ա. եւ Բ. տարի

1885 թ. Յուն. արի 1-ից ց 1-ն Սեպտեմբերի 1886 թ. այսինքն՝ 20 ամուայ լընթացքով

Թիւ ըստ կարգ.	Մ Ո Ւ Տ Ք	Ռ.	Կ.	Թիւ ըստ կարգ.	Ե Լ Ք	Ռ.
Ա.	Դրամադրութիւն—1885 թ. լուն- ւարի 1-ին նախկին Հոգաբար- ձութիւնից ստացուել է՝ ա) Արքունական բանկի 5% արժեթղթեր. 2000 — բ) Կանխիկ դրամ 1699 38 Տոկոսիք: — ա) Կարողապատ- կան 2000 ուրբու արժեթղթերի կարոններով. 195 — բ) Կանխիկ դրամից համա- ձայն համախօսականի. 814 97 Եկեղեցուց: — ա) Եկեղեցա- պատկան 1900 ուրբ. բանկային արժեթղթերից կարոններ և մաս- նաւոր տոկոսներ. 256 65 բ) Կանձանակադրամ Հոգա- բարձութեան ձեռք ժողոված եկեղեցում 60 52 Մոմաւաճառութիւն: — Ար- դիւնք մոմաւաճառութիւնից. 356 35 Նւէրներ: — ա) Յակովբ Աղա մեանից տարեկան 100 — բ) Նիք. Նիլադարեանք միա- նադ. 50 — գ) Ս. Միլիքեանից միանադ. 50 — դ) Ընկերութիւն Իւ. Բօղդա- նեանցի և Ղ. Կառպարեանցի. 50 — ե) Շամիր Մեթուամեանից 30 — զ) 39 անձինքներից կամաւոր նւէր 1-ից ց 10-ական ուրբի 258 20 է) Չորս պատկուղներից 8 — Համագումարն է. 5928 72		Ա.	Վարժապետաց: — Նրեք վար- ժապետների ուսիկները, որոնց ժամանակ դպրոցները փակե- ցան, վճառած է. 266 34 Բ. Ծախքեր: — ա) Տան և ծառայի վարձ և դասական պիտուքներ. 123 00 բ) Մատակարարւած է եկեղե- ցուն մոմ. 97 50 գ) Փաշտ, ածուխ, ջուր և դի- ւանական ու գրագրական ծախ- քեր, նօտարի վարձատրութիւն. 76 16 Գումարն է. 563 05 Գ. Մնացորդ: — Մուտքից գուրս գալով ծախքերը, մնում է առ 1-ն սեպտեմբ. 1886 ամի. 5365 67 Համագումարն է. 5928 72		

Գ. տարի

1886⁶/₇ ուսումն. ամի Սեպտ. 1-ից մինչև միւս Սեպտ. 1-ը:

Թիւ ըստ կարգ.	Մ Ո Ւ Տ Ք	Ռ. Կ.	Թիւ ըստ կարգ.	Ե Լ Ք	Ռ. Կ.
Ա.	Գրամադղութիւն:—Առ 1-ն սեպտ. 1886 թ. Նախորդ հաշիւից փոխանցրած է՝		Ա.	Ռոճիկներ:—ա) Հալոց լեզւի ուսուցիչ Խ. Փանեանցին . . .	500 —
	ա) Արքունական բանկային 5 ⁰ / ₀ արժեթղթեր.	2000 —		բ) Ռուսաց լեզւի ուսուցիչ Ալ. Տէր-Ստեփանեանցին կիսամեայ ուճիկ	240 —
	բ) Մուրհ. 20 ⁰ / ₀ ստանալիքներ.	2800 —		գ) Կրօնուսուց աւագ քահանայ Աւչարեանցին	120 —
Բ.	Մանր ստանալիք. և սովորողի դանդաղան անձանց վրաջ. Տոկոսներ:—ա) Բանկային արժեթղթերից.	565 67 95 —	Բ.	Մարքեր:—ա) Տան վարձ.	175 —
	բ) Համախօսականի համաձայն տոկոսներ	538 68		բ) Տան վերանորոգութիւններ	64 05
Գ.	Նկեղեցուց:—ա) Եկեղեցապատկան 5 ⁰ / ₀ 800 ուր. արժեթղթերից կտրոնով.	38 —		գ) Վառելիք, ածուխ, ջուր	94 19
	բ) Նկեղեցապատկան կանխիկ դրամից սովորիք	149 35		դ) Կահ-կարասիք, վախարան, զրատախոտակ, փոստի, հեռագրի.	105 17
	գ) Գանձանակադրամ Հոգար. ձեռ. ք եկեղեցում ժողոված	50 16		ե) Մառալի ուճիկ և տնտեսական պիտույք	55 —
Դ.	Նւէրներ:—ա) պ. Զակովր Ա. դամանից տարեկան	100 —		Գումարն է.	1353 41
	բ) Հանգուցեալ Թադէոս քահ. Բուզադեանցի կտակածք	200 —			
	գ) պ. Գր. Թումանյանից տ.	100 —			
	դ) Մարկ. Ինկ. տար. 200 ու. օժանդակութեան առաջին կէտը.	100 —			
	ե) Թատրոն. Ներկայացումից.	62 88			
	զ) Ներսէս Կրասիլնիկեանից	65 —			
	է) Միրզաջան Ղուկանից	25 —			
	ը) Գասպար Բալախանից.	25 —			
	թ) Ստեփ. Զօնանեանից	15 —			
	ժ) Զար. Տէր-Գրիգորեանից	30 —			
	ժա) Քոստ և Ինն անձինքներից 1-ից 10-ական ուրբի	69 70			
	ժբ) Նւէր լոգոտ բացելիք օրիորդաց դպրոցին.	10 —			
	1) Թաղ. եղ. Ձիւնականից	10 —			
	2) Միք. բէդ Աբխաղումեանից	10 —			
	3) Աննիբալ Նաջառեանից.	10 —			
	4) Բախիշ լէդ Մարգանեանից	10 —			
	5) Հոգ. Նիկ. Զ. Բահաթի.	20 —			
	Քառ. Քառ. Վարդանեան.	20 —			
	Յար. Մել. Գաղաթ.	20 —			
Ե.	Պատկանէր:—Տաճն և երկու պաղարկներից.	34 —			
Զ.	Թօշակադրամ:—Աշակերտներից հատովթ.	87 —	Գ.	Մնացորդ:—Մուտքից զուրս դալով ծախքերը, մնում է առ 1-ն սեպտ. 1887 թիւի	6035 03
Է.	Մոմալաճառութիւն:—Նկեղ. մոմալաճառութիւնից արդիւնք.	118 —		Համագումարն է.	7388 44
	Համագումարն է.	7388 44			

Դ. տարի

1887⁷/₈ ուսումն. ամի Սեպտ. 1-ից մինչև միւս Սեպտ. 1-ը:

Թիւ ըստ կարգ.	Մ Ո Ւ Տ Ք	Ռ.	Կ.	Թիւ ըստ կարգ.	Ե Լ Ք	Ռ.
Ա.	Դրամագրութիւն—Առ 1-ն սեպ. 1887 թ. նախորդ հաշիւի փո- խանցրած է. ա) Արքունական բանկի 5% արժեթղթեր. 2000 բ) Մուրհակաւոր 20% ստա- նալիքներ. 3585 գ) Տոկոսադրամի և մանր ստա- նալիքներ զանազան անձանց վրայ 450 ռ. 03 կոպ., որ տեղս հաշիւ մէջ չառինք, ներքևում տոկոսեաց մէջ գրելու համար.			Ա.	Ռոճիկի—ա) Հալոց լեզւի ու- սուցիչ Փանեանցին. 500 բ) Ռուսաց լեզւի ուսուցիչ Տէր-Ստեփանեանցին 420 գ) Բագրատ Եղուբեանցին 5 ամսւալ. 100 90 դ) Նոկոլայ Տէր-Յովհաննի- սեանցին 4 ամսւալ. 91 07	
Բ.	Տոկոսներ—ա) Արքունական բանկի արժեթղթերից կտրոն . բ) Մուրհակաւոր 20% ստա- նալիքների տոկոսները 593 ռ. 67 կոպ., և նախորդ տարւալ փոխանցրած տոկոսադրամների մնացորդը՝ 450 ռուբ. 03 կոպ. զուամարն է 1063 70			Բ.	Ծախքեր—ա) Դպրոցի տան վերանորոգութիւններ, զանազան ծախքեր և կարկատաններ. 241 85 բ) Դպրոցի ծառային ռոճիկ, փայտ, ածուխ, ջուր և հեռագ- րական, փոստային, նոստարական և այլ մանր ծախքեր. 218 77 գ) Դպրոցի վերաբերեալ կարա- սիք, տնտեսական և ուսումնա- կան պիտոյք, դրատախտակներ, նոստարաններ, ներկի և ալւն. 292 62 դ) Դուամարն է. 1865 21	
Գ.	Եկեղեցուց արդիւնք—ա) Ե- կեղեցւորական կանխիկ դրամ ներկից ստացւած տոկոսներ . . բ) Գանձանակ Հողաբարձու- թեան ձեռօք ժողոված եկեղեց. Նւէրներ—ա) Մարդաս. Ըն- կերութիւնից 200 բ) Առաք. Ծառուբեանցը տա- րեկան 100 գ) Հանգուցեալ Դր. քհ. Մե- լիք-Կաղանցեանցի դիակը եկեղե- ցու բակում թաղելու 200 դ) Յակովբ Աղամեանից տար. ե) Հողաբարձու Նիկ. Բահա- թրեանցի նւէրը իւր հանգուցեալ մօր Խաստգիւլ Զ. Բահաթրեան- ցի չիշատակին. 50 զ) Բախ. բէշ Մաղաթե. 20 է) Յար. Մեղ. Կաղանց. 20 ը) Ահարոն Աստաբեանց 20 թ) Նիկ. Բահաթրեանց 20 ժ) 12 անձինքներից նւէր գու- մարն է. 20 87			Գ.	Մնացորդ—Մուտքից զուրս դալով ծախքերը՝ մնում է առ 1-ն սեպտեմբերի 6025	
Ե.	Պատկանւէր—Պատկաւող եօթն անձինքներից նւէր. 44 Զ. Մումալաճառութիւն—Հանգ. Պօղոս Ալէքսանեանցի կտակի համաձայն 47 50 Է. Թօշակադրամ—Աշակերտնե- րից ուսման վարձ 197 90					
Համադրւումն է		7890 21		Համադրւումն է		7890 21

Ե. տարի

1888⁸/₉ ուսումն. ամի Սեպտ. 1-ից մինչև միև Սեպտ. 1-ը:

Թիւ ըստ կարգ.	Մ Ո Ւ Տ Ք	Ռ.	Կ.	Թիւ ըստ կարգ.	Ե Լ Ք	Ռ.	Կ.
Ա.	Գրամագլուխ:—Առ 1-ն սեպտ. 1888 թ. նախորդ հաշւից փո- խանցրած է.			Ա.	Ռոճիկներ:—ա) Ուսուցիչ Խ. Փանեանցին.	500	—
	ա) Բանկային արժեթղթեր .	2000	—		բ) Ուսուցիչ Նիկ. Տէր-Յով- հաննիսեանցին.	360	—
	բ) Մուրհակաւոր 20 ⁰ / ₀ դանա- զան բարեհաւատ անձանձ վե- րալ ստանալիք	4025	—		գ) Ուս. հայր Տիգրանեանցին. և վերջնիս ճանապարհ. ծախս. դ) Վարժ. Գալ. Փանեանցին.	450	—
Բ.	Տոկոսիք:—ա) Բանկային ար- ժեթղթերից և մուրհակաւոր 20 ⁰ / ₀ ստանալիքներից.	1290	52	Բ.	Տնտեսական ծախք:—ա) Փաշտ, ածուխ, ծառալ, փոշալ, հեռա- գիր, մատնաններ, բլանկ, կա- ւիճ և այլն	152	61
	բ) Յորենի առևտուրի մէջ օ. գումար	164	70		բ) Վերանորոգութիւնք, հիւս- նի, որմնադրի.	154	59
Գ.	Եկեղեցւոյ արդիւնք:—ա) Տո- կոսադրամ	111	—		գ) Թատրոնի ծախք	61	47
	բ) Կանձանակ Հոգաբարձու- թեան ձեռք ժողոված եկեղե- ցում. 1) Զորջնեաց	22	23		դ) Հոգաբարձութիւն իւր հըն- դամալ հաշիւը տպագրելու և ցրելու համար ծախք որոշւած ունի.	111	—
	2) Զատկին	28	27	Գ.	Վարասիք և պիտուք:—ա) Վա- ռարան թիթեղակ.	5	—
Դ.	Թատրոնից:—Ներկայացումից մուտք է եղել.	111	50		բ) Դպրոցական պիտուք, գրք- քեր, վկայագրերի տպագրութիւն. գ) Նստարաններ, գրատախ- տակ, սեղան և աթոռ	69	05
Ե.	Նւէրներ:—ա) Մկրտ. Սանա- սարեանց.	100	—		դ) Նստարաններ, գրատախ- տակ, սեղան և աթոռ	137	05
	բ) Գր. Թումալեանց	100	—		ե) Կաղմանոցի համար գոր- ծիքներ՝ մամուլ, կտրիչ և այլն. և) Թատրոնական կարասիք, կուլիսներ և այլն	51	89
	գ) Մարդաս. Բնկերութիւնը. դ) Յովսէփ Ազամեանց	200	—		զ) Ձեռագործութեան համար ծախք	30	—
	ե) Առաքել Ծատուրեանց	100	—		Փումարն է.	2263	44
	զ) Մկրտ. Տէր-Մկրտչեանց	10	—				
	է) Մկրտ. Տէր-Մկրտչեանց	15	—				
	ը) Անգղիկապեան երկրից պ. Առաքել Առտուածատրեանցի ձե- ռք ժողոված	5	—	Դ.	Մնացորդ:—Առ 1-ն սեպտեմ. 1889 թ. ծախքը զուրս գալով՝ մնում է	6776	47
	թ) Հանդուցեալ Համարձուս Սիմէօնեանից հոգերածին	5	—		Համագումարն է.	9039	91
Զ.	Պատկանէր:—ա) Բարա Գառ- պարեանից	3	—				
	բ) Աղաբէկ Տէր-Մանէլեանց. Թօշակադրամ:— Աշակերտնե- րից և աշակերտուհիներից ուս- ման վարձ	3	—				
Է.	Պատկանէր:—ա) Բարա Գառ- պարեանից	3	—				
Ը.	Գրամագլուխ:—Առ 1-ն սեպտ. 1888 թ. նախորդ հաշւից փո- խանցրած է.	389	50				
Թ.	Պատկանէր:—ա) Բարա Գառ- պարեանից	45	04				
	բ) Աղաբէկ Տէր-Մանէլեանց. Թօշակադրամ:— Աշակերտնե- րից և աշակերտուհիներից ուս- ման վարձ	201	15				
	Համագումարն է.	9039	91				

*) Հանդուցեալ Պօղոս Ալեքսանեանցը ևս ունի նախորդ հաշիւը ընդհանուր շահույթի հաշիւը 50% շահույթով թուով և տոկոսներ 47 բ. 50 կոպ. Հոգաբարձութիւնն ստանալով երեքդիմիկը հարկաւորեալ տարեկան վաւերիք մնին էլ մատակարարել է եկեղեցւոյն Միայն պէտք է յիշել, որ մեր հաշւեցուցակում Գ. և Ե. տարիների մէջ այս տոկոսները առանձին յոյց տուած է, այլ միաստանաւ են եկեղեցւոյ տուած արեւելեան հայ գումարն 95 քառանգ

ՀԱՇԻԵՑՈՒՑԱԿ

Այլ հաստատութեանց վերաբերեալ և ի պահեստ Հոգաբարձութեանս յանձնեալ
գումարներէ:—Առ 1888⁸/₉ ուսումն. ամի:

Թիւ ըստ կարգ.	Մ Ո Ւ Տ Ք	Ռ. Կ.	Թիւ ըստ կարգ.	Ե Լ Ք	Ռ. Կ.
Ա.	Խաչմաղի Գպրոցին պատկա- նեալ հանդուցեալ Ալեքսանեան- ցի կտակած բանկային արժե- թղթերը	1500 —	Ա.	Քիլւարի դպրոցին պատկա- նեալ ծախք և վարժապետի ու- ճիկիցն ց 25-ն չունիսի 1889 թ. վճարած է	115 05
	Սորա մէկ տարւալ բանկային տոկոսը.	71 25			
	Մասնաւոր դործողութիւնից էլ տոկոս է ստացւած.	33 75			
Բ.	Նոյն հանդ. Ալեքսանեանցի կտակած դրամը ի վիշտակ իւր պատարագելոց.	500 —	Բ.	Խաչմաղի դպրոցին պատկա- նեալ ծախք և վարժապետի ու- ճիկիցն ց 25-ն չունիսի 1889 թ. վճարած է	39 32
	Այս գումարին չատկացրւած տարեկան տոկոսն է	60 —		Գումարն է.	154 37
	Այս գումարն ամեն տարւալ վերջին չանձնուած է տեղական քահանային:				
Գ.	Քիլւարի դպրոցի համար Մար- դասիրակ. Ընկերութեան տւած օժանդակութիւնը	300 —	Գ.	Մնացորդ:—Առ 25-ն չունիսի 1889 ամի ծախքը դուրս գալով՝ մնում է	2325 63
	Սորա վերալ մասնաւոր տոկոս.	15 —		Համագումարն է.	2480 —
	Համագումարն է.	2480 —			

Հոգաբարձուք եկեղեցական-ծխական
Երկսիւս դպրոցաց Հալոց Ղուբալ քաղաքի՝

Բախէշ-Քէֆ Մարդանեանց
Ահարոն Ղառաբեանց
Յարաթիւն Մելիք-Ղառաբեանց
Նիկողայոս Բ. Բահալբեանց

„Մ Ո Ւ Ր Ճ“

ԳԱՂԱՔԱԿԱՆ -- ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ -- ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԲԱՅԻՄԻ Է

Հրաւեր ենք կարդում հայ հատարակութեան՝ բաժա-
նորդ գրել մեր միակ քաղաքական-հատարակաւան-
գրական տնագորին և միջոց տալ նրան այս 1891
թւականին ցանկալի ճոխութեամբ հրատարակել:

ԳՐԻՆԼ ԿԱՐԵԼԻ Է

Թիֆլիսում՝

1) Խմբագրատան մէջ, 2) Կենտրոնական գրաւաճառանոցում,
3) Խղեկելի և 4) Մակար Չմէկեանի գրաւաճառական պալիսն-
ներում, 5) Եւ անոր լոկի տեղեկատու գրասենեակում:

Բաքուում՝

1) Թաւադեանցի գրաւաճառանոցում, 2) պ. Ա. Ետիք Ղաթիկեանցի
մօտ (Մարգարաթական Բնիկրո թեան ընթերցարանում):

Երևանում՝

1) Սիրական Մարտիրոսեանցի գրասենեակում:

Խմբագրութիւնը գտանում է Վելիամինեան փողոց, տուն
Թանգոջեանի, պրօզիմնալի դիմաց:

Աւրիշ տեղերից պէտք է զիմէլ՝ Тифлисъ. Редакция жур-
нала „МУРҮԴԵ“

Արտասահմանից՝ Tiflis, Rédaction de la Revue MOURTON